

ԱՆԱԴԻՏ ԽՈՍՐՈՒԿԱ

Ասորիների ցեղասպանությունը  
Օսմանյան Թուրքիայում  
և հարակից թյուրքաբնակ  
վայրերում

(XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ)



ԴԵ 77


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ՂԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱՆԱՀԻՏ ՌԱԶՄԻԿԻ ԽՈՍՐՈՒՎԱ**

**ԱՍՈՐԻՆԵՐԻ ՅԵՂԱՍՂԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԹՅՈՒՐԹԱԲԵՆԱԿ  
ՎԱՅՐԵՐՈՒՄ**

/XIX դարի վերջ - XX դարի առաջին քառորդ/

3347



ՀՏԴ 941 (479.25)  
ԳՄԴ 63.3 (2Հ)  
Խ 776

Գիրքը նվիրվում է Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության  
ենթարկված հարյուրհազարավոր ասորիների հիշատակին

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ  
Գիտությունների ակադեմիայի Պատմության  
ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր  
**Ա. Ա. Մելքոնյան**

**Խոսրոհ Ա. Ա.**  
Խ 776

Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և  
հարակից թյուրքաբնակ վայրերում /XIX դարի վերջ -  
XX դարի առաջին քառորդ/. -եր., Հեղինակային  
հրատարակություն, 2004 - 114 էջ:

Գիրքը տպագրվել է Հայաստանի հանրապետության վարչապետ,  
Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջոցառումների  
պետական հանձնաժողովի նախագահ

**Անդրանիկ Մարգարյանի հովանավորությամբ**

Ասորիների Համաշխարհային միությունը և հեղինակն իրենց խորին երախ-  
տագիտությունն են հայտնում պարոն Ա. Մարգարյանին

Մենագրության մեջ քննության է առնված ինչպես 1895-1896 թթ.,  
այնպես էլ 1914-1918 թթ. Թուրքական իշխանությունների կողմից ասո-  
րիների նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների հետե-  
վողական քաղաքականությունը, որը մաս է կազմել ինչպես Հայերի,  
այնպես էլ Թուրքահպատակ մյուս քրիստոնյաների ցեղասպանության  
ընդհանուր համաթուրքական ծրագրին:

Աշխատության փաստական հարուստ նյութն ու հեղինակի նորովի  
կատարած եզրահանգումները դառնում են ամուր կռվան Օսմանյան  
տերությունում քրիստոնյաների զանգվածային ոչնչացումները քողար-  
կող և ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ:

Գիրքը նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող  
լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 63.3 /22/

ISBN 99930-4-213-1  
2004

© Խոսրոհ Ա. Ա.,



Assyrian Universal Alliance Foundation  
ܐܣܝܪܝܐ ܘܢܝܘܢ ܐܠܝܢܝܐ ܕܩܘܢܝܢܐ

Ashurbanipal Library • Assyrian Hall of Fame • Youth Alliance • Assyrian Heritage Museum • Assyrian International Relief (AIR)

Friday, June 04, 2004

Премьер-министру Республики Армения  
господину А. Маркарян

Глубокоуважаемый господин А. Маркарян !

От имени Ассирийского международного альянса выражаем свою глубокую  
признательность в содействии издания книги "Геноцид ассирийцев в Османской  
Турции и прилегающих тюрконаселенных местностях /конец XIX - первая  
четверть XX вв./" сотрудницы Института Истории Национальной Академии Наук  
Республики Армения Анаит Хосроевой.

Мы давно следим за научной деятельностью Анаит Хосроевой, которая на  
трудном, но правильном пути. Материалы задействованные ею очень интересны и  
имеют большую значимость не только для истории ассирийского народа, но и  
необходимы в контексте исследования геноцида армян.

Со своей стороны мы предполагаем сделать review книги в англоязычных  
средствах массовой информации. Мы понимаем, что освещение геноцида,  
общечеловеческой трагедии прошлого столетия все еще актуально, а для этого  
требуется привлечение политических и общественных кругов не только в  
Армении, но и в США.

С глубоким уважением,

Сенатор Джон Нимрод

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ասորիներն Արևելքի Հնագույն ժողովուրդներից են: Նրանց նախնիները կանգնած են եղել վաղնջական քաղաքակրթության ակունքներում և մեծ նպաստ են բերել Համաշխարհային մշակույթի զարգացման գործին: Ասորական պետության անկումից /605 թ. մ. թ. ա./ անցել է ավելի քան 2,5 հազարամյակ: Ասորիների ժառանգները, շարունակելով ապրել իրենց պատմական Հայրենիքում՝ Պարսից ծոցի, Միջերկրական ծովի, Ուրմիա լճից մինչև Միջագետքի անապատներն ընկած տարածքն ընդգրկող Հնագույն Բեթնահրինում, Հալածվել են պարսիկների, արաբների, մոնղոլների, օսմանյան թուրքերի ու քրդերի կողմից: Այդ բազմաչարչար ժողովուրդն այսօր ձվարել է Իրաքի, Իրանի, Թուրքիայի և Սիրիայի սահմաններում՝ Վերին Միջագետքի սահմանափակ մի տարածքի վրա:

Առաջին Համաշխարհային պատերազմից առաջ ասորական գյուղեր կային Օսմանյան Թուրքիայի արևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանի Վանի վիլայեթի Հաքյարիի սանջակում, ինչպես և էրզրումի, Դիարբեքի, Բիթլիսի, Խարբեռլի, Աբաստիայի նահանգների, Իրանի Ուրմիայի, Իրաքի Մոսուլի և Սիրիայի Հյուսիսարևմտյան տարածքներում: Այստեղ ապրում էր մոտ մեկ միլիոն ասորի ժողովուրդ՝ միասնական լեզվով, մշակույթով, ազգային սովորույթներով:

Ասորի ժողովրդի պատմությունը սերտ առնչություններ ունի Հայոց պատմության հետ: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Հայ և ասորի ժողովուրդները ենթարկվեցին թուրքական իշխանությունների կողմից ձեռնարկված Հայածանքներին և եղբայրաբար, կողք կողքի կանգնած, պայքարեցին օսմանյան բռնապետության դեմ: Ուստի այսօր, երբ Հայ պատմագիտության կարևորագույն հիմնահարցերից մեկը դարձել է միջազգային Հասարակայնության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, այդ Համատեքստում կարևորություն է ստանում Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության ենթարկված մյուս ժողովուրդների պատմության լուսաբանումը: Իր անցած ողբերգական ճակատագրով առանձնանում է նաև ասորի ժողովուրդը, որը Հայ ժողովրդի նման դարձավ թուրքական բիրտ ու վայրագ քաղաքականության զոհը: Կարծում ենք, որ հիմնահարցի լուսաբանումը կարևորվում է նաև նրանով, որ այն ծանրակշիռ ապացույց և կռվան կհանդիսանա աշխարհի նորանոր երկրների, այդ թվում՝ Թուրքիայի կողմից 1915 թ. Հայերի ցեղասպանության ճանաչման գործընթացում: Փաստորեն, հիմնահարցի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն, մանավանդ, երբ դեռ ոչ այնքան վաղեմի իրենց նախնիների օրինակին հետևելով՝ ներկայիս Թուրքիայի պաշտոնատար այրերը, ինչպես նաև մեծ տերությունների քաղաքակա-

նությունն արդարացնող բազմաթիվ հեղինակներ իրենց գործերում խեղաթյուրում են պատմական ճշմարտությունը և փորձում թաքցնել ցեղասպանության իրողությունը ծուռ հայելու մեջ ներկայացնելով իրական փաստերը:

Հայերն ու ասորիներն իրենց բազմադարյան պատմության ընթացքում անցել են գոյատևման համար մաքառումների դաժան ուղի և ապրել բազմաթիվ օրհասական պահեր: Սակայն այն ծանր փորձություններին, որին այս երկու քրիստոնյա ժողովուրդները ենթարկվեցին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, չունեն իր նախադեպը մարդկության պատմության մեջ: 1914-1918 թթ. մեծ տերությունների կողմից սանձազերծված համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ավանդական ջարդարարական քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին: Օսմանյան թուրքիայի ծանր լծի տակ գտնվող Հայերն ու ասորիները ոչնչացվեցին, գոհվեցին տեղահանության ճանապարհներին Մերձավոր Արևելքի անապատներում:

Թեման ժամանակագրորեն հիմնականում ընդգրկում է 19-րդ դարի վերջին տասնամյակները և 20-րդ դարի առաջին քառորդը, մասնավորապես, Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած 1894-1896 թթ. կոտորածներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Միևնույն ժամանակ աշխատությունների մեջ հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են ժամանակագրական այդ շրջանակներից, ինչը թեկադրված է քննության առարկա հարցն ավելի լայնորեն և խորությամբ հետազոտելու հանգամանքով:

Աշխատության հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել և ներկայացնել թուրքական իշխանությունների կողմից ասորի ժողովրդի նկատմամբ տարվող ջարդերի ու կոտորածների հետևողական քաղաքականությունը, նույնություն և կրկնություն տեսնելով հայ ժողովրդի հանդեպ տերությունում վարած քաղաքականության հետ: Օսմանյան թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ կիրառված ջարդարարական քաղաքականությունը, լինելով համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում, որակվել է որպես ցեղասպանություն, որի մասին գրվել են բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատություններ մենագրություններ, գրքեր, հոդվածներ, վիճակագրական, մատենագիտական, հուշագրական բնույթի նյութեր: Սակայն ասորիների ցեղասպանության հարցն առ այսօր դուրս է մնացել գիտական ուսումնասիրության շրջանակներից, ու հայ պատմագիտության և առհասարակ արևելագիտության մեջ առավել թույլ հետազոտված բնագավառներից է: Հիմնահարցը, որպես այդպիսին, ուսումնասիրվել է հպանցիկ ձևով՝ կապված Մերձավոր Արևելքի պատմությանը վերաբերող առանձին հարցերի լուսաբանման հետ: Ավելին, մեզանում և արտերկրում քիչ են հիմնահարցի համակողմանիորեն հետազոտությունները:

Աշխատության մեջ առաջին անգամ գիտականորեն ներկայացվում են ինչպես 1895-1896 թթ, այնպես էլ 1914-1918 թթ. թուրքական իշխանությունների կողմից իրագործված ասորի ժողովրդի կոտորածները՝ բազմաթիվ փաստեր առաջին անգամ դրվելով գիտական շրջանառության մեջ: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ տեական ժամանակաշրջանից հետո հայ-ասորական հարաբերություններին վերաբերող շատ հարցեր մեզանում առաջին անգամ լուսաբանվում են գաղափարախոսական և քաղաքական կաղապարներից զերծ պայմաններում:

Աշխատության փաստական հարուստ նյութերն ու կատարված հետևությունները և եզրահանգումները կնպաստեն Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան թուրքիայում երիտթուրքական իշխանությունների քրիստոնյա ժողովուրդների, տվյալ դեպքում ասորիների նկատմամբ վարած ցեղասպան քաղաքականության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելուն, կբացահայտեն ասորական ջարդերի և կոտորածների կարևոր մանրամասներ, որոնք կամբողջացնեն թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականության ամբողջ հակամարդկային էությունը: Պատմական իրողությունների գիտական մեկնաբանությունը դառնում է ամուր կռվան և փաստարկ Օսմանյան թուրքիայում քրիստոնյաների զանգվածային ոչնչացումները քողարկող և ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ:

Աշխատության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել առաջին հերթին Հայաստանի Հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվի /այսուհետ տե՛ս ՀՀ ՊԿՊԱ /«Կովկասյան հայոց բարեգործական ընկերությունը Թիֆլիսում», «Երևանի հայոց հոգևոր թեմական կառավարությանը կից եղբայրական օգնության կոմիտե», «Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան», «Առաջին համաշխարհային պատերազմում գործող հայ կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու» և «ՀՀ արտաքին գործերի մինիստրություն» ֆոնդերի նյութերը<sup>1</sup>: Դրանց մեջ կարելի է շեշտել Երևանի հայոց հոգևոր առաջնորդարանին կից եղբայրական օգնության կոմիտեի ֆոնդի առատ նյութերը, որտեղ գտնվում են ասորիներն լեզվով գրված փաստաթղթեր ասորի գաղթականների կրոնական պատկանելության, ունեցած գույքի և ընտանիքի կորցրած անդամների թվաքանակի մասին: Կարևոր նշանակություն ունենի նաև Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի /այսուհետ տե՛ս Վ.ՊԿՊԱ/ ֆոնդերի նյութերը<sup>2</sup>: Հիշատակության են արժանի ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանության Թանգարան-ինստիտուտի /այսուհետ տե՛ս ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ/ ֆոնդային

<sup>1</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, 50, 57, 121, 200:

<sup>2</sup> Վ.ՊԿՊԱ, ֆ. 9, 13, 519:

նյութերը<sup>3</sup> և ՀՀ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի վավերագրերը<sup>4</sup>։

Ատենախոսության մեջ ասորիների պատմության և ժողովրդագրության հարցերի լուսարանման համար լայնորեն օգտագործվել են հայ և օտարագրի հեղինակների աշխատությունները։ Դրանց թվում են ինչպես Առաջին աշխարհամարտից առաջ, այնպես էլ պատերազմի տարիներին մի շարք դիվանագետների, հասարակական գործիչների, զինվորականների ու ճանապարհորդների, ակադեմիկոս-ժամանակակիցների գործերը, որոնք, առանձին թերույթյուններով հանդերձ, հարուստ նյութեր են պարունակում խնդրո առարկա հարցի համար<sup>5</sup>։

Սույն հետազոտության մեջ լայնորեն օգտագործված են ինչպես 1895-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայերի ու ասորիների կոտորածների մասին փաստական նյութերը, այնպես էլ 1914-1918 թթ. ցեղասպանությունը վերապրած, ականատես-վկանների

տարբեր լեզուներով հրատարակված գրավոր վկայությունները<sup>6</sup>։ Այստեղ հատուկ կարելի է շեշտել Ժ. Ալիշորանի «Ցեղասպանությունից մինչև սփյուռք. 20-րդ դարի ասորի-քաղցեացիները» ֆրանսերեն լեզվով գրված աշխատությունը, ուր հեղինակը անդրադառնում է ասորիների ինչպես սոցիալ-տնտեսական հարցերին, այնպես էլ ջարդերին ու հետագա ճակատագրին<sup>7</sup>։

Պատմագիտական կարևորություն են ներկայացնում հրատարակված փաստաթղթերի ժողովածուները, որոնցում արտացոլված են ասորիների պատմությանն առնչվող ամենատարբեր հարցեր, ինչպես նաև ասորիների զանգվածային տեղաբաշխումներին վերաբերող ռուս և օտարագրի հեղինակների վկայությունները<sup>8</sup>։

<sup>3</sup> ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, ֆ. 32, 48, 57։

<sup>4</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 153, վավ. 247, թղթ. 138, վավ. 359; Տե՛ս նաև Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 165, 173, 175։

<sup>5</sup> Լալայան Ե., Վասպուրական, Ազգագրություն, Ասորիներ, Թ. 1913, Մ. Ա. Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890, Ա-Դօ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912 և նույն հեղինակի Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917, Ճիզմեճեան Մ. Գ., Խարբերդ և իր զավակները, Ֆրեզնոյ, Քալիֆորնիա, 1955, Ֆրանգեան Ե., Ատրպատական /պատկերագրաբար ժողովածու/, Թիֆլիս, 1905, Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուս, 1956, Ղազարեան Զ. Գ., Ցեղասպան թուրքը, Պէյրուս, 1968, Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թ., 1881, Малова Я. Д., Несториане и округ Хеккари, Изв. Кавк. отд. импер. русск. географ. общ., том II, Т., 1873; Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, Т., 1901; Шелковников Б., Происхождение и современный быт сирохалдейской народности, Изв. штаба Кавк. военного округа, N 3-4, Т., 1904; Убичини А., Современное состояние Оттоманской империи, СПб., 1877; Линч Х., Армения, Путевые очерки и этюды, т. II, Т., 1910; Ерицог А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Т., 1881; Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904г, часть 1, СПб, 1904; Термен Р. И., Отчет о полевой поездке 1907г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Т., 1909; Отчет о поездке в санджак Хакьяри Ванского вилайета в 1906 г., Т., 1910; Cuinet V., La Turquie d'Asie, T. II, Paris, 1892; Yacoub J., La Babylone chrétienne. Géopolitique de l'Eglise de Mésopotamie, Paris, 1996; Krikorian M.K., Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, 1977.

<sup>6</sup> Մկունդ Տ., Ամիտայի արձագանքները, Նյու-Յորք, 1950, Ավագանյ Ա., Կոտորածը Սալմաստում, Թ., 1915, Լեխիսու Յ., Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդեր, Կ.Պոլիս, 1919, Լևոն Վարդան, Ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրուս, 1975, Երամեան Զ., Հուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, Ղոսէյն էլ Ֆայէյ, Ջարդերը Հայաստանի մէջ, Գահիրէ, 1960, Тейлор Д., Путешествие по Курдистану, Изв. Кавк. отд. русского геогр. общества, т. II, прилож. I, Т., 1873; Маевский В., Несториане Ванского вилайета, Изв. Штаба Кавк. военного округа, N 35, Т., 1913; Девис Л. А., Провинция бойни, Е., 2000; Елисеи Ф. И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001; Layard A., Nineveh and its remains, vol I, London, 1849; Schwarten H., My story: Persia to Iran, Chicago, 1998; Stafford R. S., The Tragedy of the Assyrians, London, 1935; Johannan A., The Death of Nation, New-York - London, 1916; Heinsohn G., Lexikon der völkermorde, Hamburg, 1998; Hubbard G. E., From the Gulf to Ararat, An Expedition through Mesopotamia and Kurdistan, London, 1916; Naayem J., Shall this Nation Die, New-York, 1921; Halo T., Not Even my Name, New-York, 2000; Gilliana S. Z., Assyrians in the Wilderness, Chicago, 2000; Bryce J. V., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, Beirut, 1979; Naaman Qarabashi M. A.-M., The Shed Blood, Sweden, 1997; Lepsius J., Deutschland und Armenian 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet, Potsdam, 1919.

<sup>7</sup> Alichoran J., Du génocide à la diaspora: les Assyro-chaldéens au XX siècle, Paris, 1994.

<sup>8</sup> Реформы в Армении, Свр. диплом. документов, Петроград, 1915; Колобакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Т.3, Ч.1, отл. 2, Т., 1891; Геноцид армян в Османской империи, Свр. документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966; Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, Материалы Политархива МНД Кайзеровской Германии, Е., 1995; Shedd W. A., The Assyrians /Bulletin of the American Geographical Society/, N 1, 1903; Bryce J. V., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, Beirut, 1979; Sarafian A., US Official Documents on the Armenian Genocide, vol. I, Watertown-Massachusetts, 1993 և vol. II, Watertown-Massachusetts, 1994; Shimsir B. N., British Documents on Ottoman Armenians, V. I, Ankara, 1982 և V. II, Ankara, 1983; Parliamentary Papers: House of Commons Accounts and Papers, 100/44, p. 94 /Chermside to Goschen, 9 August 1880/; Yonan G., Ein wegessener Holocaust, Die Vernichtung der christlichen Assyrein in der Türkei, Göttingen-Wien, 1989; Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatische Aktenstücke, Mag. Dr. A. Ohandjanian, Band 7 1916-1917, Wien, 1995; Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, Bethnahrin yurtsever devrimci örgütü Asuri-Suryani halkina yonelik 1915, Soykirimini ve katliamlari arastirma komisyonu, Frankfurt, 1998.

Կան նաև աշխատություններ և հրապարակումներ, որոնցում թեև ուսումնասիրության հիմնական առարկան թուրքահայտակ այլ ժողովուրդներն են, այդ թվում՝ քրդերը, սակայն դրանցում առանձին տեղեկություններ հետաքրքրություն են ներկայացնում նաև ասորիների պատմության համար:

Թեմայի լուսաբանման համար կարևորվում են հայերեն և ռուսերեն լեզուներով ասորիների սոցիալ-տնտեսական իրավիճակին և նրանց նկատմամբ կիրառված հայաժանքներին վերաբերող մի շարք ուշագրավ հրապարակումներ «Մշակ», «Մուրճ», «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Հորիզոն», «Վան-Տոսպ», «Դրոշակ», «Բյուզանդիոն» և այլ պարբերականներում<sup>10</sup>: «Արձագանք»-ն, օրինակ, իր «Հայերի և ասորիների դրության առթիվ» հոդվածներից մեկում ասորիներին անվանելով «Ասիայի չեռնոգորցիներ», գրել է. «Նրանք, որպես Փոքր Ասիայի ամենաբաշ ցեղը, շատ են օգնել հայերին միշտ պաշտպանելով նրանց կյանքն ու գույքը քրդերի գիշատիչ կամայականություններից. գրեթե տարի չի անցել, որ ասորիները կռիվ ունեցած չլինեն քրդերի հետ: Նրանք, ինչպես ասում են, իրենց կուրծքը դեմ են դրել հայերի համար և այդպիսով շատ անգամ ազատել նրանց կոտորածից»<sup>11</sup>:

Հատկանշական է, որ հայ մամուլը ոչ միայն լուսաբանել է ասորական խնդիրը, այլև իր էջերը տրամադրել ասորի հեղինակներին: Այդ տեսանկյունից հիշարժան է «Բյուզանդիոն» պարբերականում ազգությունաբ ասորի Գիսակի հոդվածաշարը<sup>12</sup>:

Շնորհակալ աշխատանք է կատարել նաև Ռ. Դ. Քլոյանը, որը սովյալ ժամանակաշրջանին վերաբերող անգլերեն լեզվով հրատարակվող պարբերական մամուլի բազմաթիվ հոդվածներ հավաքել է և հրատարակել իր «Հայոց ցեղասպանություն» գրքում<sup>13</sup>: Այստեղ հոդվածներ են գետեղված ԱՄՆ-ի այնպիսի հեղինակավոր պարբերականներից, ինչպիսիք են «The New-York Times»-ը, «Atlantic

Monthly»-ին, «Martyrea Armenia»-ն և այլն: Աշխատության սեղ քրդերության են առնվել ժամանակակից ասորի պատմաբաններ Կ. Մատվեևի, Ի. Մար-Յուհանյանի և Լ. Մարգիզովի գիտական աշխատությունները, որոնք անդրադարձել են ասորիների դրությանն Առաջին աշխարհամարտի տարիներին<sup>14</sup>:

Մենագրության մեջ լայնորեն օգտագործել ենք նաև հայ պատմաբաններ Մ. Ներսիսյանի, Ռ. Հովհաննիսյանի, Մ. Արզումանյանի, Ա. Համբարյանի, Հր. Միմոնյանի, Հ. Պողոսյանի և Կ. Թառոյանի աշխատությունները<sup>15</sup>, որոնք իրենց ուսումնասիրություններում այս կամ այն կերպ անդրադարձել են Օսմանյան տերությունում և Իրանում ապրող ասորիների կենցաղին և նրանց բաժին հասած ճակատագրին: Այս իմաստով հատկապես առանձնանում են պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյանի երկու ուշագրավ աշխատությունները<sup>16</sup>, որոնցում խորը և բազմակողմանի վերլուծության են ենթարկվել քրդական հրոսակախմբերի կողմից իրագործված ասորական ջարդերը, փաստական հարուստ տեղեկությունների հիման վրա հիմնավորվել այդ ջարդերը հրահրող և կազմակերպող թուրքական իշխանությունների քաղաքականությունը:

Խնդրո առարկա հարցի շուրջ պատմագիտական կարևորություն է ներկայացնում նաև Ն. Հովհաննիսյանի «Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսաբանությունը արաբական պատմագիտության մեջ» հոդվածը, որի մեջ պատմաբանը անդրադառնում է արաբ հեղինակ Ֆուադ Հաֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» գրքին և առանձնակի ուշադրություն է դարձնում ասորիների կոտորածներին՝ ավելացնելով, որ «հայերի և արաբների հետ միասին թուրքերի կողմից ոչնչացման ենթակա ժողովուրդների ցանկի մեջ էին

<sup>9</sup> Джалиле Д., Из истории общественно-политической жизни курдов в конце 19 начале 20 вв., СПб., 1997; Лазарев М.С., Курдский вопрос /1891-1917/, М., 1972; Карцев А., Заметки о курдах, Т., 1896; Березин И. Н., Езиды, «Магазин земле-владения и путешествий», N 3, М., 1954.

<sup>10</sup> «Մշակ» N 41, 55, 59, 121, 163 1915, «Մուրճ» N 3 1904, N 2 1906, «Մեղու Հայաստանի» N 72, 1880, «Արձագանք» N 24, 25 հունիսի 1889, «Հորիզոն» 20 դեկտեմբերի 1915, «Վան-Տոսպ», N 28, 5 հունիսի 1916, N 35, 24 հուլիսի 1916, «Դրոշակ» № 14, 1 հունիսի 1896, «Բյուզանդիոն» 18-30 նոյեմբերի 1899, 8-21 նոյեմբերի 1901, «Լուծմա» N 1, 1904, «Նոր դար» N 71, 7 մայիսի 1885; «Кавказское слово» 17 апреля 1915.

<sup>11</sup> «Արձագանք» N 24, 25 հունիսի 1889:

<sup>12</sup> «Բյուզանդիոն», 18-30 նոյեմբերի 1899: Տե՛ս նաև Ճիզմեճեան Մ. Գ., Խարբերդ և իր գավառները, Ֆրեզնոյ, Քալիֆորնիա, 1955, էջ 312:

<sup>13</sup> Kloian R. D., The Armenian Genocide, News Accounts from the American Press /1915-1922/, California, 1985.

<sup>14</sup> Матвеев К. П. /Бар-Маттай, Мар-Юханна И. И., Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968; Саргизов Л. М., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е., 1979.

<sup>15</sup> Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Ե., 1955, Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Ե., 1969, Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908/, Ե., 1999 և նույնի Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Ե., 1965, Միմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, Պողոսյան Հ. Մ., Վասպուրականի պատմությունից 1850-1900, Ե., 1988, Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, Արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., 2001:

<sup>16</sup> Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները /1900-1914/, Ե., 1974 և Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Ե., 1989:

մտցված նաև ասորիները»<sup>17</sup>: Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև Շաքիր Խասբաքի, Մուհամեդ Ահմադ ալ-Մահանայի, Ֆեյսալ Նաջիմ ադ-Դին ալ-Ատրակչիի և իրաքցի այլ պատմաբանների գործերը ասորիների ջարդերի մասին:

Մենագրության համար աղբյուրագիտական կարևոր հիմք են ասորիների շրջանում կրոնական քարոզիչների ծավալած գործունեության մասին պատմող հրապարակումներն<sup>18</sup> ու աշխատությունները, որոնց մի մասը գրվել են հենց միսիոներների կողմից<sup>19</sup>: Նույնը կարելի է ասել նաև ասորական եկեղեցուն վերաբերող աշխատությունների մասին<sup>20</sup>:

Ուսումնասիրվող թեմայի համար պատմագիտական ուշագրավ արժեք են ներկայացնում Հայ Հեղինակների այլ աշխատություններ, որոնք վկայում են ինչպես Հայ-ասորական բարեկամական կապերի, այնպես էլ ասորիների կոտորածների մասին<sup>21</sup>: Դրանց մեջ առանձնանում է Տրապիզոնի Հայ թեմի առաջնորդ Հովհ. արքեպիսկոպոս Նազյանի<sup>22</sup> արժեքավոր աշխատությունը:

Աշխատանքի մեջ իրենց արտացոլում են գտել Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության պատմությանը վերաբերող նյութերը<sup>23</sup> ինչպես Հայ-ասորական բանակցային գործընթացների, այնպես էլ երկու ժողովուրդների ռազմական գործակցության մասին:

<sup>17</sup> Հովհաննիսյան Ն., Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսարանությունը արաբական պատմագիտության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», N 1, Ե., 1989, էջ 25-34:

<sup>18</sup> Церковные ведомости, N 13, 1898, Богословский вестник, 1898 май.

<sup>19</sup> Riley A., The Archbishop of Canterbury's Mission to the Assyrian Christians, London, 1891; Maclean A. J., Browne W. N., The Catholicos of the East and his people, London, 1892.

<sup>20</sup> Селезнев Н. Н., Ассирийская церковь Востока, Москва, 2001; Coakley J. F., The Church of the East and the Church of England, Oxford, 1992.

<sup>21</sup> Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Հ. Բ, Պէյրութ, 1983 և Հայ-թրքական կնճիղը, Գահիրե, 1924, Փափագեան Վ., Իմ հուշերը, Հ. Ա., Պոսթըն, 1950, Տեր-Սարգսնց Ս. /Տեկանց Ս./, Շահենն ի Սիպիթ, Կ.Պոլիս, 1911, Բաֆֆի, Երկեր, Հ. 4, Ե., 1956, Վարդանեան Ե., Անապատէ անապատ, Վենետիկ, 1923, Միութեան Հ., Հուշեր 1915-ի տարագրութեանէն, Փարիզ, 1981:

<sup>22</sup> Նազյան Յով., Յուշեր, Հ. Ա, Պէյրութ-Լիբանան, 1960:

<sup>23</sup> Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Խմբ. Հ. Տասնապետեանի, Հ. Բ., Պէյրութ, 1985, Իրևան Հ. Յ. Դաշնակցութեան, Հ. 1, Պոսթըն, 1934 և Հ. 2, Պոսթըն, 1938:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԹՈՒՐԷԻԱՅՈՒՄ ԵՎ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՅԼ  
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՎ 20-ՐԴ  
ԴԱՐԻ ՍԿՁԲԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը հետամնաց ռազմա-ֆեոդալական բռնապետություն էր: Երկիրը պատած էր լրտեսների ցանցով, իսկ բանտերը լցված էին քաղաքական բանտարկյալներով: Կայսրության ասիական նահանգները գրեթե դուրս էին մնացել սուլթանի իրավասությունից: Երկրի ներսում հզորացող կենտրոնախուլյս ուժերի ոչնչացումը, ֆեոդալական մանր ու մեծ կիսանկախ իշխանությունների վերացումը, պետության կենտրոնացումը հրամայական պահանջ էին դարձել: Պետական գանձարանը կողոպտված ու դատարկված էր: Սուլթանը կուսակալներից պահանջում էր չափից դուրս գումարներ, իսկ վերջիններս էլ իրենց հերթին այդ ամենը գանձում էին ժողովրդից սահմանելով կամայական տուրքեր: Հարկային բեռն ընկած էր գերազանցապես գյուղացիների վրա, որոնք կազմում էին երկրի ընդհանուր բնակչության առավելագույն մասը: Թուրք պաշտոնյաները ոռոճիկ չէին ստանում. լայն թափ էր ստանում կաշառակերությունը: Դատարանում նույնպես գործում էր կաշառքը և վարչական մարմինների թելադրանքը: Կրթական հիմնարկությունները գտնվում էին տգետ մարդկանց ձեռքում: Մամուլը բռնակալ իշխանությունների անվարան կամակատարն էր: 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդի օրոք հռչակվում է կայսերական թանգիմաթ, որն իբրև թե իրավահավասարություն պետք է շնորհեր կայսրության բոլոր կրոնական համայնքներին: Ինչպես այս, այնպես էլ 1856 թ. նույն սուլթանի կողմից հռչակված բարեփոխումների ծրագիրը, որն ըստ էության առաջինի լրացված տարբերակն էր, մնացին թղթի վրա, և կայսրության ազգային փոքրամասնությունների, մասնավորապես ասորիների վիճակը հետզհետե վատթարանում էր:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ասորիները հիմնականում տեղաբաշխված էին Օսմանյան կայսրության ասիական մասում, մասնավորապես Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում՝ Վանի, Բիթլիսի, Հրզրումի, Դիարբեքլի, Խարբեքլի, Սեբաստի-



...յի նահանգներում<sup>24</sup>: Նրանք բաժանված էին դավանական և սոցիալական հատկանիշներով: Դավանական առումով ասորիները հիմնականում տրոհված էին նեստորականների, կաթոլիկների /քաղղեացիների/, ուղղափառների /օրթոդոքսների/, իսկ սոցիալապես՝ երկու մեծ կաստանների՝ աշիրեթների /ինքնուրույն ցեղախմբեր/ և ռայանների /ենթակա ժողովուրդ/, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն էր:

Ասորիներն իրենց ազգային եկեղեցին կոչում են արևելյան, իսկ օտարները՝ նեստորական: Դեռ 5-րդ դարում ասորիներն ընդունել են Կ.Պոլսի պատրիարք նեստորի վարդապետությունը, որի անունով էլ կոչվել են նեստորականներ: Արդեն 6-րդ դարում եկեղեցու ներսում առաջացան աղանդներ. Հակոբ Բարադայի անունով կազմվում է Հակոբիյան եկեղեցին, այնուհետև Սուրբ Մարոնը Հիբանանի տարածքում սկսում է քարոզել միաբնակների վարդապետությունը, որի հետևորդներին հետագայում կոչեցին մարոնականներ: Մարոնականների շարքերում հայտնվեցին հազարավոր ասորիներ: 16-րդ դարի կեսերին Միջագետքում կազմվեց քաղղեական-կաթոլիկ եկեղեցին, որը ենթարկվում էր Հռոմի կաթոլիկ եկեղեցուն՝ «Բաբելոնի պատրիարքի» ղեկավարությամբ, որի նստավայրը մինչև 1947 թ. Մոսկուն էր: 19-րդ դարի վերջին Իրանի նեստորականների մի մասն ընկնելով ռուս ուղղափառ եկեղեցու ազդեցության տակ, դարձավ ուղղափառ: Այս ամենին ավելի մանրամասն կանոնադառնանք հետագա աշխատանքի ընթացքում:

Նոսելով Օսմանյան կայսրության ազգաբնակչության, տվյալ դեպքում՝ ասորիների թվաքանակի հարցերի մասին, մի շարք պատմաբաններ իրավացիորեն գտնում են, որ պետք է վերապահություն ցուցաբերել վիճակագրական տվյալներին: Անճշտությունների պատճառները մի կողմից պետք է փնտրել ընդհանրապես Օսմանյան կայսրությունում կանոնավոր վիճակագրության բացակայության, մյուս կողմից՝ գինվորական հարկից ազատվելու նպատակով քրիստոնյաների հաշվառումից խուսափելու և այլ հանգամանքների մեջ: Պարզաբանելով վերոշարադրվածը՝ նշենք, որ օսմանյան իշխանությունների հակաքրիստոնեական քաղաքականությունը վիճակագրության ասպարեզում տարվում էր երկու ուղղությամբ՝ քրիստոնյա բնակչության թվի կտրուկ նվազեցմամբ և մահամեղականների թվի բարձրացմամբ: Ինչպես նշվում էր, Փարիզի հաշտության կոնֆերանսին Հայոց Պատվիրակության ներկայացված հուշագրում, «Թուրք

<sup>24</sup> Տերություն տարածքը բաժանված էր վիլայեթների կամ նահանգների, որոնք կառավարում էին վալին կամ նահանգապետը, որը նշանակվում էր սուլթանի կողմից: Վիլայեթները բաժանվում էին սանջակների՝ մութասարիֆի գլխավորությամբ, որը ենթակա էր վալին: Սանջակներն էլ իրենց հերթին բաժանված էին կազանների կայմակամի կամ զավառապետի գլխավորությամբ, որն էլ ենթակա էր մութասարիֆին: Կազանները բաժանված էին նահիեների, որոնք կառավարվում էին մուդիրի կողմից: Վերջինս գործում էր կայմակամի ենթակայության ներքո:

կառավարության կատարած վիճակագրությունների սովորական սխտեմն է հետևյալը.

1. Առանց շատ փոխելու ամբողջ ազգաբնակչության թիվը՝ ըստ կարելույն նվազեցնել քրիստոնյաների թիվը և տարբերությունն ավելացնել մահամեղականների թվի վրա:

2. Զգուշանալ ազգությունների ճշգրիտ թվաքանակը տալուց՝ նրանց խմբավորելով ըստ կրոնի»<sup>25</sup>:

Իսկ բրիտանական դիվանագիտական այրերը միանշանակ մերժում էին օսմանյան պաշտոնական վիճակագրության հավաստիությունը քրիստոնյա բնակչության թվաքանակը որոշելու համար: Այսպես, անգլիական հյուպատոս Չերմսայդը գտնում է, որ օսմանյան պաշտոնական վիճակագրությունը «ամենամանրոշն է ու անբավարարը, ինչպես և այն ամենը, ինչը թուրքական իշխանությունների տնօրինության տակ է գտնվում»<sup>26</sup>:

Ուստի, հաշվի առնելով վերոշարադրվածը, Օսմանյան կայսրությունում և նրան հարակից տարածքներում ասորիների թվաքանակը ճշգրտելու համար դիմենք Հայ և օտարալեզու մի քանի փոքրադրյունների և աշխատությունների: Այսպես, Վանի ռուսական հոբսիլյուպատոս Վլ. Մակսիկին իր «Վանի վիլայեթ. Ռազմա-վիճակագրական նկարագրություն» գրքում գրում է, որ բելգիացի հետախոյզ Վ. Բինեն իր «Ասիական Թուրքիա» աշխատության մեջ, անդադառնալով 1890-ական թթ. Ասիական Թուրքիայում ապրող 92 հազար նեստորական ասորիների թվաքանակին<sup>27</sup>, նշում է. «Նրանց թիվը հնարավոր է ճշգրիտ ասել, որովհետև անգամ իրենք՝ նեստորականները հստակ չգիտեն այն: Եթե ինչ-որ մի ճանապարհորդ կայնդի, որ նրանց թվաքանակը Թուրքիայում հասնում է ոչ թե 100 հազարի, այլ 50 հազարի կամ 150 հազարի, դժվար թե գտնվի մեկը, որ փաստեր բերի հիմնավորելու այդ թվաքանակի անճշտությունը»<sup>28</sup>:

Հայ անվանի ազգագրագետ Ե. Լալայանի վիճակագրական տվյալների համաձայն ասորիների թիվն Օսմանյան կայսրությունում կազմում էր ավելի քան 863 հազար, Իրանում՝ 76 հազար, Ռուսաստանում՝ 2 հազար: Կրոնական հատկանիշով ասորիների պատկերն այսպիսին էր.

<sup>25</sup> Հայկական հարցը հաշտության կոնֆերանսին առաջ, Ե., 1919, էջ 17:

<sup>26</sup> Parliamentary Papers: House of Commons Accounts and Papers, 100/44, p. 94  
Chermiside to Goschen, 9 August 1880.

<sup>27</sup> Cuinet V., La Turquie d'Asie, T. II, Paris, 1892, p. 635.

<sup>28</sup> Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, Т., 1901, с. 98-99.

Աղյուսակ N 1

|  |                        |
|--|------------------------|
| Նեստորականներ                            | 135 Հազ.               |
| Քաղղեացի-կաթոլիկներ                      | 23 Հազ.                |
| Հակոբինյաններ                            | 125 Հազ.               |
| Մարոնիտներ կամ Լիբանանյան կաթոլիկներ     | 525 Հազ. <sup>29</sup> |
| Սիրիական կաթոլիկներ                      | 100 Հազ.               |
| Քաղղեա-լուծթերականներ և այլ բողոքականներ | 1 Հազ.                 |
| Ուղղափառներ                              | 32 Հազ.                |
| Ընդամենը                                 | 941 Հազ. <sup>30</sup> |

Այս տվյալները գրեթե նույնությամբ կրկնում է ռուսական բանակի շտաբ-կապիտան Հայազգի Բ. Շելկովնիկովը, որը շրջագայել էր ասորիների բնակավայրերով և ուսումնասիրել նրանց բարքերն ու սովորությունները: Ասորիների ժողովրդագրական պատկերը Բ. Շելկովնիկովի մոտ ավելի հստակեցված է: Նա հաղորդում է. «Ասիական Թուրքիայում այս ժամանակաշրջանում ապրում էին 95 հազար ասորիներ, որոնք ցրված էին Վանում և Հաքյարիում, Բիթլիսի վիլայեթի Սղերդի սանջակում, Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի Զեզիրեի կազայում, Մոսուլի վիլայեթի համանուն սանջակի Ամադիե և Ակրա կազաներում: 40 հազար նեստորական ասորիներ ապրում էին Իրանի տարածքի Ուրմիայի շրջանում՝ Հաքյարիի սանջակի սահմանի մոտ»<sup>31</sup>:

Փաստորեն, ըստ Բ. Շելկովնիկովի՝ Ասիական Թուրքիայում բնակվող նեստորականների տեղաբաշխման պատկերը հետևյալն էր.

|   |                      |
|---|----------------------|
| Վանի վիլայեթի Վանի և Հաքյարիի սանջակներ         | 79 000               |
| Բիթլիսի վիլայեթի Սղերդի սանջակի Խազա կազա       | 3 700                |
| Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի Զեզիրե կազա | 3 000                |
| Մոսուլի վիլայեթի Մոսուլի սանջակի                |                      |
| Ամադիե կազա                                     | 4 000                |
| Մոսուլի վիլայեթի Մոսուլի սանջակի Ակրա կազա      | 5 000                |
| .....   |                      |
| Ընդհանուր թիվը                                  | 94 700 <sup>32</sup> |

<sup>29</sup> Ամենայն հավանականությամբ, Ե. Լալայանի կողմից բերված 525 հազար մարոնիտների այս թվաքանակը վերաբերում էր ոչ միայն ասորիներին:

<sup>30</sup> Լալայան Ե., Վասպուրական, Ազգագրություն, Ասորիներ, Թիֆլիս, 1913, էջ 5:

<sup>31</sup> Шелковников Б., Происхождение и современный быт сиро-халдейской народности, Изв. штаба Кавк. военного округа, N 3-4, Т., 1904, С. 35.

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 59:

Յա. Մալոմայի հաշվարկներով՝ 1873 թ. միայն Ասիական Թուրքիայում ապրում էր 69425 /13885 ծուխ/, Ուրմիա քաղաքում և մոտակա 507 գյուղերում՝ 32500 /6500 ծուխ/ նեստորական ասորի: Այդպիսով՝ նեստորականների ընդհանուր թիվը կազմում էր 101925 մարդ կամ 20385 տուն<sup>33</sup>:

Բ. Շելկովնիկովը նեստորական ասորիների վիճակագրական այս տվյալներից բացի տեղեկություններ է հաղորդում նաև քաղղեացիների, հակոբինյանների, մարոնիտների և սիրիական կաթոլիկների թվաքանակի մասին:

Այսպես, քաղղեացիներն Ասիական Թուրքիայում.

|   |             |
|---|-------------|
| Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի նույնանուն կազա | 1 200 մարդ  |
| Դիարբեքիրի վիլայեթի Մարդինի սանջակի Միդյաթ կազա     | 800 մարդ    |
| Մոսուլի վիլայեթի նույնանուն կազա                    | 14 000 մարդ |
| Քաղղազի և Բասսորի վիլայեթներ                        | 2 000 մարդ  |

.....  
Ընդհանուր թիվը՝ 18 000 մարդ<sup>34</sup>

Ընդ որում, Բ. Շելկովնիկովի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հակոբինյաններն ապրում էին Զեբելի լեռներում, Թուր Աբդինում, Բիթլիսի վիլայեթում, Մոսուլում: Նրանց ընդհանուր թվաքանակն այստեղ կազմում էր 125 հազար մարդ: Ասորի մարոնիտները, ըստ Բ. Շելկովնիկովի տվյալների, թվով 525 հազար էին և ապրում էին Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում ու Կիպրոսում: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, 525 հազար այս թվաքանակը, որն օգտագործել է նաև Ե. Լալայանը, ներառում է ոչ միայն ազգությամբ ասորի, այլ նաև արաբ մարոնիտներին: Սիրիական ասորի կաթոլիկները /նախկինում հակոբինյանները/, որոնք ապրում էին Սիրիայում, Մոսուլում, Թուր-Աբդինում և Մարդինում, կազմում էին 100 հազար մարդ:

Այսպիսով՝ հակոբինյանները, մարոնականները և սիրիական կաթոլիկները կազմում էին 750 հազար մարդ և ապրում էին Հյուսիսային Սիրիայից Հյուսիսային Միջագետք տարածքն ընդգրկող հարթավայրում<sup>35</sup>:

Ինչպես երևում է՝ կաթոլիկների թվաքանակը գերազանցում է մյուս դավանանքների ասորիներին: Մեր կարծիքով, այս իրողությունը ամենից առաջ պետք է բացատրել կաթոլիկ քարոզիչների /միսիոներների/ գործունեությամբ, եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ այդ տասնամյակները քարոզչական շարժման աշխուժացման ժամանակներ էին:

<sup>33</sup> Маломе Я. Д., Несториане и округ Хеккари, Изв. Кавк. отд. импер. русск. географ. общ., том II, Т., 1873, с. 174.

<sup>34</sup> Шелковников Б., указ. соч., с. 60.

<sup>35</sup> Նույն տեղում:

19-րդ դարի կեսերին եվրոպական խոշոր պետությունները ուշի-ուշով հետևում էին Օսմանյան թուրքիայում տեղի ունեցող դեպքերին կանխատեսելով կայսրության փլուզումը: Տարեցտարի եվրոպական քարոզիչներն ակտիվացնում էին իրենց գործունեությունը ձգտելով տեղի հպատակ ազգերի վրա ավելի լայնորեն տարածել իրենց ազդեցությունը: Նրանք միշտ չէ, որ հաջողություն էին ունենում. լեռնաբնակ նեստորականներին կրոնափոխելը դյուրին գործ չէր: Այդ փորձերը նախկինում հիմնականում հաջողություն էին ունեցել: Տեղեկություններ են պահպանվել, որ դեռ 1840-ական թթ. վերջերին նման առաքելությամբ Հաքյարիի լեռներ մեկնած ամերիկացի բողոքական միսիոներներին տեղացիները սպանել էին:

Հարթավայրերի նեստորական ասորիները Համեմատաբար ավելի դյուրություն էին դալանափոխվել: Այսպես օրինակ. մինչև 1884 թ. նեստորականներից շատերն արդեն ընդունել էին ուղղափառություն: Ուրմիա ուղարկված ուսական ուղղափառ առաքելության ջանքերով այստեղ բացվել էր 50 դպրոց և ասորերեն լեզվով թարգմանվել էին բազմաթիվ գրքեր: Արդեն 1897 թ. ուղղափառ ասորիների թվաքանակն այստեղ հասնում էր 30 հազարի<sup>36</sup>: Նշենք, որ ուսական մամուլը ուս ուղղափառ եկեղեցու այս հաջողությունն անվանեց «Ուղղափառության հաղթանակ»<sup>37</sup>:

1834 թ. ամերիկյան միսիոներական մի խոշոր ընկերություն, որը հայտնի էր «Արտերկրյա միսիոներների լիազորված Ամերիկյան Նորհուրդ» /American Board of Commissioners for foreign Missions/ անունով, իր գործունեության կենտրոնը դարձնելով Ուրմիան, տեղի նեստորական ասորիներին մղում էր դեպի բողոքական եկեղեցին: Ընկերության ղեկավարն էր Ջասթին Փերքինսը, որին շուտով հաջողվեց շահել տեղի նեստորական ասորիների համակրանքը: 1890-ական թթ. նրա ծավալած գործունեության շնորհիվ այստեղ բացվեցին մոտ 40 գյուղական դպրոցներ: Բացի այդ Ուրմիա քաղաքի մոտակայքում գտնվող Սեյր գյուղում դեռ 1840-ական թթ. գործում էր տպարան, որտեղ 1849 - 1914 թթ. ասորերեն լեզվով հրատարակվեցին «Ջահրիյի դ'բահր» /Ուսյի շողեր/ և 1906-1915 թթ. «Քուխվա» /Ասող/ կրոնական ուղղվածություն ունեցող պարբերականները<sup>38</sup>: Մի քանի տարի անց բողոքական ասորիների թվաքանակը Ուրմիայում արդեն հասնում էր 4-5 հազարի: Ի դեպ, նեստորական ասորիներին բողոքական դարձնելու գործում առանձնապես աչքի ընկավ ամերիկացի բժիշկ Գրանտը, որը բավականին արագ կարողացավ արժանանալ տեղի բնակչության, այդ թվում նաև Մար-Շիմունի վստահությանը. մարդկանց բուժելու հետ մեկտեղ, նա միաժամանակ բողոքականություն էր քարոզում:

<sup>36</sup> Шелковников Б., указ. соч., с. 43, 53.

<sup>37</sup> Церковные ведомости, N 13, 1898, с. 67-77. С'ы նաև. Богословский вестник, 1898 май.

<sup>38</sup> Селезнев Н.Н., Ассирийская церковь Востока, Москва, 2001, с. 75.

Անգլիկան առաքելությունն ասորիներին հայտնի դարձավ 1842 թ., երբ Քենթրբերիի արքեպիսկոպոսի առաջարկությամբ ասորիներին կրթության հարցերում օգնելու համար Քոչանիս ուղևորվեց Փերսի Բեդլերը<sup>39</sup>: 1881 թ. անգլիկան քարոզիչներն արդեն ազդեցություն ունեին Հաքյարիի ասորի բնակչության վրա: Նրանց մեջ ճանաչված էին 1886 թ. Քոչանիս ժամանած և ցմահ այստեղ ապրած Վիլյամ Բրաունը և նրա գործընկեր Արթուր Մակլինը: Նրանք տարածաշրջանում բացեցին արական և իգական դպրոցներ, ինչպես նաև հոգևորականների ուսուցման քոլեջ: Ասորիների շրջանում անգլիկանների ծավալած գործունեության մասին մենք տեղեկանում ենք իրենց իսկ կողմից գրված գեկուցագրերից, որոնք այդ տարիներին լույս են տեսել նաև առանձին գրքով<sup>40</sup>: Առաջին աշխարհամարտի քաղաքական փոփոխությունները վերջ դրեցին անգլիկան եկեղեցու գործունեությանն այս տարածքում: 1915 թ. հուլիսի 1-ին Քենթրբերիի արքեպիսկոպոսը հայտարարեց տվյալ տարածաշրջանում իրենց գործունեության դադարեցման մասին:

Ինչ վերաբերվում է ասորի կաթոլիկներին՝ քաղղեացիներին, նրանք գերակշռում էին Մոսուլում, ինչպես նաև Միջագետքի տարբեր շրջաններում, Քրդստանի հյուսիս-արևմտյան մասում, Ուրմիայի և Սալմաստի շրջանի Նոսրովաբադ գյուղում ու Իրանական Կրդստանում գտնվող Սեննե քաղաքում: Իրանում ապրող քաղղեացիները եպիսկոպոսներ ունեին Ուրմիա և Սեննե քաղաքներում, որոնք ենթարկվում էին Մոսուլի պատրիարքին: 1878 թ. Մոսուլում բացվում է Սր. Յոհանի /Հովհաննի/ անվան ասորա-քաղղեական ճեմարան: Արդեն 1889 թ. Մոսուլում, Չախոյում, Ամադիեում, Ակրայում, Սղերդում, Դիարբեքիրում և Քիրքուքում քաղղեական յոթ առաջնորդարան էր հաշվվում<sup>41</sup>: Ալքոշմ բնակատեղում նախ գործում էր նեստորական, ապա քաղղեական վանք Ռաբան-Նորմուզ անվամբ: Միջագետքում քաղղեականների թիվը 18 հազար էր, Իրանում՝ 5 հազար<sup>42</sup>: Մոսուլի վիլայիթում նրանք զբաղվում էին հացահատիկային արտադրանքների մշակությամբ, այգեգործությամբ և ձկնորսությամբ:


Ա. Ուրեխիին, գտնում էր, որ 19-րդ դարի երկրորդ կեսին, մասնավորապես մինչև 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմը, Օսմանյան թուրքիայում ապրում էր 28 մլն. 500 հազար բնակ-

<sup>39</sup> Riley A., The Archbishop of Canterbury's Mission to the Assyrian Christians, London, 1891, p. 7.

<sup>40</sup> Maclean A. J., Browne W. N., The Catholicos of the East and his people, London, 1892.

<sup>41</sup> Yacoub J., La Babylone chrétienne. Géopolitique des Églises de Mésopotamie, Paris, 1996, pp. 195-198.

<sup>42</sup> Шелковников Б., указ. соч., с. 45.



չություն, որից 130 հազարը նեստորական ասորիներն էին, 30 հազարը քաղղեացի ասորիները<sup>43</sup>։

1889 թ. «Արձագանք» պարբերականում «Հայերի և ասորիների դրուժյան առթիվ» վերնագրով հոդվածում ասորիների տվյալ ժամանակաշրջանի թվաքանակի մասին կարդում ենք, որ Հաքյարիի սանջակի Ձելու նահիբի ասորի ղեկավարներից Նեմվրոզ բեկի հետազոտություններից և մարդահամարից երևում է, որ միայն Վանա լճից մինչև Բաղդադի փաշայուժյունն ընկած տարածքում ապրում են 500 հազար մաքուր ասորիներն և 200 հազար քուրդ-ասորական խառը լեզվով խոսող ասորիներ<sup>44</sup>։

Ուշագրավ են նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հաղորդած տվյալները. 1913 թ. Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում, բացի Հաքյարիի սանջակից, բնակվում էին 123 հազար նեստորական, հակոբեյան և քաղղեացի ասորիներ, որը կազմում էր նշված վիլայեթների ընդհանուր բնակչության 4,7%<sup>45</sup>։

Ինչպե՞ս էին տեղաբաշխված ասորիներն Արևմտյան Հայաստանի նահանգներում.

1. Վանի վիլայեթը բացառիկ տեղ էր գրավում Արևմտյան Հայաստանի աշխարհագրական միջավայրում։ Այն արևելքից սահմանակից էր իրանահպատակ Մակուի խանությանը, Դիլմանի և Ուրմիայի շրջաններին, հյուսիսից՝ Էրզրումի, արևմուտքից՝ Բիթլիսի, հարավից՝ Դիարբեքիի և Մոսուլի վիլայեթներին։ 1888 թ. նահանգն ուներ 47700 քառ. կմ տարածություն, որից 22700 քառ. կմ-ը բաժին էր ընկնում համանուն գավառին, իսկ 25 հազարը՝ Հաքյարիին<sup>46</sup>։ 1893 թ. Վանի նահանգի տարածքը կրճատվեց 39300 քառ. կմ-ի սահմանների չափ և այդպես էլ պահպանվեց մինչև 1915 թ.<sup>47</sup>։ Այսպիսով՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին տասնամյակին Վանի վիլայեթը կազմված էր Վանի և Հաքյարիի սանջակներից, 12 կազաններից և 1627 գյուղերից<sup>48</sup>։

Հաքյարին բռնում էր Վանի վիլայեթի ամբողջ հարավային, իսկ Վանը՝ հյուսիսային մասը։ Վանի վիլայեթի Հաքյարիի սանջակն իր Բաշկալե կենտրոնով խնդրո առարկա հարցի առումով հետաքրքիր է այն տեսանկյունից, որ այստեղ ապրում էին բավականաչափ ասորիներ՝ զբաղեցնելով Մեծ Ջաբ գետի միջին հոսանքն ընկած տարածքը։ Գրականության մեջ այս շրջանը ընդունված է կոչել «Ինքնավար

ասորական սարգ» հապաքական ասուսով։ Սասնալը բաժանված 5ր վեց կազանների։ Բաշկալեն ուներ 144 գյուղ, Ջուլամերկը՝ 165, Գևալը՝ 184, Շամդինանը՝ 131, Մամուրեթ-ուլ-Համիդը՝ 34 և Բեյթուլ-Շյուրարը՝ 31։ Ընդհանուր գյուղերի թիվը կազմում էր 689<sup>49</sup>։

Ասորիների դրուժյունն այստեղ, իբրև երկրագործ ժողովրդի, անմխիթար էր։ Նրանք զբաղվում էին բնատնտեսությամբ և ապրում էին ազգային ներփակ կյանքով։ Հայերն այս սանջակում քիչ էին. ազգաբնակչությունը գերազանցապես բաղկացած էր ասորիներից և քրդերից, որոնք սպառնացող վտանգին հաճախ դիմադրավում էին միասնաբար։

1878 թ. Ա. Երեցյանի /Երեցով/ ձեռքի տակ եղած տվյալների համաձայն, որոնք ըստ հեղինակի այնքան էլ հավատ էլին ներշնչում, Վանի սանջակում ապրում էին 17400 ասորիներ, որոնք կազմում էին վիլայեթի ընդհանուր բնակչության 4,5%-ը<sup>50</sup>։ Փորձենք այս տվյալները համադրել։ Իրականում ասորիները տեղաբաշխված էին.

Աղյուսակ N 2

| Բնակավայր և վարչական միավոր    | Գյուղ | Մուխ | Բնակչություն        |
|--------------------------------|-------|------|---------------------|
| Վան քաղաք և շրջակայք           | 11    | 215  | 1125                |
| Շատախի կազայի նորդուց նահիբ    | 5     | 350  | 750                 |
| Վանի սանջակի Մահմուդիե կազա    | 2     | 110  | 550                 |
| Մահմուդիե կազայի ինոչար նահիբի | Սիլ   | 120  | 600 <sup>51</sup>   |
| Ընդամենը                       | 19    | 795  | 3 025 <sup>52</sup> |

<sup>43</sup> Убичини А., Современное состояние Оттоманской империи, СПб., 1877, с. 18, 62.

<sup>44</sup> «Արձագանք», N 24, 25 հունիսի 1889, էջ 359:

<sup>45</sup> Реформы в Армении, Сбр. диплом. документов, Петроград, 1915, с. 289.

<sup>46</sup> Cuinet V., op. cit., T. II, p. 688, 716.

<sup>47</sup> Բաղալյան Գ., Վանի նահանգը 1840-ական-1914 թթ. /վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն/, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Ե., 1986, էջ 19:

<sup>48</sup> Ա. Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, էջ 7-8:

<sup>49</sup> «Մուրճ», N 3, 1904, էջ 31-43:

<sup>50</sup> Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881, с. 44-45.

<sup>51</sup> Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիլ գյուղը ասորական էր, հավանական է, որ ասորի բնակչության թվաքանակն այստեղ ավելի մեծ էր, քան Մահմուդիե կազայի նշված նախորդ երկու գյուղերում:

<sup>52</sup> Малоба Я. Д., указ. соч., с. 174.

Իսկ ընդհանուր առմամբ, Վանի սանջակում բնակվում էին 56775 ասորիներ, որոնք միասին կազմում էին 11353 ծուխ<sup>53</sup>: Վանի ուղևորական փոխհյուպատոս Ս. Օլֆերերը 1912 թ. նոյեմբերի 25-ին վկայում էր, որ Վանի սանջակում բնակվում են 70 հազար նեստորական և հազար քաղղեացի ասորիներ<sup>54</sup>: Ասորիների վերաբերյալ ուղևորական գրքերի հաղորդած տվյալները, մեր կարծիքով, բավականին նվազեցված են: Հայոց պատրիարքարանից ուղևորական գրքերից ուղղված մի գրություն համաձայն՝ 1912-1913 թթ. Վանի սանջակի 350 հազարանոց բնակչությունից 18 հազարը /5%/ նեստորական, քաղղեական և հակոբինյան ասորիներն էին<sup>55</sup>: 100-ից ավելի ասորի ընտանիքներ ապրում էին Մահմուդի կազայի Մարվանա և Սարայ գյուղաքաղաքներում, սակայն բուն գավառակում ասորաբնակ էր միայն մեկ գյուղ՝ Խարաբասորիկը:

Ջուլամերկի կազայի գտնվում էր Հաբյարիի սանջակի արևմտյան մասում և բաժանված էր Լեոն, Չալ և Զիրնիխ-մաղան նահիենների: Կազայի կենտրոնը համանուն ավանն էր, որից դեպի հյուսիս գտնվում էր նեստորական ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունի նստավայր Քոչանիս գյուղը: Այս կազայում ըստ Յա. Մալումայի տվյալների ապրում էին.

Աղյուսակ N 3

|                     | Գյուղ | Ծուխ   | Բնակչություն         |
|---------------------|-------|--------|----------------------|
| Նեստորական ասորիներ | 790   | 7300   | 36 500               |
| Քրդեր               | 820   | 3500   | 17 500               |
| Հայեր               | -     | 40     | 200                  |
| ընդամենը            | -     | 10 840 | 54 200 <sup>56</sup> |

Ե. Լալայանի հաշվարկումներով՝ Ջուլամերկի կազայի ասորիները կազմում էին 4855 տուն, այսինքն՝ շուրջ 41 հազար մարդ: Փաստորեն ասորիները կազմում էին կազայի 95%-ը, Հաբյարիի սանջակի 37%-ը և Վանի վիլայեթի 17%-ը<sup>57</sup>: Այս տարածքում ասորիները զբաղվում էին այգեգործությամբ, գինեգործությամբ, մեղվապահությամբ, ոչխարաբուծությամբ և մասամբ՝ երկրագործությամբ: Ցանում էին ծխախոտ, բրինձ, կարտոֆիլ, կորեկ, ցորեն: Ձմռանը տղամարդիկ գնում էին Մոսուլ, Հալեպ և Ռուսաստան՝ աշխատելու և գարնան սկզբին կրկին վերադառնում տուն՝ իրենց ագարակները մշակելու:

<sup>53</sup> Маломе Я. Д., указ. соч., с. 174.

<sup>54</sup> Реформы в Армении, с. 288.

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>56</sup> Маломе Я. Д., указ. соч., с. 173.

<sup>57</sup> Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 5:

Ջուլամերկի կազայի Աշյուտա ասորական գյուղի մոտ գոյություն ունեին ոսկու և արծաթի, ինչպես նաև քարածխի հանքեր: Ջուլամերկի կազայի Չալ նահիեի Յենունի գյուղում կար մեծ քանակությամբ երկաթ և պղինձ: Կար նաև կապար, որից տեղացիները թուրքական իշխանություններից գաղտնի, փամփուշտներ էին պատրաստում:

Գևար կազան գտնվում էր Ջուլամերկի կազայի արևելյան մասում և սահմանակից էր Իրանին: Այն բաժանված էր 4 նահիենների. Շամդինան, Օրամար, Բաժերգյահ-Քոսրոն, Զելու: Կազայի երեք նահիեններում, բացի Զելույից, ապրում էին.

Աղյուսակ N 4

|                     | Գյուղ | Ծուխ | Բնակչություն |
|---------------------|-------|------|--------------|
| Նեստորական ասորիներ | 23    | 640  | 3200         |
| Քրդեր               | -     | 900  | 4500         |
| Հայեր               | 2     | 180  | 900          |
| ընդամենը            | -     | 1720 | 8600         |

Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Ա. Թոխմախյանի տվյալների համաձայն՝ Նորդուզի և Շատախի ասորիների թվաքանակը 1880 թ. դրությամբ կազմում էր 447 ընտանիք<sup>58</sup>:

Զելու նահիեն գտնվում էր կազայի հարավային մասում, որտեղ նեստորական ասորիներին էր պատկանում 2250 տուն, ուր բնակվում էին մոտ 11250 բնակիչներ<sup>59</sup>: Քրդերն այստեղ շատ քիչ էին: Գևար կազայում բնակչությունը զբաղվում էր հիմնականում երկրագործությամբ:

Աղբակ կազան գտնվում էր Գևարի հյուսիսային մասում: Այն ևս սահմանակից էր Իրանին: Բաժանված լինելով երկու նահիենների՝ Կոսուր և Արտոշի, իր մեջ ընդգրկում էր.

Աղյուսակ N 5

|                     | Գյուղ | Ծուխ | Բնակչություն       |
|---------------------|-------|------|--------------------|
| Նեստորական ասորիներ | 9     | 360  | 1800               |
| Հայեր               | 35    | 1500 | 7500               |
| ընդամենը            | 44    | 1860 | 9300 <sup>60</sup> |

<sup>58</sup> Թոխմախյան Ա., Հայրենիքի պահպանողները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 37:

<sup>59</sup> Маломе Я. Д., указ. соч., с. 173.

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 174.

Ա. Թոխմախյանի բերած տվյալների համաձայն՝ Աղբակում 1880 թ. ապրում էր 1447 ասորի բնակչություն<sup>61</sup>:

Տեղի բնակչությունը գրադվում էր հացահատիկի մշակմամբ: Այստեղ, Զարնե գյուղի մոտ գտնվող Սարգեր լեռներում կային ոսկու, Զերին և Թալանա գյուղերի մոտ արծաթի, Թալանա, Մեսսա և Սարպեր գյուղերի մոտ կապարի պաշարներ: Նույն Լալայանի հաշվումներով՝ Վանի վիլայեթում ապրում էին 79 հազար ասորիներ<sup>62</sup>, որոնք չնչին բացառությամբ նեստորականներ էին և տեղաբաշխված էին հետևյալ շրջաններում.

Աղյուսակ N 6

| Սանջակ   | Կազա      | Ասորի բնակչություն |
|----------|-----------|--------------------|
| Հաքյարի  | Ջուլամերկ | 41 հազ.            |
|          | Գևար      | 15 հազ.            |
|          | Աղբակ     | 12 հազ.            |
|          | Օրամար    | 7 հազ.             |
| Վան      | Շատախ     | 2 հազ.             |
|          | Խոշաբ     | 2 հազ.             |
| Ընդամենը |           | 79 հազ.            |

Երբ 1869 թ. Դիարբեքիլի անգլիացի հյուպատոս Գ. Թեյլորն այցելում է այս շրջանները, նա կազմում է իր վիճակագրական աղյուսակը նեստորական ասորիների մասին, ըստ որի պատկերն այսպիսին էր.

Աղյուսակ N 7

| Նեստորականների բնակավայրերը | Ցուխ  | բնակչություն |
|-----------------------------|-------|--------------|
| Թիարի                       | 2 500 | 15 000       |
| Ջելու                       | 2 000 | 12 000       |
| Դեզ                         | 2 400 | 14 400       |
| Թհումա                      | 1 500 | 9 000        |
| Բազ                         | 1 700 | 10 200       |
| Վայիո                       | 650   | 3 900        |
| Լևին                        | 600   | 3 600        |
| Գևար                        | 600   | 3 600        |
| Շամդինան                    | 45    | 370          |

<sup>61</sup> Թոխմախյան Ա., նշվ. աշխ., էջ 31:

<sup>62</sup> Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 5:

|                        |        |                      |
|------------------------|--------|----------------------|
| Վան քաղաքի մոտակայքում | 700    | 4 200                |
| Մահմդիե                | 500    | 3 000                |
| Նորդուզ                | 500    | 3 000                |
| Մար-Բիշո               | 1 200  | 7 200                |
| Մոտակա 7 շրջաններ      | 1 607  | 9 640                |
| Ընդամենը               | 16 502 | 99 110 <sup>63</sup> |

Ըստ Ա. Թոխմախյանի՝ Վանի նահանգի ասորիների թվաքանակը հասնում էր 86368-ի<sup>64</sup>:

Համադրելով տարբեր ուսումնասիրություններում նեստորական ասորիների մասին եղած տեղեկությունները, համեմայն դեպս, մեկ ընդհանրացնող եզրակացություն արդեն կարելի է կատարել. ի տարբերություն ասորիների մյուս դավանական ճյուղերի, նեստորական ասորիների մասին պահպանված տեղեկություններն առանձին տարբերություններով հանդերձ գրեթե համապարփակ են: Ուստի պատկերն ավելի ըմբռնելի դարձնելու համար վկայակոչենք ևս մի քանի տվյալներ.

Այսպես, ասորագետ Գ. Յոնանն իր «Մի մոռացված ազգի ցեղասպանություն» աշխատության մեջ տալիս է հետևյալ վիճակագրական տվյալները.

Աղյուսակ N 8

| Բնակավայր     | Ասորիներ | Քրդեր   | Թուրքեր | Հայեր |
|---------------|----------|---------|---------|-------|
| Ջուլամերկ     | 15 000   | 14100   | 2 800   | 2 000 |
| Աղբակ         | 10 000   | 22 500  | 5 690   | 3 000 |
| Գևար          | 9 300    | 12 800  | 1 900   | 1 900 |
| Շամդինան      | 3 000    | 13 270  | 2 000   | -     |
| Նորդուզ       | 3 000    | 11 000  | 1 000   | 2 600 |
| Այլուտա       | 32 000   | 11 000  | 840     | -     |
| Բիթ-ուլ-Շարաբ | 6 700    | 11 000  | 900     | -     |
| Օրամար        | 11 040   | 14 000  | 870     | -     |
| Ամադիե        | 6 000    | 13 680  | 860     | -     |
| Մահմուդիե     | 1 000    | 23 200  | 2 480   | -     |
| Խնդամենը      | 97 040   | 146 550 | 19 340  | -     |

<sup>63</sup> Shimshir B.N., British Documents on Ottoman Armenians, V. I, Ankara, 1982, p. 67.

<sup>64</sup> Թոխմախյան Ա., նշվ. աշխ., էջ 55:

Այսպիսով, ինչպես երևում է, այս շրջաններում ապրում էր 97040 նեստորական ասորի<sup>65</sup>, որոնք բնակչության ընդհանուր թվի մեջ կարևորագույն տեղ էին զբաղում:

Եթե շարունակելու լինենք այս վիճակագրությունը, ապա կտեսնենք, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1881 թ. ամբողջ Վանի վիլայեթում բնակվում էր 88338 նեստորական ասորի<sup>66</sup>: Թուրքիայի արդարադատության նախարարության վիճակագրության տվյալների համաձայն՝ 1890 թ. նույն վիլայեթում ապրում էր 59500 նեստորական<sup>67</sup>, իսկ ըստ Վ. Քինեի՝ այս նույն տարիներին Վանի վիլայեթում բնակվում էին 52 հազար ուղղափառ, 40 հազար նեստորական և 6 հազար քաղաքացի ասորի<sup>68</sup>: Պատմաբան Ա. Համբարյանը գտնում է, որ Վ. Քինեի «ուսումնասիրությունը վստահություն չի ներշնչում, քանի որ հիմնված է թուրքական պաշտոնական տվյալների վրա և զրկում է մեզ երկրի տնտեսական էվոլյուցիան ցույց տալու հնարավորություններից»<sup>69</sup>: Իսկ ըստ Մկրտիչ Ավետիսյանի, եվրոպական ճանապարհորդների վիճակագրական տվյալները խիստ պակասավոր են, քանի որ «հյուսիսայինները և ուղևորները բնակիչների մանրամասն հաշիվները չեն կրնար հանել, հաճախ հավանականությունների, վերի վերո ենթադրությունների վրա և երբեմն ալ առաջին հանդիպած և զիրենք հյուրընկալող տեղացու ըսածների վրա կը հիմնեն իրենց հաշիվը և շատ անգամ ալ քաղաքական նկրտումներ է ներշնչուած՝ կիջեցունեն կամ կը պակասեցունեն գրչին չափազանց հնազանդ թվանշանները»<sup>70</sup>:

Ռուս դիվանագետ Վլ. Մակսկին 1898 թ. այցելում է նեստորական ասորիների աշիրեթային բնակավայրերը, որտեղ և հայթայթում է 1890 թ. վերաբերյալ վիճակագրական տվյալներ.

#### Աղյուսակ N 9

| Աշիրեթներ | Ծխերի թվաքանակը |
|-----------|-----------------|
| Թիար      | 3500            |
| Ջելու     | 850             |
| Բազ       | 500             |
| ԹՀում     | 880             |

<sup>65</sup> Yonan G., Ein vegessener Holocaust, Die Vernichtung der christlichen Assyrein in der Türkei, Göttingen-Wien, 1989, p. 211.

<sup>66</sup> Реформы в Армении, с. 286.

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 287.

<sup>68</sup> Cuinet V., op. cit., T. II, p. 635.

<sup>69</sup> Համբարյան Ա., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Ե., 1965, էջ 6:

<sup>70</sup> Մ. Ա., Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890, էջ 5:

|          |                    |
|----------|--------------------|
| Դեզ      | 450                |
| ընդամենը | 6180 <sup>71</sup> |

Վլ. Մակսկու հաշվումներով՝ 1897 թ. նեստորական ասորիների թվաքանակը Վանի վիլայեթում 90 հազար էր, իսկ ընդհանուր բնակչության թիվը՝ մոտավորապես 405 հազար<sup>72</sup>:

Միայն նեստորական ասորիների մասին ռուսական փոստ-հյուպատոսի հաղորդած տեղեկությունների համաձայն պատկերը հետևյալն էր.

#### Աղյուսակ N 10

| Հաքյարիի սանջակ | Նեստորական ընտանիք |
|-----------------|--------------------|
| Խոշաբ կազա      | 36                 |
| Փևար            | 371                |
| Շամդիան         | 124                |
| Ջուլամերկ       | 465                |
| Աղբակ           | 184                |
| Բեյթ-ուլ-Շաբաբ  | 595                |
| Դեզ             | 450                |
| ԹՀումա          | 760                |
| Բազ             | 470                |
| Ջելու           | 835                |
| Թիար            | 3515               |
| ընդամենը        | 7805 <sup>73</sup> |

Ըստ Վլ. Մակսկու՝ 1899 թ. Վանի վիլայեթի տարածքի նեստորական ասորիները 9162 տուն էին կազմում<sup>74</sup>: Վանի սանջակում 1500 և Հաքյարիի սանջակում 86 հազար ասորիներ ապրելու մասին է հաղորդում Մ. Ավետիսյանը<sup>75</sup>:

Վասպուրականի ասորիները բաժանված էին երկու մեծ խմբերի՝ ազատ լեռնականների /աշիրեթներ/ և ռայաների /հպատակ ժողովուրդ/: Առաջիններն ապրում էին Հաքյարիի լեռնային մասում և բաժանված էին հետևյալ յոթ համայնքների կամ, ինչպես ասորիներն էին ասում, տոհմերի. Վերին Թիարի, Ներքին Թիարի, ԹՀումի, Թալի, Բագի, Ջելուի /Ջարանի և Ջեբրի/ և Դեզի, իսկ ռայաները՝ նույն շրջանի դաշտային, մասամբ էլ Վանի մոտակա 12 գյուղերում, որի կենտրոնն էր Թիմարը: Ասորիների տոհմական /աշիրեթային/ գյուղերը

<sup>71</sup> Маевский В., Несториане Ванского вилайета, Изв. Штаба Кавк. военного округа, N 35, Тифлис, 1913, с. 2.

<sup>72</sup> Маевский В., Ванский вилает, Военно-статистическое описание, с. 114.

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 334-390:

<sup>74</sup> Реформы в Армении, с. 288.

<sup>75</sup> Մ. Ա., նշվ. աշխ., էջ 45:



լեռնային էին: Բնակչութիւնը քաջ գիտակցում էր, որ իր կիսանկախ վիճակը պայմանավորված էր տեղի աշխարհագրական դիրքով. ճանապարհներն իսպառ բացակայում էին, իսկ թուրքական իշխանութիւնները միջոցներ չունեին այն կառուցելու համար: Իրենք՝ ասորիներն էլ, առանձնապէս շահագրգռված չէին վերջիններիս կառուցումով, այն պարզ պատճառով, որ ճանապարհների առկայութեան դեպքում կառավարութիւնն այստեղ գործ և կառավարիչներ կուղարկեր և կաահմանափակեր իրենց ինքնավարութիւնը:

Աշիրեթները թուրքական կառավարութեանը մուծում էին միայն անվանական հարկեր, իսկ ռայաները դարձել էին թուրքական իշխանութիւնների կողոպուտի զոհը և վերին աստիճանի աղքատ վիճակում էին. վերջիններս գրեթէ սովի էին մատուցված, ենթարկվում էին քրդերի ասպատակութիւններին և հաճախ ստիպված ծառայութեան էին անցնում թուրքական բանակում: Իռուսական ռազմական հետախույզ Ռ. Տերմենը գրում էր, որ թուրքական իշխանութիւններն էլ իրենց հերթին էին անհանդստացած աշիրեթներին. «Ասորի աշիրեթները մեզ համար վտանգ են ներկայացնում, որի համար մեզ մտահոգվել է պետք»<sup>76</sup>: Լեռնեցի ասորիները չէին ճանաչում թուրքական իշխանութիւնը, և ամբողջ տարածաշրջանում ապրում էին կիսանկախ վիճակում: Այս տարածքում ասորիների հետ մեկտեղ բնակվում էին նաև քրդեր, որոնք կազմում էին ընդհանուր բնակչութեան 5%-ը, բավականին լավ գիտեին ասորերեն և հաշվի էին նստում ասորի մելիքների հետ:

Սովորաբար, ասորական գյուղերը մեծ էին. ծխերի թիվը հասնում էր մինչև մի քանի հարյուրի: Օրինակ, Ջուլամերկի կազայի Աշուտա գյուղը բաղկացած էր 500 նեստորական ծխերից: Մեկ կարևոր հանգամանք ևս. ասորի ժողովուրդը Վանի վիլայեթում կարողացել էր պահպանել իր լեզուն, ազգային սովորութիւններն ու ազգային եկեղեցին: Ազգային սովորութիւններից պահպանվել էին այնպիսի կրոնական տոներ, ինչպիսիք էին Ամանորը, Զատիկը և Շարան: Բոլոր ասորական գյուղերում կային եկեղեցիներ: Մեծ գյուղերում նրանց թիվը հասնում էր նույնիսկ 4-5-ի, իսկ քահանաների թվաքանակը՝ 15-ի<sup>77</sup>: Վիլայեթի ասորիների մեծագույն մասը հավատարիմ էր մնացել իր ազգային եկեղեցուն՝ նեստորականութեանը, և միայն մի անշան մասն էր ընդունել կաթոլիկութիւն և բողոքականութիւն: Հատկանշական է, որ կրոնական առումով պառակտված ասորիները միմյանց նկատմամբ տածում էին հարգանք և պահպանում էին համերաշխութիւն:

Պետականութիւնից զրկված ասորիները կրոնական, քաղաքական և ռազմական առումով ենթարկվում էին հոգևոր առաջնորդ Մար-Շիմունին, որն ասորական եկեղեցու պատրիարքն էր Արևելքում:

400 տարի շարունակ նեստորական եկեղեցու առաջնորդներն ընտրվում էին Շահմիր տոհմից և կրում իրենց դինաստիական Մար-Շիմուն անունը: Վերջիններս տնօրինում էին եկեղեցու գործերը, որոշում ամուսնական հարցերը, կատարում եպիսկոպոսների ձեռնադրում և աստիճաններ շնորհում: Մար-Շիմունն էր հավաքում և թուրքական իշխանութիւններին հանձնում հարկերը, ղեկավարում ազգային հասարակական-կրոնական կյանքը: Նա էր հաստատում նաև ասորի մելիքներին /գյուղի ավագներին/ և նրանց պաշտոնանկ անում, տնօրինում դատական գործերը: Թուրքական իշխանութիւնները Մար-Շիմունին 19-րդ դարի վերջին իր կողմը գրավելու նպատակով նրան պարզեատրել էր շքանշանով և յուրաքանչյուր տարի տալիս էր 400-ից մինչև 500 լիբ: Թուրքական վարչակարգում Մար-Շիմունը զբաղեցնում էր կազայի դատարանի ավագ անդամի աթոռը: Նեստորական ասորիների կաթողիկոսարանը գտնվում էր Ջուլամերկի կազայի Քոչանիս գյուղում: Կաթողիկոսարանը մի հասարակ շէնք էր, բաղկացած սրահից, մեծ դահլիճից և վեց սենյակներից: 1915-1916 թթ. ասորիների ջարդերից և կոտորածներից հետո Մար-Շիմունի նստավայրը Քոչանիս գյուղից տեղափոխվեց ասորական մեկ այլ բնակավայր, որը գտնվում էր Հյուսիսային Իրաքի տարածքում:

Մար-Շիմունից հետո երկրորդ տեղն էր զբաղեցնում Միտրոպոլիտը, որը համարվում էր նրա տեղակալը և Մար-Շիմունի հիվանդութեան կամ բացակայութեան ժամանակ փոխարինում էր նրան: Միտրոպոլիտը ընտրվում էր եպիսկոպոսների և եկեղեցականների համատեղ խորհրդում: Նրա նստավայրը Գեվար կազայի Շամդինան նահիբի Դեր մենաստանն էր: Միտրոպոլիտի հետ մեկտեղ, այստեղ բնակվում էին 10 հոգևորականներ և երեք եպիսկոպոսներ: Նրան էին ենթարկվում Օսմանյան կայսրութեան Ասիական մասում գոյութիւն ունեցող ինը և Իրանի տարածքում գտնվող չորս եպիսկոպոսներ, որոնց ժողովուրդը կոչում էր Մեծ հայր /աբունա/: Վերջիններիս ընտրում էր եկեղեցականների խորհուրդը: Սակայն, ասորի եպիսկոպոսների և միտրոպոլիտի թվաքանակը հաստատուն չէր: Ասորական եկեղեցիներով զբաղվող գիտնական Ն. Սելեզնյովը գրում է, որ այս ժամանակը ընդունում «ասորական ավանդական եկեղեցին ուներ 20 եպիսկոպոսներ և 3-4 միտրոպոլիտներ»<sup>78</sup>: Ասորի եպիսկոպոսները Օսմանյան թուրքիայում տեղաբաշխված էին հետևյալ կերպ.

- Ա) Ջուլամերկի կազա 1. նահիբ Լեոն, գյուղ Ալամուն  
2. նահիբ Չալ, գյուղ Եկրի  
3. նահիբ Չալ, գյուղ Դյուրե  
4. նահիբ Չալ, գյուղ Դրշիկի

<sup>76</sup> Термен Р. И., Отчет о поездке в санджак Хакьяри Ванского вилайета в 1906 г., Т., 1910, с. 78.

<sup>77</sup> Малоба Я. Д., указ. соч., с. 168-169.

<sup>78</sup> Селезнев Н.Н., указ. соч., с. 66. Տե՛ս նաև Coakley J.F., The Church of the East and the Church of England, Oxford, 1992, p. 15.



Բ) Գեար կազա

- 5. նահիե Զելու, գյուղ Մեսսա
- 6-8. նահիե Շամդիխան, Դեր մենաստան
- 9. գյուղ Բաժերգյազ

Եպիսկոպոսներին էին ենթարկվում քահանաները, որոնց ասորիներն անվանում էին կաշա:

Չնայած ժողովուրդը հոգևորականությանը վճարում էր գումարներ կնունքի, հարսանիքի և հոգեհանգստի ծիսակատարությունների համար, 19-րդ դարի վերջին նեստորական եկեղեցին գտնվում էր ծայրահեղ աղքատության մեջ: Հոգևորականության պահպանման համար տղամարդիկ մեկ, իսկ կանայք կես ղուբուշ տուրք և տասանորդ էին վճարում: Բարձրագույն հոգևորականության պահպանման համար հավաքվում էր «րիշվեյտե» կոչվող տարեկան տուրքը: Երբ Մար-Շիմունը այցելության էր գնում իր ժողովրդին, ամեն գյուղ պարտավոր էր նվիրատվություն կատարել:

Ժամերգությունները և պատարագները կատարվում էին հին ասորերեն լեզվով և ասորական եկեղեցական գրքերով: Հաքյարիի բոլոր ասորիները գիտեին իրենց մայրենի լեզուն և միմյանց հետ միայն այդ լեզվով էին խոսում: Տեղացիները բավական լավ տիրապետում էին նաև հայերեն, քրդերեն և թուրքերեն լեզուներին:

Ասորիների մեջ գրագիտությունը քիչ էր տարածված՝ ընդամենը 1%, կանանց մեջ այդ ցուցանիշն ավելի քիչ էր<sup>79</sup>: Սակայն հարկ է նշել նաև, որ միսիոներների շնորհիվ վիլայեթի տարածքում բացվող ասորական դպրոցների թիվը գնալով ավելանում էր:

Բնականաբար, և այդ մասին վկայում են բազում փաստեր, որ քրդերը բազմիցս փորձեր էին կատարում իրենց առջև բացել Հաքյարիի լեռների ճանապարհները վերջ տալու ասորիների ինքնուրույնությանը: Այսպես՝ 1830-ական թթ. ամերիկյան բողոքական քարոզիչները Թիարի գավառում մի կենտրոն էին ստեղծել նեստորական ասորիներին դավանափոխ անելու նպատակով: Անմիջապես լուրեր տարածվեցին, թե «Ֆրանկները» մտադիր են ողջ Քրդստանում քրիստոնեություն տարածել: Բոհեմիի էմիր, ազգությունը քուրդ Բադրխան բեյը, որը վաղուց արդեն առանձնահատուկ հետաքրքրություն էր դրսևորում հարուստ ասորիների նկատմամբ, «իսլամի պաշտպանության» պատրվակի ներքո, 1842/1843 թ. իրեն բարեկամ ձևացնելով, 40 քրդական ցեղապետների գլուխ անցած, հանկարծակի ներխուժում է նեստորական ասորիների բնակավայրերը և բարբարոսական կոտորածներ ձեռնարկում<sup>80</sup>: Այս ավազակային հարձակման հետևանքով գրավվում է Համայնքի միջնաբերդ Ջուլամերկը և սպան-

<sup>79</sup> Այս իմաստով 19-րդ դարի վերջին բացառություն էր կազմում Մար-Շիմունի բուլբը՝ Սուրմա խանումը, որն անգլիական միսիոներների շնորհիվ շատ լավ կրթություն էր ստացել. ազատ գրում և խոսում էր անգլերեն, ինչպես և ասորերեն, վարում էր կաթողիկոսական դիվանի գործերը:

<sup>80</sup> Карцев А., Заметки о курдах, Т., 1896, с. 16-17.

վում է 10-12 հազար խաղաղ ասորի բնակչություն: Անդրադառնալով այս դեպքերին՝ անգլիացի դիվանագետ Հ. Լեյարդը նշում է, որ «բողոքին սառնասրտորեն սպանեցին»<sup>82</sup>: Բադրխանը ժողովրդի մի մասին ստիպեց դավանափոխ լինել, իսկ մյուս մասին գերեզմարեց՝ Սիրիայի շուկաներում հանելով ստրկավաճառության<sup>83</sup>: Շատերին էլ բռնություններով ընդգրկեց իր բանակի մեջ: Ասորիների նկատմամբ իրականացված եղեռնագործության լուրը հասավ մինչև ռուսական մայրաքաղաք, գայրույթի ալիք առաջացրեց եվրոպական դիվանագետների շրջանում: Սուլթանական իշխանությունները բնականաբար քաջալերում էր Բադրխանի վայրագ գործողությունները ասորիները չեն ընկճվի, և այսպիսով կսկսվի տեղական մի անվերջանալի պատերազմ, որը կթուլացնի երկու կողմերին էլ: Դա բավականին ձեռնտու տարբերակ էր թուրքական իշխանությունների համար: Այս իրադարձություններից անհանգստացած, տեղի ժողովուրդը ստիպված էր օգնություն դիմելու Մոսուլի փաշա Մուհամմեդ Ինջե Բայրաթթարին, որն էլ էլ ավելի սրեց քրդերի թշնամանքը<sup>84</sup>:

1846 թ. հաղթանակներից քաջալերված՝ Բադրխանը որոշեց իրեն ենթարկել նաև նեստորական ասորիներով բնակեցված ԹՀումա գավառը: Նա հրամայում է անխտիր սրի քաշել բողոքին չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ մանուկներին: Հատկապես ցասուկանալից էր այն, որ Մար-Շիմունը օգնության խնդրանքով դիմելով Նիկոլայ Առաջինին և ռուսական տարբեր պաշտոնյաների, վերջիններիս գուցե շարժելու համար սպանված ասորիների ականջները կտրում, լցնում է պարկերը, բարձում մի քանի ուղտեր և ուղարկում ռուսական մայրաքաղաք<sup>85</sup>: Ասորական այդ ջարդերը, մասնավորապես բողոքի անօրինակ և սրտաճմիրկ այդ ձևը, եվրոպական դիվանագիտական շրջանների քննարկումների առարկան են դառնում:

Ասորիներն օգնություն խնդրեցին նաև Մոսուլի անգլիական հյուպատոս Ն. Ռասսամից: Անգլիացի դիվանագետն աշխատեց օգնել նրանց՝ փորձելով այդ ազատատենչ ժողովրդին կողմնորոշել դեպի անգլիական տերությունը՝ տարածաշրջանային հարցերի լուծման նպատակով: Այսպիսով՝ իրականում քաջալերելով ու հրահրելով այս ջարդերը սուլթանական իշխանությունները նեստորական ասորիների կոտորածների մեղադրանքը ամբողջապես բարդեցին Բադրխանի վրա: Վատհական էլ, որ այսքանից հետո Բադրխանը Կ. Պոլսում բնա-

<sup>81</sup> Բայբուրդյան Վ. Ա., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Ե., 1989, էջ 94:

<sup>82</sup> Layard A., Nineveh and its remains, vol I, London, 1849, p. 106-108.

<sup>83</sup> «Նոր դար», N 71, 7 մայիսի 1885:

<sup>84</sup> Адамов А., Ирак Арабский /Бассорский вилайет в его прошлом и настоящем/, СПб, 1912, с. 448-449.

<sup>85</sup> Երամեան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, Հ. Ա., Աղեքսանդրիա, 1929, էջ 22:

կուլթյուն հաստատուց հտտ, շարունակու հր ապրել չբող պայսաս-  
ներում: Միայն եվրոպական դիվանագետների ճնշման տակ սուլթանը  
Բաղրխանին «զրկեց» իր արտոնյալ կյանքի պայմաններից՝ «պատ-  
ճառարանելով» 10 հազար<sup>86</sup> ասորիներին ոչնչացնելու փաստը: Այս  
դեպքերից հետո Մար-Շիմունը հրաժարվեց թուրքական իշխա-  
նություններին առհասարակ հարկ վճարելուց և կազմակերպեց 10  
հազար քաջարի մարտիկներից բաղկացած մի բանակ<sup>87</sup>: Սուլթանը  
ստիպված էր քուրդ ցեղապետին աքսորել Կրետե կղզի: Սակայն հե-  
տագա տասնամյակների պատմութունը ցույց տվեց, որ դեռ երկար  
ժամանակ ասորիները ենթակա էին թուրքական իշխանությունների և  
քրդական ավագանու մշտական հարստահարումներին:

2. Ասորիների բնակության ավանդական շրջաններից է եղել  
նաև Բիթլիսի վիլայեթը: Այն կազմված էր Բիթլիսի, Մուշի, Գենջի և  
Սղերդի սանջակներից, 17 կազաններից, 2110 գյուղերից<sup>88</sup>: Վիլայեթի  
սահմաններն էին. արևելքում՝ Վանի, հյուսիսում՝ Էրզրումի,  
արևմուտքում և հարավում՝ Դիարբեքի վիլայեթները: Տավրոսի լեռ-  
նաշղթան կտրելով՝ վիլայեթը բաժանում էր հյուսիսային և հարա-  
վային մասերի:

Վիլայեթի հարավային մասում գտնվող Սղերդի Պոհտան  
գավառում «հայերն ու ասորիները քրդերի մոտ նման են գերիների,  
որոնք գրեթե անկյանք են շնչում»<sup>89</sup>, - գրում էր Ա. Տեկանցը: 1878 թ.  
տվյալներով՝ վիլայեթում կար 120 հազար թուրք և քուրդ, 200 հա-  
զար հայ և 8 հազար ասորի<sup>90</sup>: Ասորիներն ապրում էին քրդերի մեջ  
ամենուր Սղերդից մինչև Դիարբեքի ընդգրկող տարածքում:

Անգլիացի հետազոտող Հ. Լինչի հաղորդած տվյալներով՝ 1890  
թ. Բիթլիսի վիլայեթի Բիթլիս կամ Բաղեջ քաղաքում և Մերքեզ կա-  
զայում ապրում էր 44109 մարդ, որից 342-ը ասորիներ, 16094-ը՝  
հայեր և 27673-ը՝ մահմեդականներ<sup>91</sup>: 1894 թ. ըստ Հ. Լինչի՝ «Բիթլիս  
քաղաքում ապրում էր 30 հազար մարդ, որից 10 հազարը հայեր էին,  
300 ասորիներ, մնացածները՝ թուրքեր և քրդեր»<sup>92</sup>: Սղերդ սանջակի  
Խազխեիր կազայի 7 գյուղերում բնակվում էին 1550 նեստորական  
ասորիներ՝ մոտ 310 ծուխ<sup>93</sup>:

<sup>86</sup> «Մեղու Հայաստանի», N 72, 1880:

<sup>87</sup> Տեր-Սարգսենց Ս. /Տեկանց Ս./, Շահենն ի Սիպի, Կ. Պոլիս, 1911, էջ 105:

<sup>88</sup> Ա. Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 8:

<sup>89</sup> Տեվկանց Ա., Այցելություն ի Հայաստան 1878 թ., Ե., 1985, էջ 124:

<sup>90</sup> Հայկական հարց, հանրագիտարան, Ե., 1996, էջ 85:

<sup>91</sup> Линч Х., Армения, Путевые очерки и этюды, т. II, Т., 1910, с. 532. Տե՛ս նաև  
Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուս, 1956, էջ 80:

<sup>92</sup> Линч Х., указ. соч., с. 194.

<sup>93</sup> Малом Я. Д., указ. соч., с. 174.

Միայն Սղերդ քաղաքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի  
սկզբին ասորիներն ունեին 5 հազար ծուխ բնակչություն<sup>94</sup>: Բիթլիս և  
Սղերդ քաղաքներում ապրում էր 1863 քաղղեացի ասորի<sup>95</sup>: Ըստ ուռ-  
սական գլխավոր շտաբի պոխագնապետ Տոմիլովի, թուրքական պաշ-  
տոնական սալնամենների տվյալներով Սղերդում բնակվում էր 2860  
քաղղեացի և 2695 հակոբինյան ասորի<sup>96</sup>, սակայն փոխագնապետի  
հաշվումներով Սղերդում և նրան մոտակա 12 բնակավայրերում կային  
80 քաղղեական, 15 հակոբինյան, 110 սիրիական կաթոլիկների տներ,  
որոնք ունեին յոթ արական և մեկ իգական դպրոցներ<sup>97</sup>: Այստեղ  
նրանք ունեցել են նաև իրենց նեստորական եկեղեցին<sup>98</sup>: Համադրելով  
ասորիների վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից նշված վիճա-  
կագրական այս տեղեկությունները, որոնք փոքր ինչ հակասական են,  
պետք է արձանագրենք, որ թվաքանակի այդ տարբերությունները  
բնական են և բնորոշ են եղել թուրքական կայսրության ժողովրդա-  
գրական իրավիճակին: Թեև տվյալ դեպքում այդ վիճակագրական  
նյութերը, որքանով նկատում ենք, ժողովրդագրական ընդհանուր  
պատկերը ներկայացնելու խնդրում շատ չեն տարբերվում միմյանցից:

Վ. Քինեն 1892 թ. Բիթլիսի վիլայեթում հաշվում էր 2600  
քաղղեականներ<sup>99</sup>: Մեր կարծիքով, այս տվյալները խիստ նվազեցված  
են: Վ. Մաևսկին օրինակ, հաղորդում է, որ 1912 թ. վիլայեթում  
բնակվում էին 5 հազար հակոբինյան և 4 հազար քաղղեացի ասո-  
րիներ: Մեկ այլ տեղեկություն ևս. դարի սկզբին Բիթլիսի վիլայեթի  
Թաուլիք նահիեում ապրում էին 45 նեստորական ընտանիքներ<sup>100</sup>:  
Այդ մասին վկայում է Վանի ուսուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևը  
1912 թ.<sup>101</sup>: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913 թ. տվյալների հա-  
մաձայն՝ վիլայեթում, բացի Սղերդի սանջակի հարավային մասից,  
հաշվվում էր 15 հազար նեստորական, հակոբինյան ու քաղղեացի<sup>102</sup> և  
6190 ուղղափառ ասորի<sup>103</sup>:

<sup>94</sup> Термен Р. И., Отчет о полевой поездке 1907г. в Ванском, Битлисском и Диар-  
бекирском вилайетах, Т., 1909, с. 152.

<sup>95</sup> Shimshir B. N., British Documents on Ottoman Armenians, V. II, Ankara, 1983, p.  
129.

<sup>96</sup> Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904  
г., часть I, СПб, с. 181.

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 236, 275.

<sup>98</sup> Մոցիկեան Ս. Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 671:

<sup>99</sup> Cuinet V., op.cit., T. II, p. 526.

<sup>100</sup> Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, с. 423.

<sup>101</sup> Реформы в Армении, с. 286.

<sup>102</sup> Նույն տեղում:

<sup>103</sup> Krikorian M. K., Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908,  
London, 1977, p. 27.

Սղերդից հարավ-արևելք, Ջեզիրեի և Ջախոյի մոտ գոյություն ունեին մեծ քանակությամբ ասորական բնակատեղիներ, որոնք բնակիչները կաթոլիկություն էին ընդունել: Ջեզիրեում ապրում էին 5200 քաղղեացիներ, որոնք այստեղ ունեին 12 արական և մեկ իգական դպրոցներ: Ջախոյում ապրում էին 3500 քաղղեացիներ<sup>104</sup>: Քրդերը հաճախ հարձակվում և թալանում էին ասորական այդ գյուղերը:

Բիթլիս քաղաքի կիցիլ-Մեջիդ թաղում մի մեծ քարափի տակ կառուցված էր ասորական մի եկեղեցի: Պատարագներն այստեղ կատարվում էին ասորերեն լեզվով: Հ. Լինչը, այցելելով այս եկեղեցին, պատմում էր. «Ես հարցրեցի այս եկեղեցու քահանային, որն այստեղ էր եկել Դիարբեքից, թե ինչու են տեղի ասորիները հաճախ խոսում հայերեն, այլ ոչ թե մայրենի լեզվով», ինչին ասորի հոգևորականը պատասխանեց. «Որովհետև այս երկիրը, որտեղ մենք ապրում ենք, կոչվում է Հայաստան»: Քահանան գրույցի ժամանակ ավելացրեց նաև, որ «Սղերդի սանջակում այժմ ապրում են 15 հազար ասորիներ, որոնք տեղաբաշխված են Սղերդի և Շիրվանի կազաններում և որոնց հոգևոր առաջնորդն է Մարդինի պատրիարքը»<sup>105</sup>:

3. Ասորիների քիչ թե շատ սովոր գանգվածներ կարելի էր հանդիպել Էրզրումի վիլայեթում, որը կազմված էր երեք Բայազետի, Էրզրումի և Երզնկայի սանջակներից, 19 կազաններից, 2663 գյուղերից<sup>106</sup>: Վիլայեթն արևելքից և հյուսիս-արևելքից սահմանակից էր Ռուսաստանին, հյուսիսից՝ Տրապիզոնի, արևմուտքից՝ Սեբաստիայի, հարավից՝ Խարբերդի, Բիթլիսի և Վանի վիլայեթներին: Հ. Լինչի տվյալներով՝ 1890-ական թթ. Էրզրում քաղաքում ապրում էր 38894 մարդ, որից 26554 մահմեդականներ, 10434 հայեր, 484 հույներ և 1422 ասորիներ: Այլ կազաններում բնակվող ընդհանուր 266746 թվաքանակից 207261 մահմեդականներ էին, 57358 հայեր, 330 հույներ և 1797 ասորիներ: Երզնկայի սանջակում ապրում էր 191608 մարդ, որից 155879 մահմեդականներ, 31091 հայեր, 2456 հույներ և 2182 ասորիներ: Բայազետի սանջակում էին բնակվում 568 նեստորական ասորիներ<sup>107</sup>:

4. Ասորիների բնակության հիմնական օջախներից է եղել Դիարբեքի վիլայեթը, որը կազմված էր Դիարբեքի, Մարդինի և Արզնի սանջակներից, 13 կազաններից: Վիլայեթը հյուսիսում սահմանակից էր Խարբերդին, հարավում՝ Մոսուլին, արևելքում՝ Բաղեջի և արևմուտքում՝ Հալեպի կուսակալություններին: 19-րդ դարի վերջին և

20-րդ դարի սկզբին այստեղ ապրում էր 470 հազար մարդ՝ ասորիներ, հայեր, քրդեր, թուրքեր: «Հայերն ու ասորիները եղբայրաբար կը բնակվեին քրիստոնեական բաժնի մեջ՝ հավատքով ու ճակատագրով միացած ըլլալով իրարու հետ»<sup>108</sup>, - գրում է Հ. Միուլենելյանը:

Մոտ 50 հազարի հասնող ասորիներ հոժ խմբերով բնակվում էին Դիարբեքի վիլայեթի հարավային մասում<sup>109</sup>: Այս թիվը տատանողական է, որովհետև հաշվի չեն առնված ևս 60 հազար նեստորականները, հակոբիյանները և քաղղեացիները, որոնք կազմում էին վիլայեթի ամբողջ բնակչության 20,4 %-ը<sup>110</sup>: 20-րդ դարի սկզբին Դիարբեքը կամ Տիգրանակերտ քաղաքում բնակվում էին 950 նեստորական ասորիներ և 2300 կաթոլիկ ասորիներ ու հայեր<sup>111</sup>: Դիարբեքի վիլայեթի Մարդինի սանջակի Ջեզիրե կազայի 6 գյուղերում և Դերգուլ նահիեում ապրում էին 3500 ասորիներ՝ մոտ 700 տուն<sup>112</sup>: Ըստ Վ. Մաևսկու տվյալների վիլայեթի Սիվանի և Իլիջա կազաններում հաշվվում էին 480 նեստորական ընտանիքներ<sup>113</sup>: 19-րդ դարի վերջին այստեղ կային 3731 հակոբիյաններ, 761 քաղղեացիներ և 15 հազար սիրիացի-կաթոլիկներ<sup>114</sup>: Ըստ թուրքական սալնամեների, դարասկզբին Դիարբեքի վիլայեթում ապրում էին 22748 հակոբիյան, 1439 քաղղեական և 11165 սիրիացի կաթոլիկներ, իսկ Ամիդ քաղաքում՝ 1300 հակոբիյաններ, 1100 քաղղեացիներ և 150 սիրիացի կաթոլիկներ<sup>115</sup>:

1913 թ. տվյալներով Դիարբեքի վիլայեթում 60 հազարը նեստորական, հակոբիյան և քաղղեացի<sup>116</sup> և 27544 ուղղափառ ասորիներ էին<sup>117</sup>: Միդյաթից Ջեզիրե ճանապարհի վրա էր գտնվում հակոբիյան Դեր-Օմեր գեղեցիկ վանքը: Մարդինից 4-5 կմ դեպի արևելք լեռներում, գտնվում է հակոբիյան մեկ այլ Դեր-Ի-Չաֆրան տաճարը, որը հիմնադրվել էր 800 թ. մ. թ. ա.:

Դիարբեքից Հալեպ ճանապարհի վրա էր գտնվում Սևերեկը, որտեղ կար մեկ հակոբիյան և Սուրբ Պարսամ ասորական ընդհանուր եկեղեցին: Քաղաքը 19-րդ դարի վերջին ուներ 12 հազար բնակչութ-

<sup>108</sup> Միուլենելյան Հ., Հուլիս 1915-ի տարադրույթներ, Փարիզ, 1981, էջ 3.

<sup>109</sup> Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, Արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական թուրքիայի բռնաթիրությունների դեմ, Ե., 2001, էջ 179:

<sup>110</sup> Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Պէյրուս, 1968, էջ 189:

<sup>111</sup> Մկունջ Տ., Ամիտայի արձագանքները, Նիւ-Եորք, 1950, էջ 281:

<sup>112</sup> Маломе Я. Д., указ. соч., с. 174.

<sup>113</sup> Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, с. 433-440.

<sup>114</sup> Shimshir B. N., op. cit., V. II, p. 129, 83.

<sup>115</sup> Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 181, 256.

<sup>116</sup> Реформы в Армении, с. 280.

<sup>117</sup> Krikorian M. K., op. cit., p. 19.

<sup>104</sup> Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904г., с. 236.

<sup>105</sup> Линч Х., указ. соч., с. 195-196.

<sup>106</sup> Ա. Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 7:

<sup>107</sup> Линч Х., указ. соч., с. 532.

յուն, որի մի մասը թուրքեր և քրդեր էին, իսկ մյուս մասը՝ հայեր և ասորիներ<sup>118</sup>:

Մարդիկնում ապրում էին հազար ծուխ հակորինյան ասորիներ, 350 ծուխ սիրիացի-կաթոլիկներ, 100 ծուխ քաղղեացիներ<sup>119</sup>: Յուրաքանչյուրն ուներ իր եկեղեցին: Այս քաղաքի հայ և ասորի կաթոլիկ եկեղեցիները շատ ջերմ հարաբերությունների մեջ էին միմյանց հետ: Հետագայում Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած տարագրություն ժամանակ, այդ եկեղեցիների արքեպիսկոպոսները միասին աքսորվում և բանտարկվում են Հայեպոլում, այնուհետև միասին ազատվում են ու մինչև իրենց կյանքի վերջն ապրում կողք կողքի:

Դիարբեքի վիլայեթի կարևոր քաղաքներից մեկն էլ Մծբինն էր /օտար աղբյուրներում նաև Նեսիբին/: Այն 19-րդ դարի վերջին բաղկացած էր 600 ծխից, որից 60-ը պատկանում էին ասորիներին<sup>120</sup>: Ի դեպ, այստեղ էր գտնվում նաև հակորինյան ասորիների կարևոր եկեղեցիներից մեկը, ուր և թաղված էր նրանց հիմնադիր Հակոբ Բարադայը:

5. Ինչպես հայտնի է, Խարբեքի վիլայեթը վերջնականապես ձևավորվեց 1888 թ. Դիարբեքից, Սեբաստիայից և Մարաշից առանձնացված տարածքներից, որին միացավ նաև Դերսիմը: Այն գտնվում էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում և բաղկացած էր երեք՝ Դերսիմ, Մալաթիա և Մամուրեթ-ուլ-Ազիզ սանջակներից, 15 կազաններից, 20 նահիեներից<sup>121</sup>: Ամբողջ վիլայեթում բնակվում էին 5 հազար ասորիներ<sup>122</sup>, 413 հակորինյաններ և սիրիացի-կաթոլիկներ<sup>123</sup>: 1890 թ., ինչպես հաղորդում է Հ. Լինչը, Խարբեքը քաղաքում ապրում էին 422 ասորիներ<sup>124</sup>: Ըստ Մ. Ավետիսյանի քաղաքում ասորիների թվաքանակը հասնում էր մոտ 750-ի<sup>125</sup>: Հայոց պատրիարքարանի տվյալները ևս հաստատում են, որ 1913 թ. վիլայեթում ապրում էին 5 հազար տարբեր դավանանքների պատկանող ասորիներ<sup>126</sup>: Այստեղ նրանք ունեին իրենց նեստորական եկեղեցին, որը

<sup>118</sup> Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г., с. 263.

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 266:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 269.

<sup>121</sup> Коллобакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Т. 3, Ч. 1, отд. 2, Т., 1891, с. 339.

<sup>122</sup> Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդեր, Կ. Պոլիս, 1919, էջ 74:

<sup>123</sup> Shimshir B. N., op. cit., V, II, p. 130.

<sup>124</sup> Линч X., указ. соч. с. 532.

<sup>125</sup> Մ. Ա., նշվ. աշխ., էջ 45:

<sup>126</sup> Реформы в Армении, с. 283.

գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասում և կոչվում էր Բուզուլուկա:

Խոսելով Խարբեքի ասորիների մասին, Մ. Ճիզմեճյանը գրում էր, որ «ասորիներն էլ, որպես Խարբեքի բնիկ զավակներ, թեև ունեն ազգ ու եկեղեցի, սակայն ծնվել են ու ապրել հայերի հետ երկար դարեր, ընդհորինակել հայերի սովորություններն ու բարքերը, և մանավանդ դաստիարակված են հայ ուսուցիչների ձեռքի տակ. սովորել են հայերեն լեզուն ու գրականությունը: Նրանք խոսում և գրում են հայերեն, հայերի հետ ընկերություն են անում: Խարբեքում ունեն իրենց ծխական դպրոցը, ուր ուսանում են ասորերեն, հայերեն ու թուրքերեն: Այստեղ էր գտնվում ասորական «Աֆրեմի» ընկերությունը, որն էլ հոգում էր դպրոցի հետ կապված որոշակի ծախսեր: Ասորիների մեծ մասն անուս և անգրագետ էր. ու, երբ բացվեցին կաթոլիկ դպրոցներ, շատերն այնտեղ ստանում էին ճրի դաստիարակություն: Այնուհետև, երբ ամերիկյան բողոքական միսիոներների կողմից Խարբեքում հիմնադրվեց մի վարժարան, որը կոչվում էր «Շիրատ կոլեճ», ասորիները սկսեցին իրենց երեսաներին ուղարկել այնտեղ: Նրանց կրթական մակարդակը գնալով բարձրանում էր: Ասորիներից ելան հմուտ գիտնականներ, բժիշկներ, ուսուցիչներ»: Մ. Ճիզմեճյանը Խարբեքի ասորիներին անվանելով գործունյա ազգ, ավելացնում էր, որ «ասորիների մեջ կային այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպես օրինակ Ա. Յուսուֆը, որն առաջին վարժապետն էր թե՛ աղջիկների և թե՛ տղաների վարժարանում ու տպագրում էր իր «Միուրչիտ ըլ Ասուրուն» մայրենի լեզվով թերթը: Նշանավոր մարդկանց մեջ պետք է հիշատակել նաև Գիսակին, որը «Բյուզանդիոն»-ի մեջ ուներ իր հողավածաշարը: Ընկերության անդամներից էին այնպիսի մեծահարուստ վաճառականներ, ինչպիսիք էին Նամեկ եղբայրները, Տոնապետ եղբայրները, Յ. Չատուլպաչը և Մալճյանը<sup>127</sup>:

6. Եվ վերջապես, ասորիների բնակությունը հաջորդ բնակաբնակչության դա Սվազի կամ Սեբաստիայի վիլայեթն էր, որը 19-րդ դարի վերջին բաղկացած էր չորս՝ Սեբաստիա, Ամասիա, Շապին-Գարահիսար և Եվրոկիա սանջակներից, 28 կազաններից, 257 նահիեներից և 4761 կոլոզներից<sup>128</sup>: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համաձայն, այստեղ 1913 թ. /բացի հյուսիս-արևմտյան մասից/ բնակվում էին 25 հազար նեստորական, հակորինյան և քաղղեական ասորիներ<sup>129</sup>:

Եթե ամփոփելու լինենք Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի 1912-1913 թթ. վիճակագրական տվյալները, ապա Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Արևմտյան Հայաստանի նահանգները

<sup>127</sup> Ճիզմեճյան Մ. Գ., Խարբեք և իր զավակները, Յրեզնոյ, Քալիֆորնիա, 1955, էջ 88, 311-312, 584-585:

<sup>128</sup> Հայկական հարց, հանրագիտարան, էջ 296:

<sup>129</sup> Реформы в Армении, с. 278.

րում, բացի ասորիների հիմնական օջախ Հաքյարիի սանջակից, բնակվում էին 123 հազար նեստորական, քաղղեական և հակոբինյան ասորիներ, որոնք կազմում էին վիլայեթների ընդհանուր բնակչության 4,7%-ը: Այսպիսով, այս տվյալների համաձայն ասորիները տեղաբաշխված էին հետևյալ կերպ.

Աղյուսակ N 11

| Նահանգ    | Բնակչություն           |
|-----------|------------------------|
| Վան       | 18 000                 |
| Բիթլիս    | 15 000                 |
| Խարբերդ   | 5 000                  |
| Դիարբեքիր | 60 000                 |
| Սեբաստիա  | 25 000                 |
| ընդամենը  | 123 000 <sup>130</sup> |

Բացի Արևմտյան Հայաստանի վիլայեթներից, ինչպես արդեն նշել ենք, բազմաթիվ ասորիներ էին բնակվում նաև Իրանի տարածքում: Այստեղի ասորիները ապրում էին Ուրմիա լճի արևմտյան, հարավային և հյուսիս-արևմտյան շրջաններում: Ռուս-թուրքական առաջին պատերազմից հետո ասորիների թվաքանակն այստեղ գնալով պակասեց. տեղի ասորիները հայերի հետ գաղթեցին Կովկաս: Օրինակ Ուշնի գավառը, որը մի ժամանակ ասորաբնակ էր, և ասորիները կազմում էին գավառի գերակշռող մասը, 19-րդ դարի վերջին այդ ազգից այստեղ չէր մնացել ոչ մի ներկայացուցիչ: Բայց մինչև այժմ այնտեղ կանգուն է Մարորա ասորական եկեղեցին: Նույն ճակատագրին են արժանացել նաև Մարաղա քաղաքը և նրա շրջակա վայրերը, որոնք մի ժամանակ ասորաշատ շրջաններ էին:

Այսպես ուրեմն, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Իրանի ասորիները ցրված էին Ուրմիա, Բարանդուզ, Սուլդուզ և Մալմաստ գավառամասերում, այլ կերպ ասած Ուրմիա լճի արևմտյան հողերի վրա: Հարկ է նշել, որ միայն Իրանի տարածքում այս ժամանակահատվածում գոյություն ունեին 128 զուտ ասորական գյուղեր, որոնցից 90-ը պատկանում էին Ուրմիայի շրջանին<sup>131</sup>:

Ուրմիա լճի շրջանում բնակվող ասորիների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Բ. Շելկովնիկովը.

|                                   |                        |
|-----------------------------------|------------------------|
| Նեստորականներ                     | 40 հազ.                |
| Ուղղափառներ                       | 30 հազ.                |
| Քաղղեացիներ                       | 4 հազ.                 |
| Լյութերականներ և այլ բողոքականներ | 1 հազ.                 |
| Իրանական Քրիստան. քաղղեացիներ     | 1 հազ.                 |
| .....                             |                        |
| Ընդհանուր թիվը                    | 76 հազ. <sup>132</sup> |

Ուրմիայի ասորաբնակ գավառակներից և գավառամասերից էին Անգալ մհալը, Նազուլ-չայ մհալը, Ռավգա-չայը, Բարանդուզը, Շհար-չայը, Մարգավառը կամ Մերգավառը, Բրադոստը, Դաշտը, Թարգավառը կամ Թերգավառը: Նկարագրենք այս շրջանները առանձին-առանձին:

Անգալ մհալում միայն երկու ասորաբնակ գյուղ կար: Դրանք էին Գեավլանը, ուր բնակվում էին 60 տուն ասորիներ և Ջամալավան իր 40 տուն ասորիներով:

Անգալից հարավ գտնվում էր Նազուլ-չայ մհալը, ուր կային 30-35 ասորաբնակ գյուղեր: Այդ գյուղերից մի քանիսը զուտ ասորաբնակ էին, որտեղ բնակվում էին 3 հազար ասորիներ:

Նազուլ-չայից դեպի հարավ էր գտնվում Ռավգա-չայը, որը մի փոքրիկ գավառակ էր, ուր բնակվում էին մոտ 400-500 տուն ասորիներ: Վերջիններս ցրված էին մի շարք գյուղերում:

Շհար-չայում կային 35 ասորաբնակ գյուղեր՝ 3 հազար ծուխ բնակչությունով: Այս գավառում էին գտնվում Գեոգթափա և Ռահվա ասորական գյուղերը:

Բարանդուզում գոյություն ունեին 30 ասորաբնակ գյուղեր, ուր ապրում էին 2500 ասորական ընտանիք:

Մարգավառում կային 8 ասորական գյուղեր, որտեղ բնակվում էին 180-200 տուն նեստորական ասորիներ: Այդ գյուղերն էին՝ Ռաժա-րը, Դավգիրը, Ավրեզը, Ռազգյահը, Ներգին, Հեյմազան, Հլաջը և Մուսնավան:

Դաշտ մհալի Քահի, Խոշաքու, Դարբանդ և Ճաման գյուղերում բնակվում էին 100 ասորական ընտանիքներ:

Լեռնավայրերից ամենաստորաշատը Թարգավառն էր, որն ուներ զուտ ասորաբնակ բազմամարդ գյուղեր: Գավառում բնակվում էին 600 ծուխ ասորիներ, որոնք կենտրոնացած էին Բալուլան, Կուրա-յա, Շիբանի, Թուլակի, Դոստալան գյուղերում: Այս գավառի Մավա-ա գյուղը ուներ 200 ասորաբնակ տներ:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք այս տվյալները, կարելի է պարզապես, որ Ուրմիայի ընդարձակ գավառում 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին ասորական ծխերի թիվը հասնում էր մոտ 10

<sup>130</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 120:

<sup>131</sup> Shedd W. A., *The Assyrians* /Bulletin of the American Geographical Society/, N 1, 1903.

<sup>132</sup> Шелковников Б., указ. соч., с. 60.

Հազարի, և եթե յուրաքանչյուր տուն հաշվենք միջին թվով ամենաքիչը 7 անդամ, ապա ստացվում է 70 հազար ասորի բնակիչ<sup>133</sup>:

Սուլդուզում ապրում էր 100 ասորական ընտանիք: Համեմատաբար ավելի ասորաշատ էր Սալմաստ գավառը: Այստեղ ապրում էին մոտավորապես 650 տուն ասորիներ, որոնք կենտրոնացած էին հետևյալ չորս գյուղերում՝ Խոսրովա կամ Հուսրավա /500 տուն/, Փաթավուր /100 տուն/, Ուլա /40 տուն/ և Գիվլիզան /30 տուն/<sup>134</sup>:

Ինչ վերաբերվում է Օսմանյան կայսրության մյուս վիլայեթների ասորիների տեղաբաշխման պատկերին, ապա Բաղդադի վիլայեթի Մոսուլ սանջակի Ամադիե կամ Օմադիյա կազայի Փերվարի, Դադուլյա և Մեծուրի նահիեններում 1873 թ. դրությամբ, ասորիների թվաքանակը հասնում էր 7600-ի /1520 տուն/, որոնք ապրում էին 113 գյուղերում<sup>135</sup>: Ասորիների, հատկապես քաղաքացիների թվաքանակն այստեղ զգալիորեն աճել էր: Մոսուլը համարվում էր կաթոլիկ քարոզիչների կենտրոնը: 19-րդ դարի վերջին և 20-րդ սկզբին այստեղ, ըստ թուրքական սալնամենների, ապրում էր 1322 քաղաքացի, 1159 հակոբեյան, 4482 սիրիացի-կաթոլիկ ասորի: Սակայն, Մոսուլի ասորական պատրիարքը շեշտում էր, թե Մոսուլում 2 հազար միայն քաղաքացիներ են ապրում<sup>136</sup>: Մոսուլից 13 մղոն դեպի Հյուսիս գտնվում էր քաղաքական Թեյլ-Քեֆ բնակատեղին, ուր ապրում էին 500 ասորի քաղաքացիներ, ունեին 3 եկեղեցի և դպրոց: Մոսուլից Թեյլ-Քեֆ ճանապարհի վրա էին գտնվում քաղաքական բնակատեղին՝ իր Ռոբան-Հորմուզ վանքով, Բաթնաի, Քարամլեզ, Քարքոչ գյուղերը: Բարթել և Բաշիկյան գյուղերում ապրում էին և՛ հակոբեյան և՛ քաղաքացի ասորիներ: Բազմաթիվ ասորական ընտանիքներ ապրում էին Բաղդադում, Քիրքուքում և Բասրայում:

Սիրիայի Հյուսիս-արևմտյան մասում գտնվող Հալեպի վիլայեթում 1890 թ. տվյալներով ապրել են 40 հազար նեստորական, 759 քաղաքացի, 2 հազարից ավելի հակոբեյան և 66 հազար սիրիացի-կաթոլիկ ասորիներ<sup>137</sup>:

19-րդ դարի վերջին 20900 ուղղափառ ասորիներ էլ բնակվելիս են եղել Ադանայի վիլայեթում<sup>138</sup>:

Բեյրութ քաղաքը, որը համարվում էր ամբողջ Սիրիայի ուսումնական և մտավոր կենտրոնը, 19-րդ դարի վերջին ուներ մոտ

100 հազար բնակիչ, որի 1/3-ը ասորիներ էին<sup>139</sup>:

Այսպիսին էր ասորիների տեղաբաշխման պատկերն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածքներում: Այսպիսով, տեղեկությունների և վիճակագրական տվյալների քննութունը ցույց է տալիս, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսին «Օսմանյան կայսրությունում և նրան հարակից տարածքներում ապրում էին մոտ մեկ միլիոն ասորիներ»<sup>140</sup>, միասնական լեզվով, մշակութային և ազգային սովորույթներով:

Աշխատության մեջ ներկայացված աղյուսակների թվական տվյալների համադրումը մեզ բերում է որոշակի եզրահանգումների: Որքանով երևում է աղյուսակներից, ասորիների հանդեպ, որպես քրիստոնյա ժողովրդի մի մաս, թուրքական իշխանությունները վարել են նույն հալածական քաղաքականությունը, ինչը տարվել է Հայերի, հույների և Օսմանյան թուրքիայի մյուս հպատակ ժողովուրդների նկատմամբ:

Ասորիներից շատերը կրթություն էին ստանում թուրքական կրթական հաստատություններում, սակայն ձեռք բերելով համապատասխան վկայական՝ չէին կարող զբաղեցնել պետական պաշտոններ: Նրանք զուրկ էին իրենց շրջանները տնտեսապես զարգացնելու հնարավորությունից: Թուրքական իշխանությունները տարալուծել են ասորի ժողովրդին մյուս ազգերի մեջ՝ զրկելով նրանց համախմբվելու և միասնական ճակատով հանդես գալու հնարավորությունից: Պետականորեն ակտիվ քաղաքականություն է տարվել այդ տարածքներում ապրող ժողովուրդների միջև ազգային և կրոնական թշնամանք առաջացնելու համար: Այլ խոսքով, ասորի ժողովրդի բնակության այս տարածվածությունը, անշուշտ, դժվարեցնելու էր նրանց միաբանության գործընթացը, ինչին և հետամուտ էին թուրքական իշխանությունները: Եվ վերջապես, ինչպես ցույց տվեցին պատմական հետազոտությունները, ասորի ժողովրդին բաժին ընկավ Օսմանյան թուրքիայում ապրող Հայ և հպատակ մյուս ժողովուրդների նույն դաժան ճակատագիրը:

<sup>133</sup> Ֆրանգեան Ե., Ասորական /պատկերագրող ժողովածու/, Թիֆլիս, 1905, էջ 249-251:

<sup>134</sup> Նույն տեղում, էջ 251:

<sup>135</sup> Маломе Я. Д., указ. соч., с. 174.

<sup>136</sup> Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904г., с. 181-182.

<sup>137</sup> Shimshir B. N., op. cit., V. II, p. 83, 129.

<sup>138</sup> Krikorian M. K., op. cit., p. 34.

<sup>139</sup> Ֆրանգեան Ե., նշվ. աշխ., էջ 244:

<sup>140</sup> Սահակ Մեսրոպ, Հայուն Տարեցոյց, Կ. Պոլիս, 1913, էջ 67-68:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՕՍՍԱՆՅԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ  
ԹՅՈՒՐՔԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՎ 20-ՐԴ  
ԴԱՐԻ ՄԿՁԲԻՆ: ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ա/ Ասորիների զանգվածային կոտորածներն ու ազատագրական  
շարժումները 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության վիճակը գնալով ավելի էր վատթարանում: 1854-1855 թթ. ուռու գեներալ Մ. Լիխուտինը, որն անմիջական մասնակցություն էր ունեցել Ղրիմի պատերազմի Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին և քաջատեղյակ էր Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, գրում էր. «Հայերի, ինչպես Թուրքիայի մյուս բոլոր քրիստոնյաների դրությունը շատ ողբերգական է, և նրանք մշտապես գտնվում են անհանգիստ վիճակում: Այստեղ նրանց ահաբեկում են ոչ միայն թուրքերը, այլ նաև քրդերը, որոնք խանգարում են Հիմնականում ասորիներին և հայերին խաղաղ ու հանգիստ կյանք վարել»<sup>141</sup>:

Այդ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունը Հայտնվեց եվրոպական մեծ տերությունների քաղաքական և տնտեսական մրցակցության կիզակետում: Սակայն ստեղծվեց մի իրավիճակ, երբ թուրքական պետության վերնախավերի և արևմտյան խոշոր տերությունների շահերը համընկան, և երկու կողմերի նպատակը դարձավ Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու նրանում տիրող փոխհարաբերությունների պահպանումը:

Դարի վերջին քառորդին և հատկապես Հայկական հարցի արժարժման և ազատագրական պայքարի վերելքի շրջանում, սուլթանական իշխանություններն ավելի ուժեղացրեցին հպատակ ժողովուրդների նկատմամբ ճնշումներն ու հալածանքները:

1876 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II-ը /1876-1909/ ձեռնամուխ եղավ քրիստոնյաների զանգվածային կոտորածների ծրագրմանը: Զուրը չէ, որ այս ժամանակաշրջանը պատմության մեջ անվանում են որպես Զուլուժի տարիներ, երբ երկրում իշխում էին անիշխանությունը և քաոսը, չկար անձի անձեռնմխելիություն ու

<sup>141</sup> Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб, 1863, с. 168, 152.

գույքի ապահովություն: Աբդուլ Համիդի արտաքին և ներքին քաղաքականության առանցքը պանիսլամիզմն էր, որի նպատակն էր թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրներն ու տարածքները՝ անշուշտ չբացառելով ոչ թուրք ժողովուրդների հալածանքը և ազգային-ազատագրական շարժումների ճնշումը: Քաղաքական հենց այդպիսի հաշվարկով էլ կազմակերպվեցին զանգվածային ջարդեր, ուր հազարավոր հայերի հետ մեկտեղ զոհ գնացին նաև բազմաթիվ ասորիներ:

Կոտորածների հրեշավոր քաղաքականությունն իրագործելու համար սուլթանը բավարար չհամարեց մշտական զորքը. 1891 թ. Արևմտյան Հայաստանում սուլթանի հրամանով ստեղծվեցին «Համիդի» քրդական հեծելազորերը, որոնք էլ իրականացնում էին կոտորածները: Համիդիեականներին տրվեցին լայն լիազորություններ պաշտոն, թոշակ, զենք կրելու իրավունք և այլն: Մտառայելով սուլթանին վերջիններս ահ ու սարսափ էին տարածում քրիստոնյա բնակչության շրջանում: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Համիդիեականները գործում էին ոչ միայն Թուրքիայի տարածքում, այլև հաճախակի, անցնելով Իրանական Քրդստան, ասպատակում ու կողոպտում էին նաև այնտեղի քրիստոնյա բնակչությունն ունեցող գյուղերը<sup>142</sup>: Կեղծիքի, կաշառքի, ահաբեկման և զանազան այլ միջոցներով Աբդուլ Համիդը հպատակ ազգերի միջև թշնամանք էր սերմանում: Նա կարողացավ սեպ խրել մի կողմից հայերի և քրդերի, մյուս կողմից ասորիների ու քրդերի միջև, և կայսրության ազգային փոքրամասնություններին հանեց միմյանց դեմ<sup>143</sup>:

Հետևաբար, Արևմտյան Հայաստանում ապրող ասորիներն իրենց անվտանգությունն ապահովելու համար, ամենուրեք մասնակցում էին հակաթուրքական ազատագրական պայքարին, ստեղծում ֆիդայական-զինական խմբեր: Զելու նահիեի ասորական զինվորական խորհրդի ղեկավար գնդապետ Նեմվրոդ բեկը Հայտնում էր, որ ապստամբության կամ պատերազմի ժամանակ նա կարող է հակառակորդի դեմ հանել 160 հազար լավ կազմակերպված զորք և, որ 1880-ական թթ. վերջին իր բանակը շատ ավելի լավ է զինված, քան 1840-ական կամ 1860-ական թվականներին: Զորքի կազմում կային բազմաթիվ ասորի սպաներ, որոնք զինվորական կրթություն էին ստացել Ռուսաստանում: «Ոչ ոք չէր զարմանում ասորիների զորքի քանակության վրա, որովհետև յուրաքանչյուր վտանգի ժամանակ նրանք բոլորը մի մարդու նման ոտքի էին կանգնում», - գրում էր «Արձագանք»-ը<sup>144</sup>: Անշուշտ, գնդապետի վկայակոչված թվաքանակը չափազանցված է և ավելի շատ քարոզչական նպատակ ունի, սակայն

<sup>142</sup> Բայրուրդյան Վ.Ա., Թուրք-իրանական հարաբերությունները /1900-1914 թթ./, Ե., 1974, էջ 236:

<sup>143</sup> Джалиле Д., Из истории общественно-политической жизни курдов в конце 19 начале 20 вв., СПб, 1997, с. 80.

<sup>144</sup> Արձագանք, N 24, 25 հունիսի 1889, էջ 359:



արտահայտում է ասորիների զինական ուժի պոտենցիալ հնարավորությունների և ժողովրդի պատրաստակամությունը ազատագրական պայքարի համար:

Թուրքական դաժան վարչակարգի և քրդական խուժանի դեմ 1854 թ. ազատագրական պայքարը հատկապես ուժգնորեն է ծավալվում Վանի վիլայեթի հարավային մասում՝ Ջուլամերկում և Իրանի սահմանի մոտ բնակվող ասորիների շրջանում: Այստեղ նրանց կողմից մի լայնածավալ ապստամբություն բարձրացվեց, որը թուրքական զորքերի կողմից ճիշտ է ճնշվեց, սակայն ինչպես գրում է Մ. Լիխուտինը՝ «այդ ապստամբությունը ցույց տվեց, որ ասորիների մեջ դեռ ապրում է ուժեղ կամքը, և միգուցե մի օր հազարամյակների միջև հարուժյուլ կառնի նրանց կործանված Ասորական թագավորությունը»<sup>145</sup>:

1889 թ. «Արձագանք»-ն ասորիների մասին գրում էր. «Լինելով խիստ մեծահոգի՝ նրանք պաշտպան են կանգնած ոչ միայն Հալաբիում քրիստոնյաներին, այլ մինչև իսկ մահմեդականներին. այսպես, 1880 թ. նրանք, շահի խնդրանքով մի քանի հազար հրաձիգ զորք հանելով և կոտորելով լեռների բոլոր քրդերին, օգնեցին տեղաբնիկներին՝ վերադարձնելով այն մեծ հարստությունը, որ քրդերը խլել էին: Այս բանի համար շահը խիստ շնորհապարտ մնաց նրանց և «Առյուծ»-ի շքանշան շնորհեց ասորիների իշխանին /Մար-Շիմունին - Ա. Խ./»<sup>146</sup>:

Թուրքական իշխանությունների և քրդական վերնախավի դեմ ասորիների աչքի ընկնող ելույթներից հատկապես պետք է նշել 1888 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Հաքյարիում բռնկված ապստամբությունը: Ապստամբների դեմ ուղարկվեցին թուրքական զինված ուժեր: Ցավոք, ժամանակի մամուլը թուրքական կառավարության հարուցած արգելքների պատճառով, չկարողացավ արտացոլել այդ իրադարձությունները: Ուստի այդ մասին շատ քիչ մանրամասներ են պահպանվել:

Դիարբեքի անգլիացի նախկին հյուպատոս Դ. Թեյլորն իր գրքում նշում էր. «Քրդստանը, որը մի հսկա տարածք էր և իր մեջ էր ներառում ուղե-թուրքական սահմանից մինչև Միջագետքի հյուսիսային շրջաններն ընկած տարածքները, իր արևելյան մասում հյուսիս-ընկալել էր բազում ասորիների: Հողագործ և արհեստավոր բնակչությունը տեղի հայերն ու նեստորական ասորիներն են, որոնք շատ հաճախ տուժում են տեղական իշխանությունների, այսինքն՝ քուրդ բեյերի հալածանքներից և նման են սորուկների: Նրանց կոչում են «գիր-հուրլի», այսինքն՝ գնված ոսկով: Դա իրոք այդպես է, որովհետև նրանք քրդերի առուծախի առարկան են: Իսկ տեղի քուրդ բեյերն

իրենց տարածքում անկախ են և չեն ենթարկվում թուրքական իշխանություններին»<sup>147</sup>:

1890 թ. հունիսի 10-ին Էրզրումում ուղևորական հյուպատոս Ա. Դեննետը Կ. Պոլսի ուղևորական դեսպան Ա. Նելիդովին ուղղված հեռագրում հայտնում էր, որ «քրիստոնյա բնակչության վիճակը ծայրահեղ ծանր է, և որ ամեն ռուպե մի չնչին առիթից կարող է տեղի ունենալ մահմեդական մոլեռանդության պայթյուն»<sup>148</sup>:

1894 թ. Սասունի ապստամբությունից հետո սկսվեցին հայերի և առհասարակ քրիստոնյաների զանգվածային կոտորածներն Օսմանյան կայսրությունում: Այն տեղեց մինչև 1896 թ., որի արդյունքում եղան բազմաթիվ ավերածություններ ու հարյուրհազարավոր անմեղ զոհեր: Ասորիների զանգվածային ջարդերը սկիզբ առան 1895 թ. հոկտեմբերի սկզբին Դիարբեքիում, ապա տարածվեցին ամենուր: Ասորական կոտորածներն աննախադեպ չափեր ընդունեցին. բազմաթիվ վայրերում տեղի ունեցան սոսկալի իրադարձություններ, որոնց ժամանակ սպանվեցին, բռնի կրոնափոխ եղան և արտագաղթեցին հազարավոր ասորիներ: 245 գյուղերի շուրջ 100 հազար ասորի բնակչություն մահմեդականացվեց, բազմահազար ասորի կանայք և աղջիկներ քվեցին թուրքական հարեմներ<sup>149</sup>: Նրանց գույքը թալանվեց: Զարդերը կատարվում էին ամենաբարբարոս ձևերով՝ առանց սեռի և հասակի խտրության:

1895 թ. հոկտեմբերի 20-ին Ամիդ /Դիարբեքի/ քաղաքում թուրք ու քուրդ խուժանի ձեռքով իրականացվեցին քրիստոնյաների կոտորածները: Ասորական Սբ. Աստվածամոր եկեղեցին իր մեջ պատսպարեց բազմաթիվ քրիստոնյաների՝ ասորիների, հայերի ու հույների: Բարեբախտաբար, նշված եկեղեցին գերծ մնաց հարձակումներից, ինչը չի կարելի ասել ասորական այն գյուղերի մասին, որոնց մեծ մասն ավերվեց և թալանվեց քրդերի կողմից: Այդ ծանր օրերին մի քանի ասորիներ գիմում են իրենց հոգևոր առաջնորդին՝ առաջարկելով հայերին հանել Սբ. Աստվածամոր եկեղեցուց՝ թուրքերի դժգոհությունը չհարուցելու համար: Ի պատասխան այդ պահանջի, հոգևոր հովիվը հայտնում է իր ժողովրդին. «Այն մարդիկ, ովքեր խաչակնքում են, մինչև վերջ պետք է մնան եկեղեցում: Եթե սպանվելու ենք, ապա միասին»<sup>150</sup>: Դիարբեքիի սանջակի 119 գյուղ հրդեհվեց և

<sup>145</sup> Лихутин М., указ. соч., с. 273.

<sup>146</sup> Արձագանք, N 24, 25 հունիսի 1889, էջ 358:

<sup>147</sup> Тейлор Д., Путешествие по Курдистану, Изв. Кавк. отд. русского геогр. общества, Т. II, прилож. I, Т., 1873, с. 76-77.

<sup>148</sup> Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966, с. 13.

<sup>149</sup> Саргизов Л. М., Дружба идущая из глубины веков /Ассирийцы в Армении/, «Атра», № 4, СПб, 1992, с. 71.

<sup>150</sup> Մկուռն Տ., նշվ. աշխ., էջ 234:



ավերվեց: 6 հազար քրիստոնյա ընտանիք՝ շուրջ 30 հազար մարդ<sup>151</sup>, այդ թվում նաև բազմաթիվ ասորիներ, սրի քաշվեցին:

1895 թ. հոկտեմբերին Ուրֆա մտած 3 հազարանոց թուրքական բանակը և 1,5 հազարանոց համիդիեականների զորքը սրի քաշեց 13 հազար ասորիներ<sup>152</sup>:

1895-1896 թթ. կոտորածների ժամանակ Հաքյարիի սանջակի Դերե, Յելյա, Պակե գյուղերը, ուր ապրում էին 200 տուն նեստորական ասորիներ, հավասարվեցին հողին<sup>153</sup>:

1896 թ. սկզբներին թալանից և սպանություններից զերծ չմնացին նաև Սարայի ասորական գյուղերը, որտեղ թուրքական ուժերը ավերեցին 12 գյուղ, «կանանց բռնաբարեցին, ոչխար, տավար, ցորեն ամեն բան սրբեցին ի բաց առյալ մի քանի գյուղեր, որ դիմադրության պատճառով թալանը կիսով չափ եղավ»<sup>154</sup>:

1896 թ. սեպտեմբերի սկզբին Հաքյարիի հարավում գտնվող ասորաբնակ գավառներում տեղի ունեցած ջարդերի մասին էր վկայում հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Արմենական կուսակցության հայտնի գործիչ Արմենակ Եկարյանը. «Կառավարությունը օգտվելով առիթից՝ ուզում էր ազատվել նաև այդ անբաղձալի տարրից /ասորիներից - Ա. Խ./, դրա համար էլ այնտեղ ուղարկեց բազմաթիվ զինվորներ և բաշիբոզուկներ, որոնց ձեռքով հարյուրավոր ասորիներ ջարդվեցին»<sup>155</sup>:

1898 թ. Վլ. Մասևսկուն նեստորական ասորի վերապրածներից մեկը՝ մելիք Աբդիշոն, պատմել է. «1896 թ. կոտորածների ժամանակ մենք շատ կորուստներ ունեցանք: Դեռ 1895 թ. աշնանից սկսած մեր շրջանի քրդերը սկսեցին իրենց ասպատակությունները: 1896 թ. նրանց միացան Իրանի սահմանից եկած քրդերը և քարուքանդ արեցին ամեն ինչ՝ և՛ եկեղեցիները և՛ տները չխնայելով ո՛չ մանուկներին և ո՛չ էլ ձերերին»<sup>156</sup>:

Ուստի, եթե ամփոփելու լինենք 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված ջարդերի վիճակագրությունը, ապա հարկ է նշել, որ 300 հազար հայերի հետ միասին թուրքական յաթաղանին զոհ գնացին նաև 55 հազար ասորիներ<sup>157</sup>: Հայկական ընդհանուր ջարդերի ընթացքում ասորի-

ների նկատմամբ կատարված այս վայրագությունները նոր էջեր հավելեցին Օսմանյան կայսրության արյունոտ պատմությանը:

Խոսելով 1894-1896 թթ. արդուհամիդյան սարսափելի կոտորածների մասին, Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի անդամ և հայտնի քաղաքական գործիչ Ջ. Իրայսը «Ջարդերի հիմնական պատճառը համարում է դաժան բռնապետության և մոլեռանդ հասարակ ժողովրդի հետևում կանգնած եվրոպական տերությունների ճակատագրական գործողությունները կամ անգործությունը: ...Արևելքի քրիստոնյաների համար ավելի լավ կլիներ, եթե որևէ դիվանագետ երբեք որևէ արձանագրություն չստորագրեր կամ ճառ չգրեր նրանց օգտին: Սակայն ինչ էլ բերի ապագան, անցյալը՝ անցյալ է և մի օր պետք է կանգնի սերունդների դատավճռի առջև»<sup>158</sup>:

Թուրքական այս ջարդերից հետո ինչպես հայերը, այնպես էլ ասորիները դիմեցին ինքնապաշտպանական կռիվների: 1896 թ. աշնանը հակաթուրքական ելույթներ տեղի ունեցան Վանի սանջակի ասորիների շրջանում, որոնք իշխանություններին բողոք էին ներկայացրել իրենց անձի և գույքի անապահովության առնչությամբ: Իշխանությունները, բնական է, անպատասխան թողեցին նրանց բողոքը:

Ասորիների հակաթուրքական ելույթներն ու ապստամբությունները շարունակվեցին 20-րդ դարի առաջին տարիներին, որովհետև քրիստոնյաների ջարդերը դարձել էին պետական քաղաքականություն և հետևողականորեն իրագործվում էին հատկապես այն ժողովուրդների նկատմամբ, որոնք իրենց մշակութային բարձր էին թուրքերից, ուստի խաղաղ ձուլման տեսակետից՝ անհուսալի:

Հաքյարիի սանջակում 1901 թ. դեկտեմբերի 31-ին ասորիներն ընդվզեցին թուրքական իշխանությունների դեմ, որոնք հովանավորում էին քրդական ավազակախմբերին և խրախուսում ասորական ջարդերը: Դրությունն այնքան սրվեց, որ Վանից Հաքյարի գործուղվեց Ջիա բեյը՝ միջադեպը քննելու և հանցագործներին պատժելու համար: Թեպետև բեյը համոզվեց, որ ասորիներն իրավացի են ու խոստացավ պաշտպանել նրանց ոտնահարված իրավունքները, սակայն, վերադառնալով Վան, գործնականում ոչինչ չարեց: Իսկ երբ նա նշանակվեց Հաքյարիի մութասարիֆ, պաշտպանության տակ վերցրեց այդ քրդերին: Այդ ժամանակ էլ ասորիները հարձակվեցին քրդերի վրա և սպանեցին նրանց ցեղապետին: Մութասարիֆը չհանդգնեց պատժել նրանց:

1902 թ. ասորիները, նորից ըմբոստանալով համիդյան իշխանության դեմ, գերեցին հարկահաններին, զինաթափեցին ու վռնդեցին նրանց: Վանի օսմանյան պաշտոնյաները խիստ զայրացան ասորիների վրա: Ռուսական կոլեգիայի խորհրդատու Թումանովը 1902 թ. փետրվարի 14-ին նշում էր, որ «եթե չխանգարեր ձեռքը, նրանք լիովին կբնաջնջեին ասորիներին»:

<sup>151</sup> Геноцид армян в Османской империи, с. 120.

<sup>152</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, Bethnahrin yurtsever devrimci örgütü Asuri-Suryani halkına yönelik 1915, Soykirim ve katliamları arastirma komisyonu, Frankfurt, 1998, s. 55.

<sup>153</sup> Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, с. 339.

<sup>154</sup> «Դրոշակ», 1896, № 14, 1 հունիսի:

<sup>155</sup> Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 111.

<sup>156</sup> Маевский В., Несториане Ванского вилайета, Изв. Штаба Кавк. военного округа, N 35, T., 1913, с. 10-11.

<sup>157</sup> Naayem J., Shall this Nation Die, New-York, 1921, p. 274.

<sup>158</sup> Bryce J., Transcaucasia and Ararat, fourth revised edition, London, 1896, pp. 519-526:

1903 թ. գարնանը ասորիները սպանեցին Հարկեր Հավաքող Ջուլամերկի դաժան կայմակամին: Սուլթանական իշխանությունները չհամարձակվեցին պատժել նրանց: Նույն թվականին Վանի սանջակի Ասնիա կամ Դոնիա գյուղի ասորի բնակիչները հրաժարվեցին աղայի տուրքերից և պահանջեցին տեղի իշխանություններից հեռացնել նրան իրենց գյուղից: Անարձագանք մնալով նրանք դիմեցին կուսակալին ու Վանի անգլիական հյուպատոսին, սակայն, վերստին չհասնելով իրենց նպատակին, 1903 թ. մայիսի 8-ին, ինչպես վկայում է ականատեսը, «ահագին խմբերով եկան քաղաքը լցվեցան, շրջապատեցին կուսակալի տունը և հայտնեցին, որ այ անկարող են հանդուրժել քյուրտ ավազակի անգլիություններն ու գազանությունները: Կուսակալը հրամայեց գյուղացիներուն անհապաղ գյուղ վերադառնալ՝ սպառնալով չլսողին բանտ ուղարկել և տանջանքներով սպանել տալ»<sup>159</sup>:

Քրիստոնյաների հայածանքները շարունակվեցին նաև Թուրքիային հարևան Իրանի տարածքում՝ հաճախակի ասպատակող քրդական ելուզակների կողմից:

Այսպես, 1903 թ. գարնանը Մավանա գյուղի ասորիները ընդհարվեցին քրդական աշիրեթների հետ: Ասորիները ունեին ընդամենը 200 կուրդներ՝ ընդդեմ 6 հազարանոց քրդական հրոսակախմբի: Կռիվը վերջացավ երկուստեք զոհերով: Մավանայի ասորիները մեծ հույսեր ունեին, որ իրանական կառավարությունը օգնություն ձեռք կմեկնի իրենց, բայց ապարդյուն:

Թուրքամետ տրամադրություններ ունեցող քրդական ցեղերը 1905 թ. սկսեցին կազմակերպել Ուրմիայի, Սալմաստի, Խոյի և մի շարք այլ շրջանների քրիստոնյա բնակչության և, հատկապես, ասորիների ու հայերի կոտորածները: Այդ ջարդերն առանձնակի մեծ չափեր ընդունեցին 1906 թ. գարնանից, երբ ասպատակություններին և գանգավածային կոտորածներին մասնակցություն ունեցան նաև Օսմանյան Թուրքիայից եկած համիդիե ջոկատները: Հազարավոր մարդիկ, լքելով իրենց բնակատեղիները, հապշտապ հեռացան ավելի ապահով վայրեր: Ասորիներն ու հայերը ստիպված կազմակերպեցին համատեղ ինքնապաշտպանական ջոկատներ:

Ուշագրավ է, որ դրանից հետո որոշ ժամանակ սուլթան Աբդուլ Համիդի պաշտոնյաներն ու հարկահանները հաճախ չէին համարձակվում մտնել ասորական գյուղերը՝ վախենալով վրեժխնդրությունից՝ ձգտելով տուրքերը հավաքել մելիքների միջոցով:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին Ջուլամերկի սանջակի ասորի բնակիչները հրաժարվեցին հարկեր և տուրքեր վճարելուց, վճռեցին համիդյան պաշտոնյաներին և բացահայտ արտահայտեցին իրենց ատելությունը թուրքական իշխանությունների նկատմամբ:

<sup>159</sup> Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908 թթ./, Ե., 1999, էջ 416-417:

Այսպիսով, թուրքական բռնապետության դեմ այս ելույթներն առաջին հերթին պատասխան էին այն սանձարձակ կեղեքման ու ահավոր խոշտանգումների, որոնց դարեր ի վեր ենթարկվում էին ազգային փոքրամասնությունները թուրքական իշխանությունների և քրդական ֆեոդալների կողմից:

Ասորիները քաջ գիտակցում էին, որ քրդերի այս ասպատակությունները հետևանք են սուլթանական տիրող վերնախավի արյունոտ քաղաքականության: Ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը այդ կապակցությամբ նշել է. «Օսմանյան սուլթանների բնորոշ քաղաքականությունն է՝ ջարդել, կոտորել և հետզհետե բոլորովին բնաջինջ անել իրանց հպատակ քրիստոնյա բոլոր ազգերին էլ հավասարապես: ...Քրդերը առաջ հինավուրց հրացաններով էին կոտորում մեզ՝ անգեն, անպաշտպան քրիստոնյա ազգերիս և ժողովուրդներիս, իսկ այժմ նրանք ոտքից գլուխ գինված են ժամանակակից փառավոր հրացաններով: Մի տվեց նրանց այդ նոր եվրոպական կատարելագործված ընտիր զենքերը, ո՞վ, եթե ոչ սուլթան Համիդը, և ի՞նչ նպատակի համար՝ ավելորդ է ասել»<sup>160</sup>:

Սուլթանական իշխանությունների դաժան վարչակարգի, բռնաճնշումների և հալածանքների հետևանքով Արևմտյան Հայաստանի ինչպես հայ, այնպես էլ ասորի բնակչության թվաքանակն անընդհատ և նկատելիորեն նվազում էր: Կոտորածներն ու ջարդերը, բռնի մահմեդականացումն ու ժողովրդի արտագաղթը սովորական երևույթներ էին:

Փաստորեն, 19-րդ դարը՝ հատկապես իր վերջին տասնամյակում տեղի ունեցած սոսկալի իրադարձություններով, կործանարար հետևանքներ թողեց Օսմանյան կայսրության ասորիների վրա և հող նախապատրաստեց էլ ավելի մեծ աղետների համար:

<sup>160</sup> «Մուրճ», N 1-2, հունվար-փետրվար 1906, էջ 58:

Բ/ Հայ-ասորական հարաբերություններն ու համագործակցության փորձերը

19-րդ դարի 60-70-ական թվականներին թուրքական բուրժուազիայի ձևավորման հետ միասին, աշխուժանում էր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին համախառնական դրոշի ներքո համախմբելու և ձուլելու «նոր օսմանների» քաղաքականությունը: Թուրքական կառավարությունն իր այսօրվա նպատակներն իրագործում էր արյունոտ մահմեդական տարրերի միջոցով՝ նրանց հետևողականորեն մղելով կայսրության քրիստոնյա ազգերի դեմ: Այդ ամենի նպատակն, իհարկե, երկիրն ամբողջապես թուրքացնելն էր, «որպեսզի թուրքիա միատարր ու միապաղաղ երկիրը մը ու տեղություն մը դառնա»<sup>161</sup>:

Օսմանյան թուրքերի համար մահմեդական գաղափարախոսությունը ոչ միայն հարմար գործիք էր նվաճումներ կատարելու, այլև նվաճված ժողովուրդներին, հատկապես քրիստոնյաներին հպատակության մեջ պահելու համար: Վերջիններիս սպանելու, թալանելու, հնազանդեցնելու պատվիրաններն ի սկզբանե առկա էին մահմեդականների սուրբ գրքում՝ Դուրանում: Ըստ դրա, ամբողջ մարդկությունը բաժանվում է երկու իրար հակառակ խմբերի: Առաջին խումբը՝ մահմեդականները, «ճշմարիտ» հավատի հետնորդներն էին. մարդկության մյուս մասը՝ «անհավատները», քրիստոնյաներն ու հրեաներն էին, որոնք «դավաճանել» են Աստծուն: Սրանից բխում է, որ ցանկացած դավաճանություն քրիստոնյայի հանդեպ «արդարացված» է ի վերուստ: Այս առումով Դուրանը շուրջ երկու հարյուր պատվիրաններ է պարունակում, որտեղ մահմեդականներին կոչ է արվում «սրբազան պատերազմի» ջիհադի ոգով արյունալի հաշվհարդար տեսնել «անհավատների» նկատմամբ:

Այսպիսով, քրիստոնյաների ջարդերը դառնում էին պետական քաղաքականություն: Այդ քաղաքականության հեղինակները բացերբաց հայտարարում էին, որ «թուրքական առաջին սուլթանների կողմից քրիստոնյաների նկատմամբ թույլ տրված սխալի հետևանք է, որ նրանք դեռ գոյություն ունեին Օսմանյան կայսրության մեջ, և իրենք պետք է ուղղեն այդ սխալը»<sup>162</sup>:

Բնականաբար, խնդրո առարկա հիմնահարցի ամբողջականացման համատեքստում հարց է ծագում, հնարավոր էր արդյոք այդ դժնդակ ժամանակներում հայ-ասորական զինակցությունը: Միանգամից ասենք, որ հայերի և ասորիների զինակցություն ստեղծելու փորձեր, համեմայն դեպս, կատարվել են, քանզի երկու բախտակիր ժողո-

վուրդները հարաբերություններն ինչպես նախորդ, իսկ առավել ևս այդ ճակատագրական տարիներին բարեկամական էին: Երկու հարևան ժողովուրդներն էլ պետականությունից զուրկ էին, և երկու համայնքներն էլ «կառավարվում» էին միայն հոգևոր իշխանությունների՝ ազգային եկեղեցիների կողմից:

Հայ-ասորական համագործակցության գաղափարը արևմտահայ ազգային-ազատագրական շարժման հորձանուտում վաղուց էր հուզել հայ գործիչներին: Հայ Հեղեփոխական Դաշնակցություն կուսակցության նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը հայ-ասորական փոխհարաբերությունների հարցի շուրջ այսպիսի դիպուկ բնութագրում ունի. «Հայերի և ասորիների հարաբերություններն այնքան սերտ էին միմյանց հետ, որ կարծես տարբեր դավանանքի և բարբառի պատկանող մեկ ազգ լինեին իրար հասկացող, միմյանց լեզուն և մշակույթն ըմբռնող»<sup>163</sup>: Հետագայում հայերի և ասորիների ողբերգական ճակատագրին անդրադարձալով նա ցավով էր գրում. «Ասորիներին նույնպես շարունակ կոտորում էին: Նրանց ցավն ինչ էր...»<sup>164</sup>:

Իհարկե հայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից հայ և ասորի ժողովուրդների բարեկամական հարաբերությունները հավաստող այս բնութագիրը միակը չէր: Հայերի և ասորիների միասնական պայքարի անհրաժեշտության մասին խորհրդածություններով և դատողություններով հանդես եկան այնպիսի հայ նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Բաբեյան, Մ. Խրիմյանը, Ս. Թոխմախյանը, Ս. Տեկանցը և ուրիշներ:

ՀՀ Մատենադարանի արխիվային բաժնում են պահպանվում ասորի բարձրաստիճան հոգևորականների և Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու մի շարք նամակներ<sup>165</sup>: Դեռ 1854 թ. կաթողիկոսական իր երկու կոնդակներում հայ-ասորական բարեկամության ամրապնդման փորձեր արեց Ներսես Աշտարակեցին՝ Վանի հոգևոր առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոսին հորդորելով գործնական միջոցառումներ ձեռնարկել այդ ուղղությամբ: Ներսես Աշտարակեցին շատ ջերմ հարաբերությունների մեջ էր նաև ասորիների առաջնորդ Մար-Շիմունի հետ, որն առաջին անգամ Վան ժամանեց 1856 թ., իսկ հետո նաև 1880 թ. և լավ ընդունելություն արժանացավ քաղաքի վերնախավի ու բնակիչների կողմից<sup>166</sup>: 1880 թ. ասորիների հոգևոր առաջնորդի Վան ժամանելու ընթացքում ժողովրդի մեջ տարածվել էին լուրեր այն մասին, որ «Մարշիմունի Փեշով Մկոն է 7/Մ. Խրիմյան - Ա. Խ./ հրավիրել Վան, որ միասին որոշեն իրենց բռնելիք դիրքը

<sup>161</sup> Օրմանյան Մ., Խոհ և Խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 476:

<sup>162</sup> История XIX века, под ред. Лависа и Рамбо, т. 8, М., 1907, с. 1-2.

<sup>163</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Կ. Բ., Պեյուրթ, 1983, էջ 18:

<sup>164</sup> Նույնի, Հայ-թրքական կնճիռը, Գահիրե, 1924, էջ 17:

<sup>165</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 153, վավ. 247, թղթ. 138, վավ. 359: Տես նաև Ալ. Երեցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 165, 173, 175:

<sup>166</sup> «Լուսմա», 1904, N 1, էջ 83:

բունապետութեան հանդեպ և համագործակցեան»<sup>167</sup>: Այդ համագործակցութեան արդյունքը 1880 թ. Զուլամերկի հայերի ու ասորիների միասնական ապստամբութիւնն էր: Մ. Գ. Ներսիսյանն այդ կապակցութեամբ գրել է. «Այստեղ առանձնապէս ուշադրութեան արժանի է այն, որ ինչպէս երևում է թերթի տված հաղորդագրութիւնից, տեղի է ունեցել հայ-ասորական ապստամբութիւն թյուրքական բունակալութեան դեմ»<sup>168</sup>: «Մեղու Հայաստանի» թերթը նշում էր, որ «Մար-Շիմունն այդ ժամանակ իր գինված ուժերին դիմել էր մի ճառով, որտեղ ասել էր, թե պետք է հայերի հետ միասին կյանքի ու մահու կռիվ մղել թուրքական բունակալութեան դեմ»<sup>169</sup>: Նեստորական ասորիների պատրիարքը քարոզում էր այն միտքը, թե անհետաձգելի անհրաժեշտութիւն է նեստորականների միանալը հայերին, որպեսզի կարիք եղած դեպքում միահամուռ հակահարկած տրվի թշնամուն:

Հայերը և ասորիները վկայակոչելով մի շարք հանրաձայնութիւններ, գանգատվում էին, որ թուրքական իշխանութիւնները գիտակցաբար և համառորեն ձգտում է ոչնչացնել քրիստոնեական տարրն Արևմտյան Հայաստանում:

Ասորիների քաջ կեցվածքն ու նրանց ինքնապաշտպանական կռիվները ոգևորում էին թուրքական տիրապետութեան տակ ապրող Վասպուրականի հայերին: Մեծ վիպասան Բաֆֆին, օրինակ, պատմավեպերը երկնելիս, առաջին հերթին հոգում էր, որպեսզի նրանցում, որպէս զարկերակ անցնեն ժամանակի հոգևոլ հարցերը, ուստի չի շրջանցել շոշափելու նաև հայ-ասորական դաշինքի խնդիրը: Այսպէս, «Սամվել»-ում, հաղթահարելով 4-րդ դարի հեռավորութեան դժվարութիւնները, նա ընդգծում է. «Հուլյներն ու ասորիները այնքան վատ էն, որքան դուք կարծում եք»: Մեկ այլ աշխատութեան մեջ Բաֆֆին գրում է. «Զուլուն /ասորիները - Ա. Խ./ մի քաջազնական ժողովուրդ է, որ սկսելով անհիշելի ժամանակներից, Զուլամերկի լեռներում պահպանել է իր անկախութիւնը: Քրդի և թուրքի իշխանութիւնը մինչև այսօր այնտեղ մուտք չի գործել: Ասորիները գինված մարդիկ են, նրանց կանայք, աղջիկներն մինչև անգամ զենք են կրում»: Մեծ վիպասանը միաժամանակ բարձր արտահայտվելով ասորիների հոգևոր առաջնորդի մասին՝ ավելացնում է, որ Մար-Շիմունի «օրինակը մի բացառութիւն է ամբողջ քրիստոնեական աշխարհում, որ հոգևոր պատրիարքը միևնույն ժամանակ հասարակ գինվոր է, հայրենիքի պաշտպան գինվորի բոլոր ազնիվ հատկութիւններով»<sup>170</sup>:

Ասորիները «...օր մը չէ օր մը հայոց հետ կարող են միանալ գիրենք հարստահարող բունավորաց դեմ», - ասում էր Տեկանցի հերո-

սր և նույնիսկ մշակված ծրագիր առաջարկում սրաց սուլտանը. «Դուք մի կարծեք, թե միայն հայոց օգնութեան պետք ունիք, հայերն ալ ձեր օգնութեան պետք ունին: Դուք եթե Աղբակու, Վանա, Հայոց Ձորո, Նորտուզա, Խիզանու, Մոկաց, Շատախու և այլ հայոց հետ միանաք զաշխարհ տակն ու վրա կրնաք ընել. այն ժամանակ երբ Արարատու խոստացյալ Ազատութեան շեփորն կհնչվի, և դուք իբրև դրացի քրիստոնյա եղբայրք՝ նորեն ամենաողորմած ակնարկին սպասեք: Եվ երբ Հայաստանի ավերակներու վրա սյանա արծվին հզոր և սրբե նորոգե այս երկիրն յուր ապականութիւններեն, և դուք, այն-ժամ իրավամբ Մասյաց սարի գլուխ ծածանող ազատութեան դրոշակին նայելով, ի միասին պիտի հրճվինք»<sup>171</sup>:

1881 թ. սկզբներին քուրդ շեյխ Օբեյդուլլան Շամդինանի ասորական Միտրոպոլիտին ուղարկում է Մար-Շիմունի մոտ և առաջարկում միավորվել ընդդեմ թուրքական իշխանութիւնների: Սակայն ասորի մելիքները հրաժարվում են միանալ նրան և որոշում միավորվել հայերի հետ, որոնց լուրջ վտանգ էր սպասվում ինչպէս թուրքական տիրող, այնպէս էլ նրանց ձեռքին գործիք դարձած քրդական վերնախավի ուժերի կողմից: Այս որոշման մասին Մար-Շիմունը խնդրում է Բարդուղեմիոս առաքյալի վանքի վանահայր Հովհաննես /Կայծակ/ վարդապետին՝ տեղյակ պահել Վանի հոգևոր առաջնորդին: «Նեստորականները, - գրում էր Վանի ուսակապիտան Հյուսէյուպատոս Կ. Կամսարականը, - առաջարկում են Վանի հայերին անհրաժեշտութեան դեպքում դուրս բերել մինչև 15 հազար կամավոր հայերից պահանջելով միայն Մարտինի տեսակի հազար հրացան»<sup>172</sup>:

Վանի թուրքական իշխանութիւններն, անշուշտ, գիտեին հայ-ասորական բարիդրացիական հարաբերութիւնների մասին և, վախենալով դրանից, երկու վաշտով ավելացրին բերդի կայազորը և բերդ փոխադրեցին քաղաքում գտնվող գինապահեստները, սկսեցին զենք բաժանել մահմեդականներին և ավելի ուժեղացնել հսկողութիւնը քրիստոնյաների նկատմամբ:

Հայ-ասորական համագործակցութեան հարցի շուրջ իր տեսակետն է հայտնել պատմաբան Հր. Միմոնյանը, նշելով, որ «այդ երկու քրիստոնյա ժողովուրդների համագործակցութեան ջատագովները բավականին շատ էին նաև ասորի գործիչների շրջանում»<sup>173</sup>:

Բնականաբար, դարավերջին Օսմանյան կայսրութիւնում ընթացող իրադարձութիւնները բարենպաստ հող էին ստեղծելու հայ-ասորական միասնական գործակցութեան համար: Այդ իսկ պատճառով 1894 և 1896 թթ. ՀՅԴ կուսակցութեան ղեկավարները պատգամավորներ էին ուղարկել Ուրմիա՝ Մար-Շիմունի մոտ համագործակցելու

<sup>167</sup> Պողոսյան Հ. Մ., Վասպուրականի պատմութիւններից 1850-1900, Ե., 1988, էջ 86:

<sup>168</sup> Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բունակալութեան դեմ 1850-1870 թթ., Ե., 1955, էջ 166-167:

<sup>169</sup> «Մեղու Հայաստանի», N 72, 1880:

<sup>170</sup> Բաֆֆի, Երկեր, Կ. 4, Ե., 1956, էջ 493, 494:

<sup>171</sup> Տեր-Սարգսենց Ս. /Տեկանց Ս./, նշվ. աշխ., էջ 150-153:

<sup>172</sup> Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենայաց» կազմակերպութիւնը, Ե., 1965, էջ 228:

<sup>173</sup> Միմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանութիւնը և քաղաքականութիւնը, Ե., 1986, էջ 163-164:

նպատակով: Ասորիների հոգևոր առաջնորդը հասկանում էր, որ թուրքական տիրող վերնախավի վարած քաղաքականությունը հետապնդում է քրդերի միջոցով քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու նպատակ, ուստի ինչպես ինքը, այնպես էլ նրան ենթակա մելիքները, հայ-ասորական համագործակցության ջատագով էին: Հայ-ասորական համագործակցության մասին է խոսում նաև այն փաստը, որ ասորիները լիագործել էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ միջնորդի դեր կատարելու Բ. Դուան և իրենց միջև:

1896 թ. փետրվարին ՀՅԴ գործիչներից Ռոստոմը կուսակցության թավրիգի կոմիտե ուղարկած նամակում հայտնում էր, որ պատրաստվում է գնալ Մար-Շիմունի մոտ՝ հայ-ասորական համագործակցության շուրջ հարցեր քննարկելու և վասպուրականում ասորիների կողմից ապստամբություն բարձրացնելու նպատակով: Այդ ուղղությունը որոշակի աշխատանքներ է տարել նաև մեկ այլ գործիչ Արամ Արամյանը, ինչի մասին տեղեկանում ենք նրա նամակներից: Դրանցից մեկում, օրինակ, նա գրում է, որ ասորիների հետ համախմբվելու համար հարկավոր է Մար-Շիմունի մոտ պատգամավորներ ուղարկել<sup>174</sup>: Նամակներից մեկում էլ հայտնում էր, որ ասորի մելիքներից մեկի միջոցով կարողացել է նամակ ուղարկել Մար-Շիմունին: «Ասորիների մեջ շատ ուժ կա, ամեն կերպ պետք է աշխատենք նրանց էլ ոտքի հանենք», - գրում էր Ա. Արամյանը:

Հայ-ասորական համագործակցության ուշագրավ փաստ է արձանագրված նաև Վ. Փափազյանի հուշերում. «Մեր ընկերները Ուրմիոյ և շրջակա գյուղերու ասորիների մտավորական և ղեկավար տարրերու հետ մոտ և սրտազին հարաբերություններ մշակած էին»<sup>175</sup>: Դաշնակցության կուսակցության առանձին անդամներ ևս բավականին սերտ հարաբերություններ են ունեցել նաև Վերին Հայոց Ձորի ասորական գյուղերի հետ և դրանցում ստեղծել են իրենց կոմիտեներն ու ենթակոմիտեները:

Ասորիների և հայերի շրջանում ճանաչված ասորի բժիշկ Աբրահամը, շրջելով ասորական գյուղերը, իր հայրենակիցներին հայերի հետ համատեղ պայքարի կոչ էր անում: Նրա քարոզչության արդյունքում այս գյուղերի տասնյակ ասորի երիտասարդներ մտան հայ հայրուկային խմբերի շարքերը, մասնակցեցին բազում ինքնապաշտպանական կռիվների և դարձան նրանց անդամական և հավատարիմ գինակիցները:

Իհարկե, փաստելով հայ-ասորական համագործակցության առանձին դրվագներն ու իրողությունները, միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ամեն փորձ չէ, որ ունեցել է հաջող ավարտ և տվել ցանկալի արդյունք: 1897 թ. Ամերիկայի կոմիտեներին ուղղված «Դրօշակ»-ի խմբագրության նամակում, օրինակ, նշվում էր, որ անցյալ տարվա ընթացքում ասորիների հետ բանակցության իրենց

փորձերը ցանկալի արդյունք չեն տվել<sup>176</sup>: Այդ իսկ պատճառով ՀՅԴ կուսակցության գործիչները որոշում են կայացրել պատվիրակություն ուղարկել ոչ միայն Մար-Շիմունի, այլև ասորական մելիքների մոտ՝ նրանց հետ բանակցելու և ոտքի հանելու համար<sup>177</sup>:

Մամուլում տպագրված մի հոդվածից երևում է, որ Մար-Շիմունը մի քանի եպիսկոպոսներով և մելիքներով Վան քաղաք է ժամանել նաև 1901 թ. հոկտեմբերին՝ «իր ժողովրդային կարգ մը խնդիրներու համար»<sup>178</sup>:

Ամփոփելով հարցի քննությունը, նկատենք, որ ցավոք, հայ-ասորական համագործակցության այս փորձերն իրենց խորացումը և անհրաժեշտ զարգացումը չստացան: Մեր կարծիքով, արդյունավետ համագործակցության բացակայության հիմնական պատճառը այն էր, որ Օսմանյան կայսրությունում տիրող հասարակական, քաղաքական և տնտեսական պայմանները նպաստավոր էին ոչ այնքան նրանց համագործակցության, որքան տարանջատման և առճակատման համար, ինչին բավականին հետամուտ էին թուրքական իշխանությունները: Կարծում ենք նաև, որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ և ասորի ժողովուրդների պատմության դասերն ու բաժին հասած գրեթե նույն ճակատագիրը սթափեցման և զգոնության ազդակ կղառնա մեր ժողովուրդների հետագա պատմության առանցքային հարցերում միասնական ճակատով հանդես գալու համար:

<sup>176</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, Պոսթըն, 1938, էջ 371:

<sup>177</sup> Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ. Տասնապետեանի, հ. Բ, Պէյրուս, 1985, էջ 48:

<sup>178</sup> «Բյուզանդիոն», նոյեմբեր 8-21, N 1557, 1901 :

<sup>174</sup> Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 270, 338, 364-365:

<sup>175</sup> Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, էջ 294:

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄՆ  
ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՉՍԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Ա/ Ասորիների կոտորածներն Օսմանյան Թուրքիայում

Օսմանյան կայսրության մեջ մոլեգնող համիդյան ռեակցիան չափազանց ծանր ու անտանելի դրուժյուն էր ստեղծել երկրի քրիստոնյա ժողովուրդների համար:

1906 թ. ասորական պատրիարք Մար-Շիմունը Վանի ռուսական փոխհյուպատոս Ռ. Տերմենին հայտնում էր, որ իր համայնքի մեջ դժգոհություններն օրեցօր աճում են, և նա վախենում է, որ այն կարող է վերջանալ աղետով: Այս ժամանակաշրջանում թուրքերն, անշուշտ, անհանգստացած էին սեփական երկրի ներքին անկայունության համար: Նրանք ամեն խոստում տալիս էին, որպեսզի իրենց կողմը գրավեն ազգային փոքրամասնություններին՝ վախենալով, որ վերջիններս համախմբվելով, կարող են ընդդիմադիր ուժ դառնալ իրենց դեմ: Թուրքական իշխանությունները երկյուղ կրելով հայերի և ասորիների դեպի Ռուսաստան ունեցած հակվածությունից բարեփոխումների կեղծ խոստումներ էին տալիս: 1914 թ. հոկտեմբերի սկզբին Վանի կայմակամ Դերվիշ էֆենդին Մար-Շիմունին խոստացավ դպրոցներ ու բուժական հիմնարկներ բացել ասորիների համար, գումար հատկացնել հոգևորականությանը, միայն թե նրանք կապերի մեջ չմտնեն ռուսների հետ: Խոստումներն, իհարկե, չկատարվեցին:

Արևմտյան պետություններն էլ իրենց հերթին էին ուզում օգուտներ քաղել՝ միջամտելով Թուրքիայի ներքին գործերին: Նրանք նույնպես ամեն կերպ ձգտում էին իրենց կողմը գրավել ասորիներին՝ վերջիններիս Արևելքում իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար:

1905-1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխությունը որոշ չափով նոր խթան հանդիսացավ Թուրքիայի և Իրանի ժողովուրդների հակաֆեոդալական, հակամիապետական պայքարի համար: 1908 թ. հուլիսի 11-ին Թուրքիայում տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջման հետևանքով տապալվեց Աբդուլ Համիդի միապետական ռեժիմը, և երկրում հաստատվեցին սահմանադրական կարգեր: Բացվեցին բանտերի դռները, և ազատ արձակվեցին բազմաթիվ ազատախոհ գործիչներ: Բացվեցին երկրի սահմանները, և հայրենիք վերադարձան հազարավոր տարագիրներ ու փախստականներ: 1908 թ. հուլիսի 24-ին վերականգնվեց 1876 թ. սահմանադրությունը, որը 1831 թ. բելգիա-

կան և 1850 թ. պրուսական սահմանադրությունների կրկնօրինակն էր: Այն եկավ «խորտակելու» հին բուսապետական ռեժիմը, և խանդավառությամբ ընդունվեց քրիստոնյա ժողովուրդների կողմից: Վերջիններս դեռ չգիտեին, որ 1908 թ. իշխանության եկած երիտթուրքերն իրենց հետ պետք է բերեին նորանոր չարիքներ: Երկրում հռչակվեց ազգերի, կրոնների իրավահավասարություն, խոստումներ հնչեցին տնտեսական և սոցիալական մի շարք սուր խնդիրների շուտափույթ լուծման վերաբերյալ:

1908 թ. դեկտեմբերի 4-ին բացվեց երեսփոխանական ժողովը: Ժամանակակցի վկայությամբ, խորհրդարանական ընտրությունների ընթացքում Կոստանդնուպոլսի փողոցներում կարելի էր ականատես լինել մահմեդականների և քրիստոնյաների ջերմ բարեկամության բազմաթիվ օրինակների: Խորհրդարանի 275 պատգամավորներից 133-ը այլազգիներ էին: Նշենք, որ հեղափոխությունից հետո իշխանության ղեկը մեծ մասամբ դեռ մնում էր հին ռեժիմի պաշտոնյաների ձեռքում:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո երկրում որոշ ազատականացում սկսվեց: Թվում էր՝ Թուրքիան ընթանում էր քաղաքակիրթ ճանապարհով, սակայն իրադարձություններն այլ ընթացք ունեցան: Այս երկրի համար սկսվեց ներքին և արտաքին կյանքի անհանգիստ մի ժամանակաշրջան, որը և պետք է պայմանավորեր երիտթուրքերի առավել ծայրահեղ թեև հաղթանակը:

Ո՛րն էր Օսմանյան Թուրքիայում գործող այն ուժը, որի առաջ գլուխ խոնարհեց սուլթան Աբդուլ Համիդը: Դրանք ազգային բուրժուազիայի ներկայացուցիչներն էին. Թուրքական բանակում գործող սպաների մի խումբ, որոնք ստեղծել էին «Միություն և առաջադիմություն» /«Իթիհատ վե թերաքքի»/ կուսակցությունը և իրենց անվանում էին երիտասարդ Թուրքեր:

Երիտթուրքերը, իշխանության գլուխ գալով Օսմանյան տերության բոլոր ժողովուրդների ազատության, հավասարության և եղբայրության նշանաբանով, շուտով հրաժարվեցին իրենց խոստումներից և սահմանադրությամբ հռչակած ազգերի հավասարության սկզբունքներից: Նրանք երկրում հաստատեցին բուսապետական այնպիսի մի վարչակարգ, որը ոչնչով չէր տարբերվում սուլթան Աբդուլ Համիդի ռեժիմից: Երիտթուրքերը չլուծեցին ժողովրդին հուզող սոցիալական և ոչ մի խնդիր, իսկ հպատակները՝ ձեռք չբերեցին անգամ կյանքի և գույքի ապահովություն: Գյուղացիները նախկինի պես տառապում էին ֆեոդալական ճնշման, ուղղակի և անուղղակի հարկերի բեռի տակ: Նրանցից խլում էին հողը և տալիս Բալկաններից գաղթած մահմեդականներին: Ավելին, երիտասարդ Թուրքերը շուտով հանդես եկան ամեն մի ազատամիտ դրսևորման դեմ: Տարիների ընթացքում նրանք անկարող եղան իրենց միջից աճեցնել լուրջ, պետության շահերն ըմբռնող քաղաքագետներ, որոնք պետք է եր-

վրրս անցյալը թալանորց, ապօրապսօրրց հասօրն և դսօրն զարգացման քաղաքակիրթ ուղու վրա: 1908-1918 թթ. Թուրքիայում փոխվեց 14 կառավարություն, և սուր ներքաղաքական պայքարի ընթացքում անցկացվեցին խորհրդարանական երեք ընտրություններ: Ի վերջո, տաս տարի անց երիտթուրքերը ստիպված էին լքելու պատմության թատերաբեմը, որպես քաղաքական և ռազմական արկածախնդիրներ:

Առաջնորդվելով համաթուրանականության և համաթուրքականության քաղաքականության սկզբունքներով՝ երիտթուրքերը չէին ճանաչում հայերի, հույների, ասորիների և այլ ժողովուրդների ազգային իրավունքները: Նրանք ուզում էին ստեղծել էթնիկապես «մաքուր» մի ազգ «Թուրքիան թուրքերի համար» նշանաբանի ներքո: Նրանց սոցիալական և ազգային ռեակցիոն քաղաքականությունը, սանձարձակ ազգայնամոլությունն ու կրոնական մոլեռանդությունը ծանր ու անտանելի կացության մեջ էր դրել Թուրքիայի հպատակ քրիստոնյա ժողովուրդներին:

Երիտթուրքերի կուսակցության ծրագրում ասվում էր. «Ուշ թե շուտ բոլոր թուրքահպատակ ժողովուրդները պետք է թուրքացվեն: Պարզ է, որ դա չի կարող տեղի ունենալ իրենց կամքի համաձայն, և մենք ստիպված ենք զենք կիրառել»<sup>179</sup>: Երիտթուրքական գաղափարախոս դոկտոր Նազըմը գաղտնի մի խորհրդակցության ժամանակ ասել է. «Ջարդն անհրաժեշտ է: Բոլոր ոչ թուրքական տարրերը, որ ազգին էլ նրանք պատկանելիս լինեն, պետք է ոչնչացվեն»<sup>180</sup>:

Ակադեմիկոս Ե. Տարլենն նշում է. «Երիտթուրքերը 1915 թ. ոչ միայն ոչնչացրեցին հայ ազգի մեծամասնությունը և հպարտանում էին դրանով, այլ դեռ 1908 թ., գալով իշխանության, ունեին հստակ ծրագիր, որի հիմքում ընկած էր բնաջնջման քաղաքականությունը: Այս միջոցով էին նրանք ուզում պահպանել միասնական Թուրքիան բաժանումից»<sup>181</sup>:

1913-1918 թթ. Օսմանյան կայսրության ղեկավարությունը լիովին անցավ Թալեաթի, էնվերի և Ջեմալի ձեռքը, որոնք էլ երկիրը ներքաշեցին Առաջին համաշխարհային պատերազմի մեջ և իրագործեցին պատմության մեջ ամենաարյունոտ ու դաժան կոտորածներն ու ջարդերը:

Բնութագրելով երիտթուրքերի մոլի շովինիստական քաղաքականությունը՝ Ե. Տարլենը ընդգծում էր. «Նրանք ազգային հարցերը վճռում էին բոլոր ազգությունների ֆիզիկական բնաջնջմամբ՝ բացի թուրքերից և նրանցից, ովքեր անմիջապես կհամաձայնվեին թուրք դառնալու: Երիտթուրքերի պարագլուխ էնվեր փաշան հեղափոխությունից հետո բացականչում էր, որ այսուհետև չկան

բուլղարացի, հույն, արաբ ազգեր: Նա գիտեր իր գործը. կամ Թուրքիայում բնակվող բոլոր այդ ցեղերը կթուրքացվեն և այդպիսով բոլորը հավասար կլինեն կամ էլ սրի կքաշվեն»<sup>182</sup>:

Հետևելով, որ Օսմանյան տերության երիտասարդ սերունդը դաստիարակվի թուրքական պետությանը նվիրվածության գաղափարով, իթթիհաթականները բացեցին հատուկ դպրոցներ: Օրինակ, Ուրմիայից հյուսիս ընկած ասորական Գավիլյան և Ջեմալաբադ գյուղերում 12-14 տարեկան ասորի երեխաներին բռնի կերպով ուղարկում էին այդ հատուկ դպրոցները, որպեսզի հետագայում նրանց դարձնեն թուրքական բանակին հավատարիմ զինվորներ: Պատահական չէ, որ Թուրքիայում հրատարակվող «Tasvir-i Efkar» թերթը, 1916 թ. փետրվարին գրելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության հպատակ ազգերի ձուլման քաղաքականության մասին, ազգայնականների վարած քաղաքականությունը գնահատում էր որպես ճիշտ քաղաքականություն<sup>183</sup>:

Թուրքերն ազգամիջյան կոռիվներ էին հրահրում մի կողմից քրդերի, իսկ մյուս կողմից հայերի և ասորիների միջև: Դա մի կողմից ձեռնտու էր թուրքերին այն բանի համար, որ այս փոքր ազգերը միմյանց հետ պատերազմելով թուլանում էին, իսկ մյուս կողմից այդ ժողովուրդների ուշադրությունը շեղում էին հակաթուրքական ընդհանուր ելույթներից: Բնականաբար, թուրքերն այս պայմաններում պետք է ձգտեին իրենց կամքը թելադրել հպատակ ազգերին:

1907 թ. Սղերդից Ջեզիրե ընդգրկող տարածքում քրդերի կողմից ավերվեց, թալանվեց և հրդեհվեց շուրջ 13 ասորական բնակատեղի: Նույն վիճակն էր իրանի հյուսիսում, որը զգալիորեն թուրքաբանակ էր: Այսպես, 1907 թ. հունիսից մինչև 1908 թ. նոյեմբեր ամիսները Ուրմիայում և Սալմաստում արձանագրվել են վայրագություն մի շարք դեպքեր, որոնք իրականացրեցին քրդերն ասորիների և հայերի նկատմամբ:

Այդ կապակցությամբ Ատրպատականի հայոց թեմը մի շարք խնդրագրեր ուղարկեց իրանի Փրանսիական հյուպատոսությունը, պարսից Շահնշահին և Գեորգ արքեպիսկոպոս Սարգսյանին՝ հարցին որևէ ձևով միջամտելու խնդրանքով<sup>184</sup>:

1913 թ. ապրիլին էրզրումի ռուսական հյուպատոս Ադամովը հեռագրում էր Կ. Պոլիս, որ Ռեզվանի, Միդյաթի, Ջեզիրեի և Հասան Քեյֆի քրդերը Բաղրսան բեկի որդու գլխավորությամբ ավերել են Դար-Մախորի հակոբեյան վանքը և Հասան Քեյֆի հայկական եկեղեցին:

Նույն թվականի մայիսի 13-ին Բիթլիսի ռուսական հյուպատոս Երկովն իր հերթին հեռագրում էր Կ. Պոլիս ռուսական ղեսպանին,

<sup>179</sup> Lepsius J., Bericht über die Lage des Armenischer Volkes in Türkei, Potsdam, 1916, s. 220.

<sup>180</sup> Բիֆատ Մեվլան Ջադե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Ե., 1990, էջ 98-99:

<sup>181</sup> Тарле Е. В., Европа в эпоху империализма. /2-ое изд./, М.-Л., 1929, с. 182-183.

<sup>182</sup> Тарле Е. В., Соч., т. 5, М., 1958, с. 199.

<sup>183</sup> ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, ֆ. 32, թղպ. 15, գ. 2, էջ 44:

<sup>184</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 57 ց. 5, գ. 10, թթ. 1, 2, 9, 24-25, 28:



որ քրդական ավատատերերը ահաբեկում են տեղի հայ և ասորի բնակչությանը<sup>185</sup>։ Մյուս կողմից, սակայն, պետք է նշել, որ անգլիական փաստաթղթերում հաճախ ընդգծվում է այն փաստը, որ քրդական շեյխերին այս հանգամանքը այդքան էլ դուր չէր գալիս, և նրանք բազմիցս ստիպել են իրենց ազգի ավագաններին վերադարձնել ասորիներից թալանած ավարը։ Ուշագրավ է, որ այդ տարիներին առանձին քուրդ ցեղապետեր ցանկություն էին հայտնել համագործակցել ասորիների հետ, այլ ոչ թե թշնամանալ, բայց Մար-Շիմունն այս պարագայում ավելի հակված էր դեպի անգլիացիները, որոնք էլ իրենց հերթին էին սրում առանց այդ էլ լարված քուրդ-ասորական հարաբերությունները։

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմը, որը սանձազերծած մեծ տերությունները՝ Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձգտում էին աշխարհի վերաբաժանման, նորանոր գաղութների ձեռք բերման։ Ամբողջ եվրոպան զբաղված էր պատերազմով։

Առաջին աշխարհամարտը սկսվելուց անմիջապես հետո երիտթուրքական կառավարությունն արդեն որոշել էր մտնել պատերազմի մեջ և հանդես գալ գերմանա-ավստրո-հունգարական խմբավորման կազմում, թեև պաշտոնապես սկզբում հայտարարել էր իր չեզոքություն մասին։ Պատերազմի մեջ մտնելը ժամանակի խնդիր էր։ Թուրքիային անհրաժեշտ էր երկրում մեծածավալ միջոցառումներ իրականացնել, լավ նախապատրաստվել, այնուհետև մտնել պատերազմի մեջ։ Այսպիսով, ինչպես նախորդ, այնպես էլ այս պատերազմում Ռուսաստանի հիմնական հակառակորդներից մեկը Օսմանյան Թուրքիան էր։ Շուտով բացվեց Կովկասյան ռազմաճակատը, որը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը։

1914 թ. օգոստոսի 3-ին Թուրքիայում հայտարարվեց սեֆերբերլիք՝ ընդհանուր զորակոչ, իր հետ բերելով նաև թեքեալիֆի-հարալիեն պատերազմական տուրքեր, որը պարզապես չարիք էր քրիստոնյա ժողովուրդների գլխին։ Բանակը պահելու համար գումար էր հարկավոր, իսկ թուրքական գանձարանը դատարկ էր, ուստի ժողովրդից պետք է վերցնեին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր բանակին։ Մյուս կողմից, զորքին տրվելիք անհրաժեշտ պարագաները գնահատվում էին բավականին ցածր գներով։ Գանձված հարկի դիմաց տալիս էին թղթի կտորներ, որով ոչինչ ձեռք բերել չէր լինում։

Եվրոպական պետությունները Թուրքիայի դեմ մղած պայքարում, օգտագործելով այնտեղ բնակվող ազգային փոքրամասնությունների ազատագրական շարժումները, հանդես էին գալիս նրանց «պաշտպանների» դերում։ Սակայն դա չխանգարեց այդ պետություններին հանդես գալ այդ նույն ազգային փոքրամասնությունների դեմ

այն ժամանակ, երբ վերջիններս փորձում էին պայքարի ճանապարհով ազատագրվել օսմանյան տիրապետությունից։

Երիտթուրքական իշխանություններն էլ իրենց հերթին, լավ հասկանալով եվրոպական պետությունների այդ խաղը, դիմում էին խորամանկ միջոցների և ճարպկորեն խուսանավում։ Սկսված պատերազմը երիտթուրքերի համար բարենպաստ առիթ էր գործնականում ստուգելու համաթուրքական գաղափարների կենսունակությունը, իրականացնելու իրենց նվաճողական և ցնորական ծրագրերը, որոնք պաշտպանություն էին գտնում ռազմաֆեոդալական, բուրժուական, իթթիհատական-շովինիստական վերնախավի շրջանում։ Նրանց կարծիքով «պատերազմին մասնակցելը խիստ կբարձրացնեի Թուրքիայի հեղինակությունը, որը մեծապես նվազել էր, հագուրդ կտար թուրքերի ինքնասիրությունը և արժանապատվությունը»<sup>186</sup>։

Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեթ փաշան գերմանական դեսպանատան աշխատող դոկտոր Մուսթամանի հետ զրույցի ժամանակ հաղորդել էր, որ թուրքական կառավարությունը, օգտվելով պատերազմական իրավիճակից վերջնականապես կձերբազատվի ներքին թշնամիներից քրիստոնյաներից՝ չվախենալով անգամ օտար երկրների դիվանագիտական միջամտությունից<sup>187</sup>։ Նույնը կրկնում էր նաև Բեհհաջդի Շաքիրը. «Պատերազմի մեջ ենք, եվրոպայի և մեծ պետությունների միջամտության վախ չկա, աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել։ Եթե ըլլա իսկ, որևէ արդյունք չունենար, առաջիկային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա, ձայները կդադարեն, և ոչ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակություն չի ունենա։ Այս բացառիկ կացությունը նրբություններից առավելագույն չափով պետք է օգտվենք։ Այս առիթն ամեն ժամանակ չի ներկայանա...»<sup>188</sup>։

«Միություն և առաջադիմություն» կուսակցության օրգան «Հիլալ Ահմէտ» օրաթերթը քարոզում էր մի շարք գաղափարներ, որոնք ներկայացվում էին կեղծ գիտական տարազով։ Դրանցից մի քանիսը, մասնավորապես, հետևյալ իմաստն ունեին. «Ըստ բնության օրենքներուն, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերուն կերն ըլլան։ Պատերազմը ուժի վարչաձևն է, և կգտնուի իշխող ցեղերուն անկաշկանդ տրամադրության տակ անձնապաշտպանության համար հանդես տկարներու, որոնք պարտավոր են կրելու անոր հետևանքները, որչափ ալ աղետալի ըլլան անոնք իրենց համար»<sup>189</sup>։

Հատկանշական է, որ Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես առաջ թուրքական դպրոցների աշակերտներին սովո-

<sup>185</sup> Березин И. Н., Езиды, "Магазин землевладения и путешествий", N 3, М., 1954, с. 26-27.

<sup>186</sup> Nessibian A., Britania and the Armenian Question 1915-1923, London, 1984, p. 32.

<sup>187</sup> Lepsius J., Deutschland und Armenian 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet, Potsdam, 1919, p. 26.

<sup>188</sup> Տեր Զոր, Փարիզ, 1955, էջ 258:

<sup>189</sup> Նազլեան Յովյ., Յուզեր, հ. Ա., Պէրոլթ-Լիբանան, 1960, էջ 11:



րեցնում էին հետևյալ բնույթի երգեր. «Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Եկեք սպանե՛նք, եկեք պատառ-պատառ անե՛նք: Եկեք արյան ծովու՛մ լողանք: Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ»:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքերն իրոք չվախեցան մեծ տերությունների միջամտությունից և իրականացրին օսմանյան տերության մի շարք հպատակ ժողովուրդների կոտորածներ: Ձանգվածային ջարդերից ու բռնագաղթից զերծ չմնացին նաև ասորիները: Չմոռանանք, որ մինչև այս պատերազմը ասորիների մի մեծ զանգված արդեն ենթարկվել էր ցեղասպանական քաղաքականության արդուհամիդյան վարչակարգի կողմից, ինչը որոշ իմաստով պետք է ավելի հեշտացնեի ասորիների համատարած ոչնչացումն Առաջին աշխարհամարտի ընթացքում:

Պատերազմի նախօրյակին Օսմանյան տերությունում և Հյուսիս-արևմտյան Իրանի տարածքում բնակվող ասորիների տեղաբաշխման պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ N 12

| Բնակության վայր           | Ասորիների թվաքանակ     |
|---------------------------|------------------------|
| Հյուսիս-արևմտյան Իրան     | 70 000                 |
| Հաքյարի և մոտակա շրջաններ | 153 000                |
| Վանի վիլայեթ              | 98 000                 |
| Սեբաստիայի վիլայեթ        | 25 000                 |
| Խարբերդի վիլայեթ          | 5 000                  |
| Դիարբեքիրի վիլայեթ        | 60 000                 |
| Բիթլիսի վիլայեթ           | 15 000                 |
| Մոսուլի վիլայեթ           | 100 000                |
| Սապնա                     | 10 000                 |
| Զիբար                     | 15 000                 |
| Բոհթան                    | 5 000                  |
| Ստորին Փերվարի            | 5 000                  |
| Ուրֆա                     | 5 000                  |
| Սղերգ                     | 25 000                 |
| Թուր-Աբդինի շրջան         | 200 000                |
| ընդամենը                  | 791 000 <sup>190</sup> |

Ասորիները հայերի հետ միասին հայոց Մեծ եղեռնի օրերին ազատագրական պայքար էին մղում թուրքական բռնակալության և քրդական ավազակախմբերի դեմ: Այդ ամենը թշնամություն էր ընդունում թուրք-գերմանական զինվորական շրջանակների կողմից,

որոնք բոլոր հնարավոր միջոցներով հալածում և ոչնչացնում էին ինչպես հայերին, այնպես էլ ասորիներին:

20-45 տարեկան քրիստոնյա տղամարդկանց զորահավաքի անվան տակ ներգրավեցին աշխատանքային գումարտակների մեջ և, ըստ ռազմական նախարար էնվեր փաշայի հատուկ հրահանգի՝ աչքից հեռու, ծածուկ վայրերում վայրագաբար ոչնչացրին:

Այդ տարիներին Մար-Շիմունը բազմիցս դիմեց ռուսական իշխանություններին՝ պաշտպանության համար զենք ստանալու խնդրանքով, սակայն այդ ջանքերն անցան ապարդյուն: Պատերազմի ժամանակ ստեղծվեց դժոխային մի իրավիճակ: Թուրքական իշխանությունները լուրեր էին տարածում, թե իբր Ռուսաստանը ասորիներին զինում է ընդդեմ քրդերի: Այդպես թուրքերը քրդերին տրամադրեցին ասորիների դեմ: Բարբարոսական այս գործողությունները երիտթուրքերն իրագործում էին գերմանական իշխանությունների գործուն օժանդակությամբ:

1914 թ. նոյեմբերի 19-ին Իրանում գործող ռուսական զորքերը, կռվելով թուրքական զորքերի դեմ, գրավեցին Հաքյարի կենտրոնական վայրերը՝ Բաշկալեն և Սարայը: 1914 թ. դեկտեմբերին հայկական Ախոռիկ, Հասան-Թամրան, Թաշ-օղլու, Հազարե գյուղերի ավերումից անմիջապես հետո նույն բախտին արժանացավ նաև 10 ծուխ ասորի բնակիչ ունեցող Խարաբասորիկ գյուղը: Փրկվում է միայն երկու ընտանիք, իսկ մնացածները սպանվում են: Աղջիկներն ու կանայք տարվում են քրդական հարեմներ<sup>191</sup>:

Նույն այս ժամանակը շնչում Թուր-Աբդինի շրջան ներխուժեց 12 հազարանոց թուրքական մի զորաբանակ: Այնվարդո ասորական գյուղի բնակիչները փորձեցին դիմակայել թշնամուն, բայց բոլորն էլ սպանվեցին:

1915 թ. սկզբին Գարդին ասորական գյուղում թուրք զինվորները, այրելով տեղի նեստորական եկեղեցին կանանց ստիպեցին մահմեդականություն ընդունել:

1915 թ. ռուսական զորքերի հաջողությունները Կովկասյան ճակատում երիտթուրքերին «ստիպում են» դիմել «խանգարող» ոչ թուրք բնակչությունից ազատվելու քայլերի: Ասորիների կոտորածներ են տեղի ունենում ոչ միայն ռազմաճակատին մոտ վայրերում, այլև՝ հեռավոր Դիարբեքիրում, Վանում, Բիթլիսում, Ուրֆայում, Ադանայում և այլուր:

Դիարբեքիրի քաղաքացի քահանա Ջոզեֆ Նայեմը վկայում էր, որ 1915 թ. ապրիլի 8-ից սկսած ահավոր ջարդեր են տեղի ունեցել. 16 տարեկանից բարձր տղամարդկանց հավաքում էին, ծեծում, խոշտանգում, սպանում, ապա փաթթոցներ հագցնում գլուխներին ու նկա-

<sup>190</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, p. 6.

<sup>191</sup> Ա-Դո, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917, էջ 117:

րուս, որ հետո ապացուցեն աշխարհին, թե իբր քրիստոնյաները հալածել են մահամեղականներին<sup>192</sup>։

Դիարբեքիի քրիստոնյաների բնաջնջումը դեկավարում էր նույն վիլայեթի վալի Ռեշիդ բեյը։ Թուրքական ջարդերից հատկապես տուժեցին Մարդինի, Միդյաթի և Ջեզիրեի ասորիները։ Դիարբեքիի վիլայեթի ասորիների ջարդերին է անդրադարձել արաբ հեղինակ Ֆուադ Հաֆիզը իր «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» գրքում, ուր գրում է. «Թուրքերի կողմից ոչնչացման ենթակա ժողովուրդների ցանկի մեջ էին մտցված նաև ասորիները։ ... Դիարբեքիի վիլայեթում հազարավոր ասորիներ սպանվեցին»<sup>193</sup>։

1915 թ. մայիսի 10-30-ը Դիարբեքիի վիլայեթի 1200 նշանավոր հայերին և ասորիներին ձեռքակալեցին և խեղդեցին Տիգրիս գետում։ Ակսվեց քրիստոնյաների բռնագաղթը։ Մոտավորապես 4300 ասորիներ անցան պարսկական տարածք և շարժվեցին դեպի Խոյ։

1917 թ. դեկտեմբերի 22-ին Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան մարկիզ Յոհան Ֆոն Պալավիչինին իր երկրի արտաքին գործերի նախարար կոմս Օտտոկար Չերնինին հեռագրում է. «Ուրֆայի մերձակայքում գտնվող Վերեն-Շեհիր փոքրիկ քաղաքում ապրում էին 1400 հայ և 140 ասորի ընտանիքներ, որոնցից 400-ը ամառվա սկզբին աքսորվեցին, իսկ տղամարդիկ սպանվեցին։ Սևերեկում սպանվեցին հակոբեյանները։ Ջեզիրեում նեստորական և քաղղեական բոլոր ասորիներն իրենց եպիսկոպոսներով և քահանաներով հանդերձ կոտորվեցին։ Այս քաղաքի արքեպիսկոպոսի թեմին պատկանող 17 քաղղեական գյուղեր կողոպտվեցին, տղամարդիկ սպանվեցին, իսկ նրանց ընտանիքներն աքսորվեցին։ Սղերդի 450 հայ, 120 քաղղեական և 30 հակոբեյան ընտանիքներ կողոպտվեցին և կոտորվեցին։ Քաղղեացի արքեպիսկոպոս Ադաի Ջահերի հետ միասին աքսորվեցին բավականին թվով ասորիներ։ Կողոպտվեցին և կոտորվեցին նաև Սղերդի շրջակա 40 քաղղեական գյուղերի բնակիչները։ Դիարբեքիի մերձակայքում գտնվող քաղղեացիների չորս գյուղերի բնակիչները սպանվեցին քահանայի հետ միասին»<sup>194</sup>։

Ամիդ քաղաքից մոտավորապես ութ մղոն դեպի հարավ, Տիգրիս գետի ափին էր գտնվում ասորական Չարոխի գյուղը։ Այստեղ ապրում էին քաղղեացի և ուղղափառ ասորիներ, որոնք ունեին իրենց եկեղեցիները։ 1915 թ. չափահաս տղամարդկանց մեծամասնությունը ծառայություն կոչեցին։ Գյուղում մնացել էին հիմնական

<sup>192</sup> Alichoran J. Du génocide à la diaspora: les Assyro-chaldéens au XX siècle, Paris, 1994, p. 370.

<sup>193</sup> Հովհաննիսյան Ն., Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսաբանությունը արաբական պատմագիտության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», N 1, Ե., 1989, էջ 31:

<sup>194</sup> Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatische Aktenstücke, Mag. Dr. A. Ohandjanian, Band 7 1916-1917, Wien, 1995, s. 5052-5053.

նում կանայք, երեխաները, ծերերը և ընդամենը 35 տղամարդ։ Հունվարի 2-ին 50-հոգանոց թուրքական մի զորաջոկատ Յասին օղլու գլխավորությամբ մտավ գյուղ։ Ճանապարհաչինություն պատրվակի տակ նրանք ձեռքակալեցին տղամարդկանց, որից հետո կապկալեցին գյուղի քահանա Ֆ. Թումային։ Յասին օղլու հրամանից հետո թուրք զինվորները գնդակահարեցին գյուղի ողջ բնակչությունը։ Այնուհետև նրանք մեկ ժամից ավել կանգնել և նայում էին զոհվածների դիակներին։ Հանկարծ զինվորները նկատեցին, որ Ֆ. Մուուչ անունով մի ասորի ողջ է մնացել և ծանր վիրավոր է։ «Մենք կփրկենք քո կյանքը, եթե դու մահամեղականություն ընդունես», - ասաց Յասին օղլին։ Չարոխի գյուղի ամենավերջին այդ բնակչին այրեցին խարույկի վրա<sup>195</sup>։

1915 թ. հուլիսի 1-ին Հայերի և ասորիների կոտորածներ տեղի ունեցան Մծբինում, Մարդինում և Թեշ-էրմենում։ Նրանց հանձնարարվեց 24 ժամվա ընթացքում հանձնել զենքը։ Քրիստոնյաները ստիպված էին կատարել հրամանը։

1916 թ. սեպտեմբերին «Martyred Armenia» ամերիկյան թերթը «Original Arabic»-ից թարգմանեց կոտորածների ականատես ազգությամբ արաբ Ֆահգ էլ Ղոսեյնի հոդվածը, որտեղ հեղինակն անդրադարձել էր Դիարբեքիի նեստորական, քաղղեական և բողոքական ասորիների սպանություններին։ «Միդյաթում և Մարդինում հրաման արձակվեց սպանել միայն Հայերին, իսկ մյուս բոլոր համայնքների ներկայացուցիչներին ձեռք չտալ։ Ասորիներն իմանալով իրենց եղբայրների /Հայերի - Ա. Խ./ դժբախտության մասին՝ անմիջապես ամրացան Միդյաթի մոտակա երեք գյուղերում և հակահարված հասցրեցին թուրքական զորքին՝ ցուցադրելով քաջության վառ օրինակներ»<sup>196</sup>։ Ֆահգ էլ Ղոսեյնը այն կարծիքին էր, որ «ասորիները քաջ գիտակցում էին, որ իրենք գործ ունեն մի ստախոս պետության հետ, որը վաղը հետ կվերցնի իրենց ձեռք չտալու տրված խոստումը և ավելի ուժգնորեն կհարվածի նրանց, ում երեկ ներում էր շնորհել»։ Կառավարությունը ստիպված էր նոր զորքեր ուղարկել այստեղ, որոնք էլ արյան մեջ խեղդեցին Տիգրանակերտի ասորական համայնքի 80 ընտանիքների, որոնց մեծ մասը քաղղեացիներ էին։ Ականատեսի վկայությունների համաձայն՝ ասորական բոլոր տների կտուրներից արյուն էր հոսում<sup>197</sup>։

Մարդինում ֆրանսիական քարոզիչների շենքում սպանվեցին ենթարկվեցին 6 հազար ասորիներ, 5 հազարի չափ ասորիներ մահացան քաղցից և հիվանդություններից։ Գետինի թափված էին երեխաների դիակներ. ոմանք կտրված ձեռքերով, ոմանք էլ խեղդված սեփա-

<sup>195</sup> Naaman Qarabashi M. A.-M., The Shed Blood, Sweden, 1997, p. 132-133.

<sup>196</sup> Kloian R.D., The Armenian Genocide, News Accounts from the American Press /1915-1922/, California, 1985, p. 161.

<sup>197</sup> Ղոսեյն էլ Ֆայեզ, Չարդերը Հայաստանի մէջ, Գահիրէ, 1960, էջ 19-20:

կան մագերով: Միդյաթում ջրհորի մոտ հայտնաբերվեցին 750 ասորիների անգլուխ դիակներ<sup>198</sup>:

1915 թ. օգոստոսի 19-ին Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնը հեռագրում էր Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուին. «Մարդիկ այստեղ են հասել բազմաթիվ տարբեր կրոնների պատկանող ասորիներ»<sup>199</sup>: 1915 թ. սեպտեմբերի 3-ին Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը հաղորդում էր, որ օգոստոսի 19-ին Ուրֆայում տեղի է ունեցել հայերի և ասորիների իսկական սպանդ, որի հետևանքով 200 /ըստ այլ աղբյուրների՝ այդ թիվը հասնում է 250-320-ի/ մարդ է սպանվել<sup>200</sup>: Այս փաստաթղթին ավելացնենք 1915 թ. օգոստոսի 26-ին Հալեպից Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանատուն ուղարկված մեկ այլ հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Օգոստոսի 19-ին գինվորներից փախած գինված հայերը Ուրֆայում սպանել են իրենց փնտրող երեք ոստիկանների: Արդյունքում սկսվել են ջարդեր, որոնց զոհ են գնացել ոչ միայն հայեր, այլ նաև ասորիներ՝ շուրջ 200 մարդ»<sup>201</sup>: Այս դեպքերի ականատես քաղղեացի քահանա Ջ. Նանմը վկայում է, որ միայն իր աչքի առաջ թուրք ոստիկանները սպանել են 60 ասորիների: Նրա վկայությամբ մարդկանց արյունը հոսում էր փողոցի կենտրոնով<sup>202</sup>: Ի պատասխան դրան՝ սեպտեմբերի 29-ին Ուրֆայի հայկական փողոցներում տեղի ունեցան կատաղի մարտեր թուրք զինվորների ու տեղի քրիստոնյաների միջև:

1915 թ. սեպտեմբերի 9-ին Մոսուլից գերմանական հյուպատոս Հոլշտայնը հեռագրում էր. «Տիրապետող թուրք զորքերից գաղթած ասորիների տվյալների համաձայն, մեկ շաբաթ առաջ այնտեղ տեղի երեսփոխանը կանոնավոր գործերի և քուրդ ավազակախմբերի օժանդակությամբ սպանել է 250 քաղղեացի և 100 հակոբիյան ասորիներ»:

Թուրքերը սպանված ինչպես հայերի, այնպես էլ ասորիների դիակները թաքցնելու հարցում այնքան էլ աչքի չէին ընկնում իրենց հետևողականությամբ: Չնայած իշխանությունների դիակները թաղելու հրահանգին, սպանությունների անմիջական կազմակերպիչները ոչ միշտ էր, որ կատարում էին այս պահանջը: Դրա փոխարեն դիակները թաքցնելու համար հաճախ օգտագործվում էր ցանկացած բնական և արհեստական միջոց. գոհերի դիակները նետվում էին ձորերի, քարայրների, լճերի, գետերի մեջ, թաքցվում էին անտառներում: Օրինակ, 1915 թ. հուլիսին Դիարբեքի վայրի հետևյալ հեռագիրն էր ուղարկել 4-րդ բանակի հրամանատար Ջեմալին, որն ան-

հանգստություն էր հայտնել Եփրատ գետի հարավային մասում ջրի երեսին հայտնվող դիակների կապակցությամբ. «Եփրատն առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են էրզրումի և Խարբեքի կողմերից: Այստեղ, ապստամբության ընթացքում սպանվածների դիակները նետվում են ամառի վայրերում գտնվող քարայրները կամ էլ այրվում են: Թաղելը բացառված է»: Հաճախ էլ դիակները պարզապես թողնում էին տարագրության ճանապարհի վրա: Այդ է պատճառը, որ նման գործելակերպն անհանգստացրել էր թուրքական իշխանություններին: Այսպես, 1915 թ. սեպտեմբեր ամսին Թալեաթը Հալեպի կուսակալությանը հետևյալ ծածկագիր նամակն է ուղարկում. «Մեզ տեղեկություններ են հասնում, թե օտար սպաները, տեսնելով ճանապարհների երկայնքով դիզված ծանոթ անձնավորությունների դիակները, լուսանկարում են դրանք: Հանձնարարում եմ, որպեսզի անմիջապես թաղեք այդ դիակները և այլևս այդ կերպ մեջտեղ չձգեք»:

Գաղտնիք չէ, որ քրիստոնյա սպանվածների դիակների չեզոքացումը թուրքական իշխանությունների համար կարևորություն էր ներկայացնում նաև հանրային առողջության տեսանկյունից: Մա է պատճառը, որ Կ. Պոլսում հատուկ հանձնաժողով էր կազմվել ներքին գործերի փոխնախարար Ալի Մունիֆի ղեկավարությամբ և ուղարկվել երկրի խորքերը: Այս հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվել էին նաև մի քանի բժիշկներ, շրջում էր գանգավածային կոտորածների վայրերով, կարգադրում անթաղ դիակները լցնել հորերը, ծածկել կիրով /որը նախապես ձեռք էր բերվել հազարավոր կիրոգրամներով/, այնուհետև՝ հողի շերտով: Այս աշխատանքները հանձնաժողովից խլում են վեց ամիս ժամանակ:

Միայն Իրանին սահմանակից թուրքապատկան գավառներում թուրքերի և քրդերի կողմից 1915 թ. կոտորվեց 47 հազար նեստրական ասորի<sup>203</sup>: «Кавказское слово»-ն այդ տարիներին գրում էր. «Ասորիների դեմ կատարված այդ սարսափելի իրողությունները նման են բաշխողուկների վայրագություններին»<sup>204</sup>:

Վանի նահանգապետ Ջեդեթ Բեյը, որն իր բացասական հատկանիշներով չարագործությունների, դավադրական ծրագրերի և միևնույն ժամանակ կեղծելու, խաբելու արհեստի մեջ հմտացած մեծ վարպետ էր, ունի 8 հազար մարդուց բաղկացած «մագործների գունդ», որն իր «գործն» էր անում: Ջեդեթը կազմակերպում էր այնպիսի ջարդեր, որոնք իրենց նմանը չէին ունեցել: 1915 թ. գարնանը թուրքերը Հաբյարի շրջանում մի հրեշավոր ջարդ կազմակերպեցին և կոտորեցին մոտ 60 հազար ասորիներ<sup>205</sup>:

<sup>198</sup> Halo T., Not Even my Name, New-York, 2000, p. 285.

<sup>199</sup> Sarafian A., US Official Documents on the Armenian Genocide, vol. I, Watertown-Massachusetts, 1993, p. 54.

<sup>200</sup> Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/. Материалы Политархива МИД Кайзеровской Германии, Е., 1995, с. 222.

<sup>201</sup> ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, ֆ. 32, թղպ. 15, գ. 2, էջ 44:

<sup>202</sup> Naayem J., op. cit., p. 26-27.

<sup>203</sup> Heinsohn G., Lexikon der völkermorde, Hamburg, 1998, p. 83.

<sup>204</sup> Кавказское слово, 17 апреля 1915, с. 8.

<sup>205</sup> Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 488:

1915 թ. «Մշակ» թերթը «Վանի կոտորածը և ինքնապաշտպանության կոտորածը» վերնագրով հոդվածում մանրամասն նկարագրելով Վանում տեղի ունեցած ջարդերը, ավելացնում էր. «Ջևհերթ Բեյը ջանք չխնայեց բնաջնջելու քրիստոնյա հայերին և ասորիներին. քարուքանդ արեց նրանց տները և նրանց փոխարեն իսլամ գաղթականներ բնակեցրեց»<sup>206</sup>: Այդ ժամանակ Հաքյարիի ասորի աշիրեթները Մար-Շիմոնի կոչով ապստամբություն բարձրացրեցին Ջևհերթ Բեյի դեմ: Թուրքական կառավարությունը, համալրելով իր զորքերը, որոնց միացան նաև տեղի քրդերը, հարձակման հրաման արձակեց: 1200 ասորի մարտիկներից բաղկացած զորքի մոտավորապես կեսը զոհվեց անհավասար մարտում:

Այս օրերը վերապրածներից մեկը պատմում էր. «Սկսվեց քրիստոնյաների սարսափելի կոտորած, որի հետևանքով զոհվեց Գևարի շրջանի 30 գյուղերի գրեթե ողջ բնակչությունը: Եթե ոռուները օգնեն, ապա ասորիները կփրկվեն, իսկ եթե ոչ՝ ապա բոլորը կկոտորվեն, քանի որ նրանք չունեն ո՛չ բավականաչափ զենք, ո՛չ էլ փամփուռչտ»<sup>207</sup>: Պետք է նշել, որ անգամ այսպիսի պայմաններում, առանց ոռուսական զորքի օգնության, ասորիները 14 կատարյալ հաղթանակներ տարան թուրքերի նկատմամբ<sup>208</sup>:

1915 թ. ապրիլի 12-13 թուրքերը հարձակվեցին Դարման և Կողպանց գյուղերի վրա, ուր հավաքվել էին Լիմ, Ջարանց, Սևան, Ոսկիբակ, Պախեզիկ և ասորական էրմանց գյուղերի բնակիչները թվով մոտ 3 հազար հոգի: 70 զինված մարտիկներ դիմադրանքներ և կարողացան ժողովրդին անվտանգ քաշել Վարազա լեռը:

1915 թ. ապրիլի 19-ին քրդերի և ասորիների միջև երկարատև և անվերջանալի մարտերը ընթացան, որոնց ընթացքում հարյուրավոր զոհեր եղան:

1915 թ. հունիսի սկզբին ասորիների զանգվածային կոտորածներ տեղի ունեցան Վանի հյուսիսային մասում, Թիմարում և Թհումում: Քոչանիսը ավերվեց քրդերի կողմից: Հրդեհվեց պատրիարքարանի շենքը: 17 հազար ասորիներ կոտորվեցին<sup>209</sup>: Սեպտեմբերի 30-ին, երբ Ջուլամերկի փրկված նեստորականները հասան Սալմաստ, պատմում էին, թե ինչպես 30-35 հազար ասորիներ, այդ թվում նաև Մար-Շիմոնը, կարողացան փախչել լեռներ և ազատվել սպանդից:

Այդ նույն ժամանակաշրջանում թուրքերը կոտորած են կազմակերպում Մոսուլի վիլայեթի Փերվարիի 40 ասորական գյուղերում:

Գյուղերից 17-ը լիովին հողին հավասարվեցին, տեղի ասորիները բռնի կերպով մահմեդականացվեցին<sup>210</sup>:

Բազմաթիվ ասորիներ, թողնելով ամեն ինչ, փախչում էին, միայն թե թշնամու ձեռքը չընկնեին. «Պետք է պատմել, - գրում էր Յ. Լեփսիուսը, - թե ինչպես թուրքերը Վան քաղաքի դարպասների մոտ, գլխավոր փողոցներից մեկում կախաղան բարձրացրին բազմաթիվ անմեղ ասորիների: Իսկ երբ նրանցից ոմանք փորձեցին զենքի դիմել և պաշտպանվել, բոլորն էլ ձերբակալվեցին և սպանվեցին: Կուզեմ լուռությամբ անցնել այս զարհուրելի իրողության վրայով: Վանի, Սալմաստի, Ումիայի և Մաուջբուլաղի հայերի ու ասորիների միջև բնավ խտիր չդրին»<sup>211</sup>:

Ականատեսի վկայությամբ՝ Հաքյարիում 70 հազար ասորի ոչնչացվեց. նրանց մի մասը կոտորվեց, մյուս մասը մահացավ քաղցից, իսկ մեկ այլ մասը՝ զոհվեց մահմեդականների դեմ մղած կոտորածներում<sup>212</sup>:

1915 թ. ապրիլի 11-ին Խառաշիկ գյուղի 40 տղամարդիկ, որոնք Խոշ-Գյատուկի /Չուխ-Գյատուկ/ գծով շտապում էին դեպի Վան, հանդիպեցին քրդական հրոսակներին և բոլորն էլ սպանվեցին:

1915 թ. մայիսի 10-ին Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան բարոն Հ. Վանգենհայմն /1912-1915/ իր երկրի արտաքին գործերի նախարարությանը գեկուցում էր, որ «Վանի վիլայեթում ժողովուրդն արդեն մի քանի օր է, ինչ ոտքի է կանգնել: Հայերը հարձակվել են Վանի շրջակա թուրքական գյուղերի վրա: Թուրքական զորամասն արդեն կորցրել է 300 զինվոր: Բաշկալեում ոտքի են կանգնել նեստորական ասորիները: Նրանք դիրքեր են գրավել Ջյուլեմերիքում /Ջուլամերկ - Ա. Խ./»<sup>213</sup>:

Թուրքերը հեռագիր փոխանցելու պատրվակով Գևարի 60 խիզախ ասորիների Ումիա են ուղարկում, որոնց սակայն քրդերը սահմանի մոտ արգելափակելով առանց ջրի ու հացի պահում են այնքան ժամանակ, մինչև վերջիններս սովամահ են լինում:

1915 թ. հունիսի 30-ին Կովկասի փոխարքայության երկրորդ քաղաքական բաժանմունքի չինովնիկների գաղտնի հեռագրում ասվում էր, որ ասորական պատրիարքն օգնության է կանչում ընդդեմ թուրքերի, որոնք սպառնում են կոտորել ողջ քրիստոնեական բնակչությանը Բոհթանում: Մի որոշ ժամանակ անց, Բոհթանում, իրոք, տեղի է ունենում կոտորած, որին զոհ են գնում հազարավոր անմեղ ասորիներ:

<sup>206</sup> «Մշակ», N 121, 6 հունիսի 1915:

<sup>207</sup> Արղումանյան Մ., նշվ. աշխ., էջ 488:

<sup>208</sup> ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ, ֆ. 57, թղպ. 7, գ. 1, էջ 10:

<sup>209</sup> Halo T., op. cit., p. 284:

<sup>210</sup> Bryce J. V., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, Beirut, 1979, p. 162.

<sup>211</sup> Լեփսիուս Յ., նշվ. աշխ., էջ 113, 117:

<sup>212</sup> Naayem J., op. cit., p. 275.

<sup>213</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 42-43.

1915 թ. ամռանը թուրքերն ու քրդերը հարձակվեցին Ջելուխ ասորական Մար-Ջայա գյուղի վրա, կողոպտեցին այն և սպանեցին տեղի բնակչությանը: Թշնամին մտավ նաև եկեղեցի և ամբողջովին թալանեց այն: Ասորիները փորձեցին պատասխան հակահարված տալ, սակայն թշնամու կատաղի գրոհներին դիմանալը շատ դժվար էր: Միակ ելքը գյուղից հեռանալն էր, որն էլ ուղեկցվեց մարդկային ծանր կորուստներով:

Այդ նույն ժամանակաշրջանում Կուբանի կազակական զորքը, շարժվելով հայ զորավար Անդրանիկի հետքերով, հասավ ասորաբնակ վայրեր: Կազակներից Ֆ. Ելիսեևը վկայում էր. «Մենք կանգ առանք ասորական Միկունիս գյուղի մոտ: Ամենուրեք սպանվածների դիակներ էին: Միայն մի խումբ կանայք և երեխաներ էին ողջ մնացել, որոնք փախչում էին դեպի հյուսիս ուսուսական զորքին ընդառաջ»<sup>214</sup>: Կազակին շատ է գարմացնում այն հանգամանքը, որ ասորիների այդ խմբի մեջ չեն հանդիպում ինչպես արական սեռի ոչ մի ներկայացուցիչ, այնպես էլ՝ երիտասարդ աղջիկներ: Ասորի ծեր կանայք նրան բացատրում են, որ քրդերը կտրում են 10 տարեկանից բարձր տարիքի տղամարդկանց կոկորդները, իսկ աղջիկներին՝ տանում իրենց հետ, ինչի համար էլ բոլոր երիտասարդ ասորիները փախել են լեռներ:

1915 թ. հոկտեմբերին պատրիարք Մար-Շիմուն Բենիամինը, այցելելով Սալմաստի շրջանի Խոսրովա կամ Հուսրավա ասորական գյուղը, զրույցներից մեկի ժամանակ պատմում էր. «Իմ ժողովրդի ներկայացուցիչները միայն Հաբյարի լեռներում կազմում են 80 հազար մարդ: Քրդական ցեղերի նման նրանք էլ հարկ չէին վճարում և ոչ էլ զինվորական ծառայություն էին կատարում: Թուրք պաշտոնյաները մեր բնակավայրերը չեն այցելում: Քրդերի հարձակումներից պաշտպանվելու համար ունենք 20 հազար մարտիկ: Մեր ցեղախմբերը զինված էին ամենահին ժամանակներից սկսած, և տաս տարեկան տղաները արդեն մարզված են զենք գործածելու:

Սահմանադրության հռչակումից հետո մենք խոստացանք հավատարիմ լինել կառավարությանը, որն էլ իր հերթին անվտանգություն երաշխիք խոստացավ: Ջենքի մի մասը ծախեցինք: Ավելին, մեզ հավաստիացրեցին, թե քրդերին նույնպես զինաթափել են: Այդ պատճառով էլ ժողովուրդը անպաշտպան մնաց: Թուրքերը որոշեցին մեզ էլ հայերի նման իսպառ վերացնել: Մի կողմից իրենք հարձակվեցին, մյուս կողմից զրդեցին քրդերին հարձակվել: 1915 թ. ապրիլի 20-ին ուսուսների կողմից Դիլմանի գրավումից հետո, Հալիլ բեյը հեռացավ մեր շրջանների միջով, և մեր վիճակն ավելի ծանրացավ: Մայիսի վերջերին Մոսուլի թուրքական զորամիավորումները ներխուժեցին մեր շրջան: Այդ ժամանակ էլ մեր գյուղերում սկսվեցին պետականորեն ծրագրված կոտորածներն ու ավերածությունները: Արոտավայրերը թողեցինք և բարձրացանք Բեթաշինի լեռները: Ուտելիքը գնալով պակասում էր, և քաղցը ստիպեց մարդկանց իջնել ներքև:

<sup>214</sup> Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001, с. 108-109.

Բացի այդ, համաճարակ սկսվեց: Մարդկանց միակ ելքը շրջափակումը ճեղքելն ու Իրանի սահմանն անցնելն էր»<sup>215</sup>:

1915 թ. հունիսի 30-ին Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյսը Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուին գրում էր. «Թուրքերը քրիստոնյաներին ոչնչացնելու մեկ այլ ձև էլ են գտել. դա տարագրությունն է: Շաբաթ օրը, հունիսի 28-ին, հրապարակավ հայտարարվեց, որ բոլոր հայերն ու ասորիները հինգ օրվա ընթացքում պետք է լքեն քաղաքը»<sup>216</sup>: Այսպես սկսվեց հայերի և ասորիների տարագրությունը Խարբերդից: Այն շարունակվեց մինչև սեպտեմբերի 26-ը, երբ վալին հայտարարեց, որ այսուհետև քրիստոնյաները չեն տարագրվելու: Մարդիկ հավատացին և սկսեցին դուրս գալ իրենց ապաստարաններից: Սակայն, շատ չանցած, նոյեմբերի 4-ին, ոստիկանությունը հրամայեց ստացավ ձերբակալել շուկայում գտնվող բոլոր հայերին ու ասորիներին: Լ. Դեյսի վկայությամբ՝ «երեք ժամ հետո քաղաքի բանտում ավելացան ևս 500 անմեղ բանտարկյալներ»<sup>217</sup>:

Ասորիների տեղահանությունների մասին վկայում են նաև գերմանական արխիվային փաստաթղթերը, ուր ասվում էր, որ հայերից բացի տեղահանվեցին ոչ միայն նեստորական, այլև՝ հակոբիտյան ասորիները:

1915 թ. հուլիսին Բիթլիսից Վրաստան հասած գաղթականները պատմում էին, որ «իրենց վիլայեթում բոլոր քրիստոնյաներին մեկ-մեկ կանչում էին ոստիկանություն և պահանջում, որ հանձնեն զենքերը, իսկ չենթարկվելու դեպքում՝ սպառնում էին սպանել: Այնուհետև 50-60 հոգու միասին կապելով՝ գցում էին Վանա լիճը»<sup>218</sup>:

1916 թ. մարտի 6-ին Բոհլթանում ասորիների կոտորածների նոր ալիք սկսվեց: Այս ջարդերից փրկված մարդիկ ստիպված էին լքել իրենց տները և հեռանալ:

1916 թ. նոյեմբերին «Նյու-Յորք թայմս»-ը գրում էր. «1915 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Թուրքիայի տարածքից դեպի տարբեր ուղղություններ գաղթեցին 30 հազար ասորիներ»<sup>219</sup>: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Խոյ էին հասել 4300, իսկ Սալմաստ՝ 10 հազար ասորիներ, որոնք այստեղ մնացին մոտ 15 ամիս»<sup>221</sup>:

1917 թ. Վանի նահանգի Մոկա գավառի կոտորածից փրկված և Սալմաստ հասած մի քանի հայեր բացատրագրեցին զրեւ այդ շրջանի հայերի և ասորիների վիճակի, քրդական ցեղապետների հետ ունեցած

<sup>215</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 31.

<sup>216</sup> Девис Л. А., Провинция бойни, Е., 2000, с. 204.

<sup>217</sup> Նույն տեղում, էջ 255.

<sup>218</sup> Микаелян В., указ. соч., с. 222.

<sup>219</sup> «Մշակ», N 163, 28 հուլիսի 1915:

<sup>220</sup> Kloian R. D., op. cit., p. 188-189.

<sup>221</sup> ՎՊԿՊԱ, ֆ. 13, ց. 27, գ. 4552, թ. 1103:

իրենց փոխհարարերու թյուկներին, օսմանյան իշխանությունների գործադրած ազգային և կրոնական հալածանքների ու դաժանությունների մասին<sup>222</sup>:

Կոտորածներից համեմատաբար գերծ մնացին Իրանի սահմանին մոտ գտնվող Հաքյարի լեռնային շրջանի ասորիները: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այստեղ կար 300 հազար բնակչություն, որից 100 հազարը ասորիներ էին, իսկ 15 հազարը հայեր<sup>223</sup>, իսկ մնացածը՝ մահմեդականներ: Թուրքերը փորձում էին աշխարհին ցույց տալ, թե իբր հնազանդ ժողովրդին, չնայած նրանց քրիստոնեական պատկանելությանը, չեն վնասում: Սակայն իրականում լեռնցի այդ ասորիները բավականին ռազմաշունչ էին և երկյուղ էին ներշնչում թուրքերին: Թեպետ չնայած այս ամենին, նրանք էլ ի վերջո ենթարկվեցին կոտորածների: 1915 թ. մտնանք քրդերը գրոհեցին այս շրջանի գյուղերը, սպանեցին և կողոպտեցին մարդկանց չխնայելով նույնիսկ կանանց ու երեխաներին:

Բնական է, որ այս դեպքերից հետո ասորիների մի մասը, ուզում էր ուսական բանակի հետ գաղթել ուսական տիրույթներ, սակայն մյուս մասը՝ ձգտում էր մնալ տեղում՝ փորձելով «լեզու գտնել» Բ. Դոան հետ: Իսկ ասորիների մի մեծ զանգված՝ մոտ 60 հազար մարդ, Հաքյարի բարձունքներից շարժվեց դեպի Իրան, որտեղ ուսանների առաջապահ ջոկատները նրանց գնեք տվեցին և վարժեցրին ռազմական կարգ ու կանոնին: Նրանց մեջ աչքի էր ընկնում ասորիների ռազմական առաջնորդ լեգենդար Աղա Պետրոսը /Պետրոս էլյուտ/, որը հիանալի գիտեր ուսներեն և մարտավարական իր խոր գիտելիքները ցուցաբերեց Հաքյարի լեռներից դեպի Իրանի տարածք իր ժողովրդի աքսորի, ինչպես նաև քրդերի դեմ պատժիչ գործողությունների ժամանակ: Ասորիների մեկ այլ զանգված էլ Հաքյարի լեռներից գաղթի ճանապարհ բռնեց դեպի Միջագետքի Բա կուբա քաղաքը:

1915 թ. ապրիլի 1-ին Բաղդադի ամերիկյան հյուպատոս Չ. Բրիսսելը Հ. Մորգենթաուին հեռագրում էր. «Բաղդադում և Մոսուլում ձերբակալվել են բազմաթիվ ասորի քաղաքականներ: Քրիստոնյաների վիճակն այստեղ շատ ծանր է»: 1915 թ. օգոստոսի 29-ին նույն հյուպատոսի հաղորդագրությունում ասվում էր. «Այստեղ վիճակը գնալով բարդանում է: Տերություն ամենատարբեր անկյուններից Մոսուլ են քշվում հայեր և ասորիներ, որոնք այստեղ կամ սպանվում են կամ էլ գոյատևում են անօթևան և անսնունդ: Ես քիչ առաջ տեղեկացա, որ ասորիներին կողոպտելու և սպանելու դեպքեր են արձանագրվել: Նրանցից երեքը բանտարկվել են: Մոսուլի վիլայեթի արևելյան մասում քրդերի և նեստորական ասորիների միջև կատաղի պայքար է ընթանում: Ասորիների կողմից մեծ զոհեր կան: Այստեղ

<sup>222</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 245, թթ. 1-7:  
<sup>223</sup> Alichoran J., op. cit., p. 370.

խոսում են, որ այս կատաղի մարտերը հիշեցնում են Վանում տեղի ունեցած կոբիվները և ավերածությունները»<sup>224</sup>:

Հատկանշական է, որ երբ 1916 թ. ամռանը ուսական կառավարությունը հայտարարեց այն մասին, որ գաղթականները պետք է վերադառնան իրենց լքած վայրերը, Թիֆլիս հասած ասորիների մի մասը թվով 1500 մարդ, որոնցից 500-600-ը լավ զինված մարտիկներ, որոշեցին ճանապարհ բռնել դեպի Ջուլիստանի շրջանի հարավում գտնվող Փինիանիչ գավառակը՝ Չալ կենտրոնավայրով: Այստեղ ասորիների գաղթելուց հետո հաստատվել էր քուրդ աշիրեթապետ Սադի աղան իր 3 հազար բարեկամներով: Չալ հասնելուց հետո ասորիները երկու կոբիվ տվեցին քրդերի դեմ՝ նրանց քշելով դեպի Ամաղիայի կազա<sup>225</sup>:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ հայերի և ասորիների աքսորի ճանապարհին տեղացի շատ ասորիներ ամեն ինչ արել են, որպեսզի ինչ-որ չափով թեթևացնեն տարագիրների տառապանքները: Այսպես՝ ցեղասպանության ականատես նշանավոր հրապարակախոս Արամ Անտոնյանը գրում էր. «Տեր-Ջորում կային հարուստ ասորիներ, որոնք այստեղ ունեին իրենց նեստորական և հակոբիյան եկեղեցիները: Այդ ասորիների մեջ Հայ գաղթականների նկատմամբ շատ առատաձեռն գտնվեց Գևարգի Սուքիարը, որն ամեն ինչ անում էր նրանց հոգսը թեթևացնելու համար»<sup>226</sup>: Այդ դժոխակ օրերը վերապրած Պ. Կարադեմիրճյանը վկայում էր. «Բազմաթիվ տառապանքներից հետո ես հայտնվեցի ասորիներով բնակեցված Մինջարի բնակատեղիում, որտեղ արդեն ապահովության մեջ էի»<sup>227</sup>: Նույնն է հաստատում նաև Տրապիզոնի թեմի առաջնորդ Հովհ. Արք. Նազլյանը. «Հիշատակության են արժանի Մոսուլի ասորի կաթոլիկներ Մըթրան Հապրան, Խաս Հաննա Վեհպեն և քաղաքացի ասորիների Պատրիարք Ջոզեֆ էմմանուել Թոմասը, իրենց անձնվիրությունները՝ մեր գաղթականներին օգնելու համար»<sup>228</sup>:

Այսպիսով, 1915 թ. հայերի զանգվածային կոտորածներին ու բռնազաղթին զուգընթաց, դեպի Տեր-Ջորի և Միջագետքի անապատները տարագրվեցին և կոտորվեցին նաև բազմաթիվ ասորիներ: Թուրքական իշխանությունների կողմից կիրառված ոչնչացման գլխավոր միջոցներից մեկն էլ, անկասկած, իրենց զոհերին դի-

<sup>224</sup> Sarafian A., op. cit., vol. I, p. 44-45, 62-63.  
<sup>225</sup> «Վան-Տոսպ», N 35, 24 հուլիսի 1916:  
<sup>226</sup> L'Extinction des déportés Arméniens Ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie /1915-1916/, La deuxième phase du génocide, Paris, T. II, 1998, p. 37-38.  
<sup>227</sup> Նույն տեղում, էջ 214:  
<sup>228</sup> Նազլիան Յով., նշվ. աշխ., էջ 396, 620:

տավորյալ սովահարութեան և ծարավահարութեան մատնումն էր: Ասորի տարագիրները քարավանները մինչև իրենց նոր «քնակավայրերը» հասնելը հետզհետե նոսրանում էին նաև այն պատճառով, որ իրենց ուղեկցող զինվորները դիտավորյալ առաջ էին շարժվում անբնակ և անջրդի վայրերով, հաճախ չէին թույլատրում մոտենալ ջրի աղբյուրներին կամ վաճառում էին այդ իրավունքը մեծ գումարի դիմաց: Ընդ որում, սովահարութեան պատճառով մահացութեան դեպքերը սովորական երևույթ էին ինչպես գաղթի ճանապարհին, այնպես էլ ժամանակավոր կայանման վայրերում, ինչպես, օրինակ՝ Հյուսիսային Միջագետքում:

Այսպիսով, ինչպես տեսանք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարութեան ներշնչումով ու ղեկավարութեամբ անագորույն դաժանութեամբ կոտորածների ենթարկվեց նաև Մերձավոր Արևելքի հնագույն ժողովուրդներից մեկը՝ ասորիները: Սակայն նրանց ողբերգությունը դրանով իր ավարտին չհասավ: Աշխարհավեր պատերազմի տարիներին և նրանից հետո ասորական ժողովուրդն արյունաքամ էր լինում ինչպես եվրոպական մեծ քաղաքականութեան սադրանքների, այնպես էլ թուրք, քուրդ, իրանցի բռնավորների կազմակերպած կոտորածների ու հալածանքների հետևանքով:

## Բ/ Ասորիների ջարդերն Իրանի թյուրքաբնակ վայրերում

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ասորիների ջարդեր իրականացվեցին նաև 1914 թ. նոյեմբերի 2-ին իրեն չեզոք երկիր հայտարարած Իրանի տարածքում: Բանն այն էր, որ գերմանական և թուրքական հրամանատարութիւնների մշակած ծրագրում ռազմական գործողութիւններ էին նախատեսվել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան և Թուրքիան ուզում էին օգտագործել որպես միջանցք դեպի Բաքվի նավթային շրջանները և այնուհետև Միջին Ասիան գրավելու համար: Ուստի Հյուսիսային Իրանը ևս վերածվեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողութիւնների թատերաբեմի:

Թուրքիան նույնիսկ չէր էլ մտել պատերազմի մեջ, երբ թուրքական հրամանատարութիւնն իր գործերը տեղակայեց Վանի, Սարաջի, Բաշկալեի և Շամղինյանի տարածքներում: Ի պատասխան դրան, ռուսական հրամանատարութիւնը 1914 թ. նոյեմբերի 20-ին գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխավորութեամբ զորքեր մտցրեց Իրան: Ռազմական հաջող գործողութիւնների արդյունքում ռուսական բանակը շուտով գրավեց Խոյը, Ուրմիան և Թավրիզը: Իրանական կառավարութիւնը Մոսթոուֆի-օլ-Մամալեքի գլխավորութեամբ, որն իշխանութեան գլուխ էր եկել 1914 թ. օգոստոսին, իր դժգոհութիւնը հայտնեց ռուսական զորքերի Իրան մտնելու կապակցութեամբ:

Դեռ նախքան ռուսական զորքերի Իրանի տարածք մտնելը, 1914 թ. նոյեմբերի 14-ին Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեդենսկին հեռագրեց, որ թուրքերը նպատակ ունեն գրավել Ուրմիայի շրջանը՝ այստեղից երկու ուղղութիւններով՝ Խոյ-Ջուլֆա և Մուղղուզ-Մաուջբուլաղ, հետագայում թավրիզի շրջան դուրս գալու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարութիւնը դիմեց այնպիսի մի հակաթուրքական ուժի աջակցութեանը, որպիսին Ուրմիայում և նրա շրջակայքում ապրող 70 հազար ասորիներն էին:

Ինչպես Օսմանյան Թուրքիայի տարածքի, այնպես էլ Իրանում ապրող հպատակ ասորիների վիճակը շարունակում էր մնալ անմխիթար: Այդ առիթով Կովկասի փոխարքայի օգնական Օւլովն իր գեկուցագրերից մեկում նշում էր. «Ուրմիայի ու Սալմաստի ասորիների դրութիւնն անելանելի է, և, ընդհանրապես, ներկա պատերազմում ասորիները հույսով են նայում Ռուսաստանին՝ նրանից սպասելով օգնութիւն»<sup>229</sup>:

Հատկանշական է, որ դեռ 1897 թ. Իրանում հիմնվել էր ռուսական ուղղափառ առաքելութիւն, որն իր քարոզչական աշխատանքներն էր տանում ասորիների շրջանում: Ի տարբերութիւն այլ դավանանքների քարոզիչների, ռուս ուղղափառներն այս տարածա-

<sup>229</sup> Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 488:



չրջանում հասան զգալի հաջողությունների: Արդեն 1898 թ. Ուրմիայի գրեթե բոլոր նեստորական ասորիներն ընկել էին ուսուցիչական եկեղեցու ազդեցության տակ: Արդյունքում՝ 1911 թ. Սալմաստի, 1912 թ.<sup>230</sup> Թերգևարի, 1913 թ.<sup>231</sup> Սուլդուզի, 1914 թ.<sup>232</sup> Մերգևարի և Բարդոստի նեստորական ասորիների մեծ մասն ընդունեց ուղղափառություն: Այս հանգամանքն առաջին հերթին բացատրվում է նրանով, որ Իրանի ասորիները կարծում էին, թե ազգովի ուղղափառություն ընդունելուց հետո ուսանելը նրանց միայնակ չեն թողնի ընդհանուր թշնամու դեմ պայքարում:

Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցինք, ուսական հրամանատարությունն էլ իր հերթին ակնկալում էր ասորիների գործունե աջակցությունը: Եվ արդեն 1906 թ. օգոստոսին Ուրմիայում ուսական հրամանատարությունը դիմում է Մար-Շիմունին պատերազմի դեպքում օգնության խնդրանքով, ի պատասխան որի վերջինս Վանում ուսական հյուպատոս Ռ. Տերմենին խոստացել է 40 հազար զորք<sup>230</sup>:

Ասորի ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած կողմնորոշումը դուր չէր գալիս Անգլիայի կառավարող շրջանակներին: Ուստի պատերազմի նախօրյակին Մար-Շիմունի մոտ Ջուլամերկ են ուղևորվում անգլիական գաղտնի ծառայության երկու աշխատակիցներ՝ գնդապետ Լոուրենսը և մայոր Իզդին<sup>231</sup>: Նրանք ասորիներին խոստանում են զենք, գումար, ազատագրություն թուրքերից և անգամ՝ ինքնավարություն պատերազմի ավարտից հետո: Եվ այդ ամենի փոխարեն նրանք պահանջում էին ասորիների հավատարմությունը: Հոգևոր առաջնորդը մերժեց այդ խնդրանքը, կանխատեսելով, որ անգլիացիների հավանությունները բացառապես պայմանավորված են պատերազմական իրավիճակով: Մար-Շիմունի մերժումից հետո, տեսնելով, որ իրենց «առաքելությունը» հաջողություն չի ունենում, որոշ ժամանակ անց, Բաշկալի կազայի Աղբակի ասորական գյուղերում նույն մայոր Իզդին անձամբ գլխավորեց քրդական ջոկատներն ու կազակերպեց ասորիներին սպանդ:

1914 թ. հունիսի 23-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը ռազմական նախարար Սուխոմլինովին գրում էր. «Կասկած չկա, որ Թուրքիայի հետ պատերազմում մեզ էական օգնություն կարող են ցույց տալ տեղի ասորիները»<sup>232</sup>:

Հենց այդ նույն ժամանակաշրջանում, ուսական հրամանատարությունը գնդապետներ Դոկուչանևի և Անդրիևսկու գլխավորությամբ դիմում է Ուրմիայի Ասորական Ազգային Խորհրդի նախագահ դոկտոր Իշայ Բեթ-Յոնանին՝ օգնության խնդրանքով<sup>233</sup>:

Արդյունքում սկսում են կազմավորվել ասորական կամավորական ջոկատներ: Ռուսները գիտեին, որ ասորիները, քաջատեղյակ լինելով տեղանքին, կարող են իրենց օգտակար լինել: Ասորիների շնորհիվ ուսական հետախուզությունը օգտակար տեղեկություններ էր հավաքում թուրքերի ծավալած գործողությունների մասին, իսկ ուսական բանակը հնարավորություն էր ստանում դիմակայել թուրքերի և քրդերի հարձակումներին:

1914 թ. սեպտեմբերին Ուրմիայում կազմավորվեցին ասորական զինական ջոկատներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 11-ի: Դրանցից ինը /մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը - Ա. Խ./ նախատեսված էին ասորական գյուղերի պաշտպանության համար: Պահեստային զորքի կազմում կար ևս երկու ջոկատ:

Կովկասյան ճակատի բացվելուն պես ասորական ջոկատները պետք է դուրս գային իրենց գյուղերից և գործեին ուսական բանակի հետ մեկտեղ: Այդ նպատակով ասորական պահեստային ջոկատներից կազմավորվում է ուժեղացված մի վաշտ, որը տեղակայված էր Ուրմիա լճի ափին գտնվող Չարբաշ բնակավայրում: Պետք է նշել, որ ուսական հրամանատարությունը, հաշվի առնելով ասորական ջոկատների ռազմական կարողությունները, նրանց էր հանձնարարում իր գրաված տարածքների անվտանգության պահպանումը:

Ինչպես արդեն նշեցինք, իրանական իշխանությունները թշնամական դիրք էին բռնել ուսական զորքերի նկատմամբ՝ իրենց տարածք մտցնելու կապակցությամբ և այդ քայլը գնահատում էին որպես չեզոքության խախտում: Նրանք թաքցնում նաև իրենց դժգոհությունը ասորական ջոկատների կազմավորման փաստի առիթով, ուստի չէին արգելում, որպեսզի Մոսուլից իրենց երկիր մտնեն թուրք-քրդական ջոկատներ՝ ուսական բանակի դեմ հարձակողական գործողություններ ծավալելու համար:

Ինչ խոսք, թուրքական բռնատիրության դեմ ազգային-ազատագրական պայքարում ասորիների մոտեցումները լիովին համընկնում էին հայ ժողովրդի ձգտումներին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Իրանի տարածքում սկսվեցին զանգվածային բռնություններ: Այստեղ հատկապես տուժեցին Ուրմիայի տարածաշրջանի ասորիները, որոնց գյուղերն ամբողջովին հրդեհվեցին և թավափեցին քրդերի կողմից<sup>234</sup>:

1914 թ. հոկտեմբերի 3-ին Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեդենսկին տեղի նահանգապետի հետ այցելում է քրդերի, թուրքերի և պարսկական խուժանի կողմից ավերված ասորական Անգար, Ալվազ և այլ գյուղեր: «Ամենուրեք, - գրում էր նա, - առկա են ջիհադի արդյունքները: Անգար գյուղում ես տեսա ասորիների հրկիզված դիակներ, որոնց փորերը խոցված էին մեծ սրածայր ցցերով: Ասորիների շինությունները հրդեհված և ավերված

<sup>230</sup> ЦГВИА, колл. микрофильмов 9 /поступл. 29/, ф. 2000, оп. 1, л. 265, л. 2.

<sup>231</sup> Гарт Л., Полковник Лоуренс, М., 1938, с. 32.

<sup>232</sup> Лазарев М. С., Курдский вопрос /1891-1917/, М., 1972, с. 296.

<sup>233</sup> Думбис М., Айсоры, «Новый Восток», N 3, М., 1923, с. 69.

<sup>234</sup> Hubbard G.E., From the Gulf to Ararat, An Expedition through Mesopotamia and Kurdistan, London, 1916, pp. 257-258.



են: Հարևան գյուղերի հրդեհը դեռ չարունակվում է: Ասորիների ընտանիքները հավաքվել էին քաղաքի մոտակա դաշտերում»:

Իսկ 1914 թ. հոկտեմբերի 24-ի հեռագրում Վեդենսկին հաղորդում էր հետևյալը. «Փախստականների հոսքը շարունակվում է: Լուրեր են շրջվում սպասվող նոր սպանդի մասին»: Մեկ օր հետո նա նշում էր, որ Թուրքիայից Իրան են անցել ավելի քան 600 փախստական ասորի<sup>235</sup>: Միայն 1914 թ. սեպտեմբերին հրդեհվեց ավելի քան 30 հայկական և ասորական գյուղ: «Հրդեհներն ուղեկցվում են դաժանությամբ», - գրում էր «Բաքու» թերթը: Միայն Քանաչար ասորական գյուղում ողջակիզվեց 200 մարդ<sup>236</sup>:

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում և Սարիղամիշի գծին գոլգահեռ/1914 թ. դեկտեմբեր - 1915 թ. հունվար/ Թուրքական զորքերը ակտիվացրեցին իրենց ռազմական գործողությունները Ուրմիայի շրջանում գործող ռուսական ուժերի դեմ: Թուրքական հարձակումներից անհանգստացած Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը կարծում էր, թե Ուրմիայի ռուսական ջոկատը, որն առանձնացված էր հիմնական զորքից, կարող է հեշտուղությամբ ոչնչացվել Թուրքերի մեծաքանակ ուժերի կողմից: Այդ իսկ պատճառով, 1914 թ. դեկտեմբերի 20-ին նա հրամայում է գնեթալ Ֆ. Չերնոզուբովին Ուրմիա քաղաքից հանել իր զորքերը և շարժվել Խոյի ուղղությամբ: Ռուսական բանակի անակնկալ ու չարդարացված այդ նահանջը ողբերգական հետևանքներ ունեցավ Իրանում բնակվող ինչպես ասորիների, այնպես էլ հայերի համար: Թուրքական զորքերը քրդական ջոկատների հետ համատեղ կազմակերպեցին ասորի և հայ բնակչության զանգվածային ջարդեր: Ավելի քան 40 հազար հայեր և 8061 /1325 տուն/ ասորիներ այստեղից գաղթում են ռուսական զորքերի հետ<sup>237</sup>: Ասորիների Ուրմիայից դեպի ռուսական սահմանները ձգվող փախստականների հոսքի մասին հյուսիսային Վեդենսկու հաղորդման համաձայն՝ այլ պատկեր է գծագրվում. «Ուրմիայից դեպի Դիլման, Խոյ, Ջուլֆա և Ռուսաստան է շարժվել 15 հազար ասորիներից կազմված գաղթականների մի զանգված, այն էլ հիմնականում կանայք և երեխաներ: «Մշակ» թերթի թղթակից Ս. Մելիքյանն, այցելելով հյուսիսային Իրան, իր հերթին գրում էր. «Մինչև մեր թավրիզ հասնելը, այստեղ արդեն իրարանցում էր սկսվել: Մենք տեսանք 40 հազարանոց ասորի գաղթականների մի հոսք, որոնք փախչում էին Թուրքերից: Դիլման չհասած՝ մեր առջև մեկը մյուսի հետևից բացվում էին անվերջանալի աղետների տեսարաններ, որոնք վերապրում էին ասորի գաղթականները»<sup>238</sup>:

<sup>235</sup> Саргизов Л. М., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е., 1979, с. 25-26.

<sup>236</sup> Վ. Գ. Գ. Ս., ֆ. 13, ց. 27, դ. 2, գ. 3361, թ. 103:

<sup>237</sup> Ա. Դ. Ս., Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, էջ 114:

<sup>238</sup> Саргизов Л. М., указ. соч., с. 46.

Ըստ Նյու-Յորքի համալսարանի արևելյան լեզուների պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ազգութամբ ասորի Ա. Յոհաննանի՝ «1915 թ. հունվարի 2-ին և 3-ին ռուսական զորքերի հետ միասին Ռուսաստանի տարածք գաղթեցին 25 հազար ասորիներ»<sup>239</sup>:

Արևիվային փաստաթղթերը, հատկապես Կովկասյան Գլխավոր Կոմիտեի հաղորդած տվյալները ցույց են տալիս, որ այս ժամանակաշրջանում Ուրմիայից, Սալմաստից և Խոյից Ռուսաստանի տարածք են գաղթել 63 հազար գաղթականներ, որոնցից 30 հազարը հայեր էին, իսկ 33 հազարը ասորիներ<sup>240</sup>:

1916 թ. փետրվարի 8-ին «Նյու-Յորք թայմս»-ը ներկայացնելով ասորիների դժնդակ դրությունը, գրում էր. «Հունվարի 12-ին Պետրոգրադ գաղթած ազգութամբ ասորի բժիշկ Յակոբ Սարգիզը պատմում էր, որ անցյալ տարվա ընթացքում ռուսական զորքերի հետ մեկտեղ Ուրմիայից հեռացան 14 հազար և շրջակա գյուղերից հազար ասորիներ: Նախքան այդ, Ուրմիայից արդեն գաղթել էին 45 հազար ասորիներ: Նրանցից շատերը մահացան ճանապարհին»<sup>241</sup>: 40 հազար ասորիներ գաղթեցին Թավրիզ, որտեղ էլ բնակություն հաստատեցին<sup>242</sup>:

Մի բան էր գաղթը խաղաղ պայմաններում, այլ բան՝ հապշտապ, թշնամուց հալածված գաղթը, այն էլ՝ ձմռան սառնամանիքներին, ձյունապատ դաշտերի և լեռների միջով: Գաղթականները քայլում էին առավոտից երեկո անտանելի ցրտի պայմաններում: Նրանց կեսը ճանապարհին մահանում էր քաղցից և հիվանդություններից: Մեծ մասը զոհ էր գնում համաճարակներին. հատկապես շատ էին երեխաների կորուստները: Այդ գաղթերի կապակցությամբ անգլիացի մի ակնադատ վկայում էր. «Իմ առաջ բացվեց մերժված մի ժողովրդի ողբերգական գաղթի ճակատագրի պատկերը. ես խոսում եմ ասորիների մասին»<sup>243</sup>:

1915 թ. հունվարի 30-ին Արևելյան Հայաստանի 10 գավառներում անցկացված հաշվառումից փոքր-ինչ կարելի է պատկերացում կազմել ասորի գաղթականների այստեղ հասածների թվաքանակի մասին: Ըստ գավառների պատկերը հետևյալն էր.

<sup>239</sup> Johannan A., The Death of Nation, New-York - London, 1916, p. 120:

<sup>240</sup> Վ. Գ. Գ. Ս., ֆ. 13, ց. 21, գ. 2584, թ. 116:

<sup>241</sup> Kloian R. D., op. cit., p. 139.

<sup>242</sup> Саргизов Л. М., Дружба идущая из глубины веков /Ассирийцы в Армении/, с. 73.

<sup>243</sup> Матвеев К. П., /Бар-Маттай/, Мар-Юханна И. И., Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968, с. 49.

| Գավառ             | Ծուխ | Գաղթական             |
|-------------------|------|----------------------|
| Երևան             | 952  | 5847                 |
| Էջմիածին          | 8    | 39                   |
| Նախիջևան          | 33   | 211                  |
| Շարուր-Դարալագյազ | 263  | 1529                 |
| Այնթապ            | 18   | 85                   |
| Կարս              | 458  | 3391                 |
| Ընդամենը          | 1732 | 11102 <sup>244</sup> |

Այսպիսով, 1915 թ. հունվարին Արևելյան Հայաստանում անցկացված միօրյա հաշվառումից տեղեկանում ենք, որ այստեղ են հասել 11102 ասորի գաղթականներ /1438 ընտանիք/, որոնք տարագրվել էին Սալմաստից և շրջակա չորս գյուղերից՝ 659 մարդ /132 ծուխ/, Ուրմիայից և շրջակա 44 գյուղերից՝ 5929 մարդ /986 ծուխ/, Արգահանի մոտակա երեք գյուղերից՝ 354 մարդ /58 ծուխ/, Սարայից՝ 96 ընտանիք, Սուլթան Սարայից՝ 4 ընտանիք, Բաշկալից՝ 13 ընտանիք<sup>245</sup>, Արջիի և մոտակա 5-6 գյուղերից՝ 1119 ասորի գաղթական /149 ընտանիք/<sup>246</sup>:

Այդ ծանր տարիներին Արևելյան Հայաստանի իշխանությունները հավասարապես հոգում էին ինչպես գաղթական հայերի, այնպես էլ ասորիների մասին: Դա օրինակ երևում է 1915 թ. հունվարին Երևանի նահանգապետի նամակից՝ հղված նույն քաղաքի հայոց հոգևոր թեմական ղեկավարությունից կից Եղբայրական օգնության կոմիտեի նախագահ Խորեն եպիսկոպոսին հետևյալ բովանդակությամբ. «Պետք է հավասար հոգալ բոլոր գաղթականների մասին, անկախ նրանց ազգային պատկանելությունից: Այդ իսկ պատճառով խնդրում եմ Ձեզ չմոռանալ նաև ասորիների մասին»<sup>247</sup>:

Հին Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի Եղբայրական օգնության կոմիտեի վիճակագրական տվյալներից տեղեկանում ենք, որ 1914 թ. դեկտեմբերի 23-ից մինչև 1915 թ. հունիսի 30-ը Սալմաստից, Խոյից, Թավրիզից և Արևմտահայաստանից՝ Աղբակից, Բաշկալից, Աբաղայից, Սարայից և Կոտուրից իրենց տարածաշրջան են հասել 7500 հայ և ասորի գաղթականներ, որոնք տեղավորվել են թվով 70 հայկական և տեղի Միագույն ասորական գյուղերում<sup>248</sup>: Գնալով

<sup>244</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 28, թթ. 80-83, 85, 88, 90 և Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией, Е., 1915, с. 30-33.

<sup>245</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 21, թթ. 6-8, 142-152, 155-250, 251-266:

<sup>246</sup> Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией, с. 62.

<sup>247</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 10, թ. 70:

<sup>248</sup> Նույն տեղում, գ. 12, թ. 1:

այդ գաղթականների թվաքանակը, բնականաբար, սկսում է աճել և հասնում է 8500-ի, որոնցից 2500-ը ասորիներ էին: 116 ասորի գաղթականներ, որոնք եկել էին Սալմաստից, Խոսրովաբադից և Ուրմիայից, տեղավորվել էին Երևանի մասնավոր տներում:

Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Սալմաստի Եղբայրական օգնության կոմիտեն 1915 թ. հայտնում էր, որ իրենք թե՛ Սալմաստում, թե՛ Խոյում, թե՛ Ուրմիայում, թե՛ Աղբակում անուշադիր չեն թողել և ասորի գաղթականներին, որոնց ընդհանուր թվաքանակն այս երեք շրջաններում հասնում է 30 հազարի: Իսկ Երևանի Եղբայրական օգնության կոմիտեն անդրադառնալով գաղթականների թվաքանակին, նշում էր. «Նրանց ճշգրիտ թվաքանակը այժմ հնարավոր չէ որոշել, սակայն մոտավորապես կարելի է ասել, որ Ուրմիայից և շրջակա վայրերից այստեղ են հասել 2725, իսկ Սալմաստից՝ 1800 ասորական ընտանիքներ»: Բոլոր այս ասորի գաղթականներին օժանդակում էին տեղափոխման, տեղավորման, նպաստ տալու և այլ հարցերում: Չնայած այդ ամենին, այդ ժամանակաշրջանում նրանց վիճակը գնալով դառնում էր աղետալի: Օրինակ, 1915 թ. հունվարի 22-ի տվյալներից իմանում ենք, որ «Դավալու գյուղ /Արարատի շրջան - Ա. Խ./ են հասել 950 գաղթականներ, որոնցից 800-ը ասորիներ էին: Դրանցից քսանն արդեն մահացել են, շատերը գտնվում են հիվանդանոցում»<sup>249</sup>:

1915 թ. հոկտեմբերից մինչև 1916 թ. ապրիլ ամիսները անգլիացիները համագործակցում էին Եղբայրական օգնության կոմիտեի հետ և որոշ միջոցներ էին տրամադրել նաև ոչ միայն Հայերին, այլ նաև ասորիներին:

Գաղթականների մի ստվար զանգված էլ Սուլթուզից, Ռիզեից և Հաբյարիի լեռներից հասել էր Թիֆլիս:

Այս ժամանակաշրջանում Օսմանյան Թուրքիայից և Իրանից գաղթած քրիստոնյաներին էր շատ հաճախ անդրադառնում Հայկական մամուլը: Օրինակ, 1915 թ. փետրվարի 21-ին «Մշակ» թերթում տպագրված «Ասորի փախստականներ» վերնագրով հոդվածում կարդում ենք. «Իրանից Թիֆլիս են հասել 2 հազար գաղթական ասորիներ, որոնք իրենց ազգի վերնախավի մնացուկներն են: Սակայն, գտնվելով ծայրահեղ վիճակում, նրանք օգնություն էին խնդրում ոչ թե իրենց համար, այլ «Հայրենիքում» մնացած 12 հազար ասորիների համար, որոնք մի կերպ ապաստան են գտել Ուրմիայի ամերիկյան քարոզիչների շենքում»<sup>250</sup>:

«Օրական հարյուրավոր մարդիկ են մեռնում, - գրում էր «Հորիզոն» թերթը: Բռնի մահից փախչում են, թշվառություն և քաղցի երեսից դանդաղ կերպով մեռնելու համար: Պետք է ջանանք նույնպես

<sup>249</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 127, թ. 115: Տե՛ս նաև նույն տեղում, գ. 18, թ. 44, գ. 27, թթ. 3-8, 34, գ. 10, թ. 7, գ. 13, թթ. 81-84, 87-88, 112, գ. 18, թթ. 27, 62, 96, 113, 121, գ. 52, թթ. 1, 8-11, 13, 23, 40-47:

<sup>250</sup> «Մշակ», № 38, 21 փետրվարի 1915:

սգնություն հասցնել նրանց, որոնք, Թուրքիայից դուրս գալ չկարողանալով հանդերձ, խուսափել են մեթոդիկ բնաջնջումից»<sup>251</sup>:

Իսկ նույն թվականի հունվարի 24-ի «Русские ведомости»-ն գրում էր, որ «Թուրքիայից և Պարսկաստանից քրիստոնյա գաղթականների հոսքը կարծես թե վերջ չունի»<sup>252</sup>: 1916 թ. հունվարին «Վան-Տոսպ» շաբաթաթերթը հավաստում էր. «Գաղթականների թշվառ վիճակը հետզհետե ողբերգական է դառնում»<sup>253</sup>:

Խուսական բանակի հեռանալուց հետո 1914 թ. դեկտեմբերի վերջին թուրքական հրոսակների մի խումբ անցավ Իրանի սահմանը և մտավ Ուրմիայի հարավում գտնվող Սաուջուլյազ բնակատեղին, որն էլ խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա բնակչության շրջանում: 98 ասորական գյուղեր հրդեհվեցին և ավերակների վերածվեցին, իսկ բնակիչները կողոպտվեցին: 500 մարդ սպանվեց, 800 կանայք և աղջիկներ թուրքերի կողմից տարվեցին անհայտ ուղղությամբ: 750 մարդ գլխատվեց ասորական Հաֆթվան գյուղում, որից հետո 5 հազար ասորուհիներ հայտնվեցին քրդական հարեմներում:

Ասորական ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Մար-Իրիան հոգևորականների հետ աքսորվեց: Հետագայում հրաչքով փրկված և Մոսկվա մեկնած այդ անձնավորությունը վկայում էր. «Ես ականատես եղա ասորական Տակարդվիլ գյուղի բնակչության կործանմանը: Այդ գյուղը գտնվում էր Ուրմիա լճի ափին, և ցամաքից թշնամու հարձակումից հետո իմ ազգի 300-400 կանայք գերադասեցին ջուրը նետվել և խեղդվել»<sup>254</sup>:

Սալմաստում 1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թ. փետրվարին ընկած ժամանակաշրջանում, ականատեսների վկայությամբ՝ թուրքերի կողմից սպանվեց 64 ասորի, 19-ը՝ անհայտ կորան»<sup>255</sup>:

1915 թ. ապրիլի 29-ին «Նյու-Յորք թայմս»-ը տպագրել էր Թավրիզի միսիոներական հիվանդանոցի տնօրեն Վ. Վաննեմանի իր կնոջն ուղարկված նամակը, որտեղ նա գրում էր. «Այս դեպքերը տեղի են ունեցել ուսական գործերի Սալմաստ հասանելուց 1-2 օր առաջ: Տաս օր առաջ քրդերը թուրքերի հետ միասին Սալմաստում հավաքեցին հայ և ասորի տղամարդկանց, որոնցից 400-ին ուղարկեցին Խոսրովա, իսկ մյուս 400-ին՝ Հաֆթվան: Նրանցից և ոչ մեկը ողջ չմնաց»<sup>256</sup>:

1915 թ. հունվարին ոստիկանական մի ջոկատ Քաչալի խանի գլխավորությամբ շրջապատեց Ուրմիայի ամենամեծ ու ամենահարուստ ասորական Գուլփաշան գյուղը, որտեղ ապրում էին 300

<sup>251</sup> «Հորիզոն», 20 դեկտեմբերի 1915:

<sup>252</sup> Микаелян В., указ. соч., с. 171.

<sup>253</sup> «Վան-Տոսպ», N 28, 5 հունիսի 1916:

<sup>254</sup> «Մշակ», № 223, 10 հոկտեմբերի 1915:

<sup>255</sup> Ավագեանց Ա., Կոտորածը Սալմաստում, Թիֆլիս, 1915, էջ 24:

<sup>256</sup> Kloian R.D., op. cit., p.11.

ծուխ՝ շուրջ 2500 ասորի բնակչություն, և քարուրանդ արեց այն: Բոլորը, բացի մի քանի հարյուրի հասնող ասորիներից, սպանվեցին»<sup>257</sup>: Գուլփաշան և Չահար-Գիվջան գյուղերի ասորի մեծահարուստներ Եուսուֆը և Աբդիշոն 5 հազար թուման էին վճարել Գառնի աղային՝ իրենց գյուղերը թուրքերի ոտնձգություններից գերձ պահելու համար: Սակայն դա չփրկեց ասորի բնակչությանը: Ուրմիայում ամերիկյան փոխհյուպատոս, ինչպես նաև բողոքական քարոզիչների ղեկավար Վ. Շեդդը մարտի 1-ի նամակում պատմում էր. «Գուլփաշանը վերածվել է ավերակների: Գյուղի աչքի ընկնող ասորի տղամարդկանց գիշերը գնդակահարեցին գերեզմանոցում: Կանայք և աղջիկները բռնաբարվեցին թուրքերի կողմից: Մի քանի ժամվա ընթացքում ավելի քան 800 մարդ սպանվեց»: Դոկտոր Շեդդը մի խնդրագիր է ուղարկում ամերիկյան հյուպատոս պրն. Փադդոքին, որպեսզի վերջինս այցելի Ուրմիա և անձամբ տեսնի այդ եղեռնագործությունը: Հյուպատոսը միայն կարողանում է հեռագրեր ուղարկել հնարավոր բոլոր վայրերը օգնության խնդրանքով:

1915 թ. «Մշակ»-ն «Իսկապես դժոխք» վերնագրով հոդվածում գրում էր. «Ուրմիան արդեն այն ուրախ քաղաքը չէ. կյանքն այստեղ մեռած է, և ավերակներն են ծածկել ամեն կողմ: Թուրքերն ու քրդերը կործանել են այստեղ ոչ միայն հարուստ հայերի և ասորիների տները, այլև ուսական հյուպատոսարանը և զինվորների կացարանները»<sup>258</sup>:

Նույնը պատմում էր նաև Ֆրանսիական քարոզիչ դոկտոր Ռ. Լաբարեն 1915 թ. մարտի 12-ին իր մորը գրած նամակում. «80 ասորի տղամարդ պապաստանել էին Ֆրանսիական քարոզիչների մոտ: Քրդերը կարողացան հայտնաբերել վերջիններս և սպանել»<sup>259</sup>: Պատմելով մահմեդականների կատարած վայրագությունների մասին Ռ. Լաբարեն շարունակում էր. «Բոլոր կանանց անխտիր բռնաբարեցին. դա ծրագրի կանխամտածված մասն էր կազմում»:

Գուլփաշանից բացի, կոտորածներ տեղի ունեցան նաև ասորական Գյոզթափե, Ադա, Խոսրովա, Հաֆթվան և այլ գյուղերում. ավերվեցին տեղի դպրոցներն ու եկեղեցիները: Խոսրովա գյուղում, օրինակ, քրդերը մի տեղ հավաքելով ասորի բնակչությունը, այդ թվում նաև այն գաղթականներին, որոնք այստեղ էին հասել շրջակա գյուղերից, մոտ 7 հազար մարդ, բոլորին կոտորեցին: Այստեղ մի այգու մեջ հարյուրից ավելի կուտակված դիակներ են հայտնաբերվել: Ականատեսներից մեկը վկայում էր. «Մի պատի տակ ես տեսա հինգ դիակ, որոնց միասին կապել էին, խողխողել և պատի փլցրել նրանց վրա»<sup>260</sup>: 300 մարդ ողջակիզվեց Նազլի-Չայի ափին գտնվող Ադա

<sup>257</sup> «Մշակ», № 55, 14 մարտի 1915:

<sup>258</sup> «Մշակ», № 41, 25 փետրվարի 1915:

<sup>259</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 32.

<sup>260</sup> Ա. Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, էջ 121:

/կղզի/ գյուղի նեստորական եկեղեցում<sup>261</sup>: Նույնը կա-տարվեց Գյոգթափե գյուղում. վանքում ապաստանած 70 ասորիների հրկիզելուց հետո, գյուղի 60 պաշտպանների ձեռքերը կապեցին և գնդակահարեցին: 200 կանանց տարան թուրքական հարեմներ: Գյոգթափեի հերեզմանները լցված էին դիակներով<sup>262</sup>: Մոտակայքում գտնվող իմանիշա գյուղում, ուր բնակվում էին 50 տուն հայեր ու ասորիներ, թուրքերը ոչ մի քրիստոնյայի չխնայեցին: Այս նույն ժամանակամիջոցում քրդերը մտան Փաթավուր ասորական գյուղը, ավերեցին այն՝ սրի քաշելով տեղի բնակչությանը:

1915 թ. ապրիլի 20-ին ուսուցիչ կողմից Դիլմանի գրավումից գազազած թուրքերը մոտակա 20 ասորական գյուղերի բնակիչներին սրի քաշեցին: Այստեղ, մի քանի հարյուր ասորի կանանց մերկացնելով՝ հանեցին կենտրոնական փողոց: Նրանց տրվեց մեկ ժամ ժամանակ որոշում կայացնելու՝ փոխում են իրենց կրոնը, թե՛ ոչ: Ականատեսի վկայությամբ Դիլմանի կենտրոնական փողոցով հոսում էր այդ սպանված կանանց արյունը<sup>263</sup>:

Սառըջուրը կատաղի մարտեր ծավալվեցին ասորիների և քրդերի միջև: Սպանդից փրկվելու միակ ելքը գաղթն էր. բազմաթիվ մարդիկ բռնեցին աքսորի ճանապարհը: Սկսվեց գաղթը դեպի Ջուլֆա: Ջուլֆայի ուսուցիչ հյուսիսային կիրասնովը մի խնդրագիր ուղարկեց իր երկրի կառավարությանը՝ 15 հազար ասորի գաղթականներին փրկելու հույսով<sup>264</sup>: Մի քանի օրերի ընթացքում գաղթականների թվաքանակը սկսեց աճել. Ջուլֆա էին հասել մոտ 44 հազար գաղթականներ, որոնցից 20 հազարը Թավրիզի, Նոյի, Սալմաստի և Ուրմիայի ասորիներն էին<sup>265</sup>:

1915 թ. ապրիլի 26-ին «Նյու-Յորք թայմս»-ը մի հոդված տպագրեց «Քրիստոնյաների մեծ գաղթը» վերնագրով. «20-30 հազարի չափ նեստորական ասորիներ և հայեր զանգվածաբար գաղթեցին Իրանական Ադրբեջանից: 1500-ից ավելի մարդիկ կոտորվեցին, 2 հազարի չափ՝ մահացան հիվանդություններից: ...Գաղթողների մեջ էր ազգութային ասորի իսահակ Յոնանը, որը, պատմելով իրենց կրած տառապանքների, զոհերի և անտանելի դրուժյան մասին, ավելացրեց, որ օրեկան քսան մղոն քայլելուց հետո վիճակն այնքան անտանելի էր, որ թվում էր, թե ողջները նախանձում էին մեռածներին»<sup>266</sup>:

Հատկապես ծանր էր այն մարդկանց դրուժյունը, ովքեր չէին կարողացել, կամ էլ չէին ցանկացել գաղթել:

22 հազար ասորիներ պատսպարվել էին ամերիկյան և ֆրանսիական քարոզիչների շենքում: Ուրմիայի հիվանդանոցի տնօրեն Յա. Սարգիզի վկայությամբ, ուսուցիչ հեռանալուց հետո հինգ ամսվա ընթացքում իրենց տարածաշրջանում մահացան 8500 ասորիներ, որոնցից 1500-ը սպանվեցին, իսկ մնացածները՝ մահացան քաղցից և ցրտից<sup>267</sup>:

Իսկ ամերիկյան քարոզիչ Ֆ. Ն. Ջեսսուփը 1915 թ. մարտի 17-ի իր նամակում գրում էր. «Սովից և հիվանդություններից ամեն օր մահանում է 10-15 մարդ: Հետագայում նրանց թիվը հասավ 40-ի: Նեստորական ասորիների այս դժբախտությունները մեր առաքելություններն են: ...Ասորական Գյոգթափե, Կիուլբարջին և Չերակուշու գյուղերը կողոպտվեցին և ավերվեցին: Գաղթական ասորիների մեջ կային բազմաթիվ զոհեր: Ողջ մնացածների մի մասը ծայր աղքատության մեջ է գտնվում Կովկասում, իսկ մյուս մասը կիսաքաղց շարունակում է իր գոյությունը Ուրմիայում»<sup>268</sup>:

Սալմաստի եղբայրական օգնության կոմիտեի տեղակալի համաձայն՝ Ուրմիայի շրջանում թուրքերի բարբարոսություններից խուսափելու համար միայն ամերիկյան քարոզիչների մոտ պատսպարվել էին 20 հազար ասորիներ: Վրաստանի արխիվային փաստաթղթերում այս թիվը հասնում է 22 հազարի: Թուրքերին հաջողվում է այստեղ ապաստանած ասորիների մեծ մասին հայտնաբերել և գնդակահարել: Մոտ 4 հազար էլ մահանում են տարբեր հիվանդություններից և քաղցից<sup>269</sup>:

Ուրմիայի արևմտյան մասում էր գտնվում Ջոմալյան ասորական նշանավոր գյուղը, որի բնակչության մեծամասնությունը /մոտ 1200 մարդ/ գաղթել էր Կովկաս: Գյուղում մնացել էին միայն ծերերը, որոնց իսպառ կոտորել էին քրդերը: Նույն դառը ճակատագրին արժանացավ Ջոմալյանի հարևանությամբ գտնվող ասորական մեկ այլ գյուղ՝ Քեաֆսին. եթե 1000 մարդ մի կերպ հասցրել էր գաղթել Երևանի նահանգ, ապա մնացածները՝ դարձան թուրքական բարբարոսության զոհեր: Գյուղում նրանց առաջարկեցին մահմեդականություն ընդունել և ազատվել մահից: Սակայն ասորիները ընտրեցին մահը: Ականատեսների վկայությամբ՝ գյուղի ասորի երեսաններին «ողջ-ողջ վիճակում կտոր-կտոր էին անում, գցում թոնիրը և խորովում, այնուհետև ստիպում մայրերին ճաշակել այդ մսից»<sup>270</sup>:

<sup>261</sup> Naayem J., op. cit., p. 272.

<sup>262</sup> «Մշակ», № 62, 27 մարտի 1915:

<sup>263</sup> Naayem J., op. cit., p. 288.

<sup>264</sup> ՎՊԿՊԱ, ֆ. 519, ց. 1, գ. 21, թ. 289:

<sup>265</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 127, թ. 109:

<sup>266</sup> Kloian R. D., op. cit., p. 9.

<sup>267</sup> Kloian R. D., op. cit., p. 139.

<sup>268</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 35-36.

<sup>269</sup> ՎՊԿՊԱ, ֆ. 13, ց. 3, գ. 1583, թ. 14:

<sup>270</sup> «Մշակ», № 59, 19 մարտի 1915:

Վերապրածներից Հ. Մշվորթենը ընդամենը Հինգ տարեկան էր, երբ Ուրմիայում 1915 թ. գարնանը տեղի ունեցան այս ողբերգալի իրադարձությունները<sup>271</sup>: «Ես հիշում եմ, - պատմում էր նա, - թե ինչպես էին տարիքով մեծերը խոսում այն մասին, որ և՛ ուսաները, և՛ թուրքերը ուզում են ասորիներին իրենց կողմը ներքաշել: Երբ իմ ազգի ներկայացուցիչները մերժեցին թուրքերի հետ համագործակցել, սկսվեց մի ահավոր ջարդ: Հազարավոր մարդիկ սպանվեցին: Շուրջ 5500 ասորիներ ստիպված եղան լքել Ուրմիան և գաղթել տարբեր երկրներ»<sup>272</sup>:

1915 թ. ապրիլին Ուրմիայում 500 ասորիների, որոնց մեջ էին այդ տարածաշրջանի եպիսկոպոսը և Հինգ այլ հոգևորականներ, թուրքերը քարշ տալով հասցրեցին Փրանսիական առաքելության շենքի մոտ և բազմաթիվ մարդկանց աչքի առաջ սպանեցին:

1915 թ. մայիսի 28-ին Ներսես եպիսկոպոսն Ամենայն Հայոց կաթողիկոսին հեռագրում էր. «Ուրմիայում համաճարակից արդեն մահացել են 6 հազար և սպանվել 4 հազար ասորիներ»: Եպիսկոպոսը նաև վկայում էր, որ արդեն 1916 թ. սկզբին Ջուլֆա էին հասել 20 հազար հայեր և ասորիներ<sup>273</sup>:

Իսկ Յա. Սարգիզը պատմում էր, որ մի օր Բաշկալեից Ուրմիա բերվեցին 60 հարուստ ասորիներ, որոնց հաջորդ օրն իսկ թուրքերը գնդակահարեցին<sup>274</sup>:

1916 թ. փետրվարի 12-ին Թավրիզի ոստիկանապետ Ե. Մելիք-Եգանյանը Կովկաս էր հեռագրում առ այն, որ «տեղի ասորիներին պատկանող տները այրվեցին և թալանվեցին: Հատկապես շատ ծանր է գաղթական ասորիների վիճակը»<sup>275</sup>:

1916 թ. սեպտեմբերին Իրանում թուրքական և գերմանական հյուպատոսությունների ներկայացուցիչները հայտարարեցին, որ կկանխեն հայերի և ասորիների նկատմամբ հետագա բռնությունների փորձերը գրավված տարածքներում: Սակայն Դիլմանի մոտակայքում գտնվող Հարիվ, Խոսրոպա և Մելիլեմ գյուղերում միայն 1917 թ. փետրվարի 14-ի լույս 15-ի գիշերը թվով 707 հայեր և ասորիներ սպանվեցին<sup>276</sup>: Ուրմիայի Ցաթ-Ալի-Նան-Կյոլի Փրանսիական կաթողիկոսի քարոզիչների բակում թուրքերը կախաղան բարձրացրին 40 ասորիներ<sup>277</sup>:

Օգտվելով «ընձեռնված հնարավորությունից»՝ 1917 թ. փետրվարին Ուրմիայի թուրքական հյուպատոսն իբրև փրկագին ասորական բնակավայրերից փող էր կորզում: Նա նույնիսկ «ժողովրդի անվտանգությունն ապահովելու նպատակով» այնտեղ զինվորներ ուղարկեց, որոնք էլ իրենց հերթին ավերեցին և թալանեցին գյուղերը՝ թուրքական հարեմներ տանելով տեղի ասորուհիներին: Այդ օրերին քաղաքում լուրեր են տարածվում, թե պարսիկները քրիստոնյա բնակչության կոտորած են պատրաստում: Այդ ժամանակ ասորիները ժողով են գումարում և որոշում են նախահարձակ լինել: Որոշումը սակայն ուշացած էր. արդեն փետրվարի 22-ին մահամեղականների մի ամբողջ հարձակվում է ասորիների առաջնորդ Աղա Պետրոսի տան վրա այստեղ գտնվող զենքն ու զինամթերքը առևանգելու նպատակով: Նույն նկատառումներով նրանք հարձակվում են Ուրմիայում ասորի ճանաչված բժիշկ Այզակ Լոխմանի տան վրա և թալանում նրա գույքը:

1917 թ. դեկտեմբերին ռուսական բանակը հետ է քաշվում Իրանի տարածքից ասորիներին թողնելով բավական քանակությամբ զենք և զինամթերք: Իրանական կառավարությունն իմանալով այդ մասին, փորձում է առիթն օգտագործել ասորիների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Ասորիները շտապում են հավաստիացնել, որ իրենք Իրանի դեմ ոչինչ չունեն և իրենց նպատակն է մնալ այստեղ՝ մինչև Քրդստանում որևէ «Հողակտորի» ձեռքբերումը: Իրանական կառավարությունն ասորիների զինաթափման հրաման է տալիս: Հրամանին չենթարկվելու համար, բազմաթիվ ասորիներ սպանվեցին Սալմաստում և Ուրմիայի մի քանի շրջաններում: Գործին միջամտում է Մար-Շիմունը. զինաթափումը տեղի է ունենում, սակայն սպանությունների հետ կապված այս դիպվածը երկար ժամանակ է ջնջվում ասորիների հիշողությունից:

1917 թ. դեկտեմբերին Ուրմիայում ժողով է հրավիրվում Անտանտի ներկայացուցիչների և Աղա Պետրոսի մասնակցությամբ, որի ժամանակ ասորիներին խոստանում են զենք, զինամթերք և գումար՝ ասորական ինքնավարություն ստեղծելու նպատակով: Սակայն պետք է կրկին ընդգծել, որ Մար-Շիմունի ռուսական կողմնորոշումը դուր չէր գալիս անգլիացիներին, որոնք ջանում էին ասորիներին զրկել իրենց հեղինակավոր առաջնորդից: Անգլիացիների այդ վերաբերմունքը ասորիների նկատմամբ լրիվ համընկնում էր քրդերի առաջնորդ Իսմայիլ աղա Սեմկոյի շահերին, որը, մեծ հույսեր կապելով գարական Ռուսաստանի հետ, հուսախաբ էր եղել: 1918 թ. սկզբներին գրամական միջոցների խիստ կարիք ունենալով աղա Սեմկոն որոշում է այն ձեռք բերել ասորական բնակավայրերը և հատկապես պատրիարքարանը թալանելու միջոցով: Իր ծրագրերն իրագործելու համար նա մի քանի անգամ պատվիրակություն է ուղարկում Սալմաստում գտնվող Մար-Շիմունի մոտ՝ իբր համագործակցելու նպատակով: Հոգևոր առաջ-

<sup>271</sup> Հելլեն Մշվորթենը այժմ ԱՄՆ-ի Ասորիների միությունից նախագահն է: 1998 թ. նա հրատարակեց իր կյանքի պատմության մասին մի գիրք, որտեղ անդրադարձավ նաև 1915 թ. ասորիների ջարդերին Ուրմիայում:

Stéu Schwarten H., My story: Persia to Iran, Chicago, 1998.

<sup>272</sup> Shoumanov V., Assyrians in Chicago, Great Britain, 2001, p. 64.

<sup>273</sup> Մելքոնյան Հովհ., Ոճիբի բուրգեր, Ե., 2001, էջ 133:

<sup>274</sup> Kloian R.D., op. cit., p. 139.

<sup>275</sup> Վ.Պ.Կ.Ս., ֆ. 13, ց. 27, գ. 4278, թ. 21:

<sup>276</sup> Геноцид армян в Османской империи, с. 246.

<sup>277</sup> Լեփսիուս Յ., նշվ. աշխ., էջ 115:

նորդին բազմիցս խորհուրդներ են տալիս չհամագործակցել քրդերի առաջնորդի հետ, սակայն անգլիացի կապիտան Գրեսիի առաջարկությամբ 1918 թ. մարտին որոշվում է քրդերի հետ ընդհանուր հայտարարի գալ համատեղ գործելու համար: Սակայն աղա Սեմկոն մարտի 3-ին իր Քյոհնա-Շահար /Հին քաղաք/ ամրոց է հրավիրում 100-150 հոգանոց ասորական պատվիրակությանը՝ Մար-Շիմունի գլխավորությամբ և նրանց գցում ծուղակը: Աղա Սեմկոյի ճոխ ընդունելության ավարտից հետո Մար-Շիմունն ու նրա եղբայր Դավիթը 40 հոգու հետ սպանվում են<sup>278</sup>: Մեկ այլ աղբյուրում, որն ավելի հավանական է, «ասորի սպանվածների թիվը հասնում է մինչև 75-ի»<sup>279</sup>:

Մինչև հիմա էլ այս տարածքում ապրող մարդիկ, լսելով այս դեպքերի ժամանակակիցներին, պատմում են, որ Աղա Սեմկոյի հետ ընթրիքի ժամանակ մի քուրդ սպասավոր Մար-Շիմունին թեյ մատուցելիս, հասցնում է զգուշացնել տեղի ունենալիք դավադրության մասին, սակայն այդ ժամանակ արդեն ուշ էր: Ասորական պատվիրակության անդամների դիակները յոթ օր մնացել էին գետնի վրա: Յոթերորդ օրը, դիակները հավաքելու ժամանակ, պարզվել էր, որ նրանց մեջ երկու հոգի կենդանի էին մնացել:

Այս դեպքից հետո Աղա Պետրոսը որոշում է վրեժխնդիր լինել և 7 հազար լեռնցիներով Ուրմիայից գալիս ու երեքօրյա կատաղի մարտերից հետո հիմնահատակ ավերում է աղա Սեմկոյի ամրոցը: Դրանից հետո նա պաշարում է աղա Սեմկոյի Դիլմանից դեպի հարավ գտնվող Չարա-Քալու կոչվող մեկ այլ ամրոցը: 36-ժամյա կատաղի մարտից հետո ամրոցն ընկնում է ասորիների ձեռքը: Քրդերի առաջնորդին հաջողվում է 28 հոգու հետ փախչել և իր վրեժը լուծել Խոյում ապրող 3800 հայ և ասորի կանանցից ու երեխաներից: Տեղացիներից շատերը ստիպված ընդունում են մահմեդականություն:

Մար-Շիմունի մահից հետո Ուրմիայում կոտորվեցին 9 հազար ասորիներ, որոնց թվում էին հայտնի բժիշկներ, ուսուցիչներ, գիտնականներ և հոգևորականներ:

Պայքարը թուրքական, իրանական և քրդական ուժերի դեմ նոր թափ է ստանում: 1918 թ. ապրիլի 16-ին Դիլմանում Աղա Պետրոսի և թուրքական զորամիավորումների միջև տեղի է ունենում ճակատամարտ, որի ժամանակ երկուստեք զոհեր են լինում:

Մար-Շիմունն Բենիամինի մահը, որ ծանր հարված էր ժողովրդի համար չընկճեց ասորիներին: Նշանակվեց նոր ղեկավարի ընտրության օր և 1918 թ. մարտի 8-ին Սբ. Մարիամ նեստորական եկեղեցում միտրոպոլիտներ Մար-Իլիայի և Մար-Խնանիշու ներկայությամբ ժողովուրդը միաձայն պահանջեց ավանդության համաձայն պատրիարք ընտրել մահացած Մար-Շիմունի ավագ եղբայր Փոլուսին: 1918 թ. ապրիլի 15-ին Փոլուսն ընտրվեց պատրիարք որպես Մար-

<sup>278</sup> Sarafian A., op. cit., vol. II, Watertown-Massachusetts, 1994, p. 148-149.

<sup>279</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, ք. 96, թ. 5:

Սրսուն 20-րդ և 1918 թ. հուլիսի 10-րդ սպասք քրդար և լուրքարը կողմից Ուրմիայի պաշարումը տևում է երկու ամիս: Անտանտի խոստացած օգնությունը պաշարյալներին չի հասնում: 100 հազար մարդուց փրկվում է միայն 80 հազարը: Սկսվում է տանջալից փախուստ Ուրմիայից դեպի Միջագետքի անապատները, որն ուղեկցվում է մարդկային ծանր կորուստներով: Անգլիացի կապիտան Ջ. Մակկարդին այս կապակցությամբ նշել է. «Մենք պարտավոր էինք մեր խոստումները կատարել ասորի ժողովրդի հանդեպ, որը մեր կողքին էր, երբ մենք օգնության խիստ կարիք ունեինք: Անգլիայի նկատմամբ իր ազնվության համար այս ժողովուրդն այսօր շատ թանկ է վճարում: Ես երբեք հեմ մոռանա այն, ինչ տեսան նրանք աքսորի այդ ճանապարհին»<sup>281</sup>:

Անգամ ազգությունը անգլիացի Ռ. Ստաֆֆորդը, որն Իրաքի արտաքին գործերի նախարարության նախկին վարչական տեսուչն էր և առիթը բաց էր թողնում արդարացնելու անգլիացիների բոլոր գործողությունները, ստիպված էր ընդունել, որ «Ասորիների այս խաչակրաց ճամփան գինվորական պատմության ամենաողբերգական էջերից է: Միայն այս ժամանակահատվածում նրանք կորցրին իրենց ազգի մեկ երրորդը: Ավելի քան 17 հազար ասորիներ մահացան այս գաղթի ճանապարհին»<sup>282</sup>:

Ողջ մնացածներն ուժասպառ հասան Բաղդադ և Բա'կուբա: Միջագետք տանող այդ անապատների ճանապարհին ասորիներից վերցնում էին բոլոր արժեքավոր իրերը, որի դիմաց տալիս էին անդորրագիր՝ խոստանալով, թե իբր կվերադարձնեն Մոսուլ հասնելուն պես: 50 հազարի չափ ասորիներ մահացան ծարավից և քաղցից: Այդ օրերը վերապրած տարագիր Հ. Միութեկյանը, որը փրկվել էր ասորիների շնորհիվ, պատմում էր. «Քանի օր էր ջուր չէինք խմել: Հագիվ հասանք մի հորի մոտ, որի շուրջը երևացին դիակներ և արյուն: Մոտենալով հորին, տեսաք, որ հորի մեջ էլ դիակներ կան, որոնց պատճառով հորի ջուրը բավականին վեր էր բարձրացած: Ինչպես հետագայում իմացանք, այդ դիակները կպատկանեին ասորու տարագիրներուն, որոնք մորթված և հորը նետված էին քանի մը օր առաջ կողպտելուն ետք»<sup>283</sup>:

<sup>280</sup> Այս պատրիարքը, սակայն, հիվանդ էր, ուստի նրա դերը փաստացի իր վրա էր վերցրել քուրդ Սուրմա խանումը, որի կուրյը հավատը անգլիացիների նկատմամբ ծանր անդորրագրով ասորիների հետագա ճակատագրի վրա: Մար-Շիմուն 20-րդ-ի վաղաժամ մահից հետո օրինական ձևով այդ պաշտոնը պետք է ստանձնեք 12-ամյա Իշայան, որը հետագայում դարձավ Մար-Շիմուն 21-րդ, սակայն այդ ժամանակ 1924 թ., նա ընտանիքով մեկնեց Անգլիա: Հոգևոր գործերը շարունակում էր տնօրինել Սուրմա խանումը:

She Gilliana Sh. Z., Assyrians in the Wilderness, Chicago, 2000, p. 53.

<sup>281</sup> Alichoran J., op. cit., p. 382.

<sup>282</sup> Stafford R. S., The Tragedy of the Assyrians, London, 1935, p. 33-34.

<sup>283</sup> Միութեկյան Հ., նշվ. աշխ., էջ 11:

1918 թ. ամռանը Իրանում ասորիների վիճակը դարձավ անտանելի. շոգի, սովի ու համաճարակների հետևանքով ասորի գաղթականների թիվը շեշտակիորեն նվազեց: Բացի այդ, ողջ ամռան ընթացքում քրդերը հանգիստ չէին տալիս ասորի գաղթականներին Խոյում: Ամռան ընթացքում այստեղ զոհվեցին 270 ասորիներ<sup>284</sup>:

Ողջ մնացած գաղթականները՝ շուրջ 100 հազար մարդ, հասան Համադան<sup>285</sup>, որտեղ նրանց սպասում էր անգլիացիների անհյուրընկալ վերաբերմունքը: 5-րդ հայկական հրաձգային գնդի զինվորական Տ. Ժամհարյանցը իր զեկուցագրում այդ կապակցությամբ գրել է. «Մենք ամեն ինչ արեցինք, որպեսզի փրկենք սպանդից գերծ մնացած մարդկանց՝ հասցնելով նրանց անգլիացիների մոտ /Համադան - Ա. Խ./, սակայն այստեղ նրանք նույնպես դատապարտված էին մահվան»<sup>286</sup>:

Համադանում ասորիներին սկսեցին ներգրավել անգլիական բանակի մեջ՝ «ասորական լեվիտներ» անվան տակ: Վերջիններս 1919 թ. Միջագետքում մասնակցեցին արաբների և քրդերի հակաանգլիական խռովությունների ճշմանը:

Այսպիսով, ինչպես տեսանք ասորիներն ու հայերը, լինելով ազգային և կրոնական փոքրամասնություններ, իրենց տիրապետող հասարակությունում հայտնվել էին հպատակ կարգավիճակում: Սա նշանակում է, որ օսմանյան տիրող վարչակարգի ուղեկցությամբ պայմաններում, այս ժողովուրդները պետք է ենթարկվեին իրավազրկության տարբեր դրսևորումների և հալածանքների: Սրան հատկապես գումարվում է այս երկու ժողովուրդների հանդեպ գոյություն ունեցող կրոնական թշնամանքը, որի պայմաններում հակաքրիստոնեական հետապնդումներն ավելի սուր բնույթ ստացան:

Իրենց հոգեբանական և պատմական էությունը զանգվածային գիտակցություն մեջ մշտապես խառնվում են սկզբունքային երկու տարբեր երևույթներ՝ «պատերազմը» և «ցեղասպանությունը»: Յուրաքանչյուր պատերազմում, որքան էլ ողբերգական լինի այն, «այլ ազգի կամ դավանանքի» մարդու սպանությունը կատարվում է քաղաքական, տնտեսական, կրոնական և տարածքային-գավթողական նպատակների հասնելու համար: Սակայն «ցեղասպանության» իմաստն այլ բնույթ ունի: Ցեղասպանության որոշակի կամ անորոշ նպատակն է՝ ոչնչացնել մարդուն էթնիկական և կրոնական հատկանիշների դրդապատճառով: Եթե ավելի խիստ ասենք «ցեղասպանությունը» զանգվածային գիտակցության մեջ օրինականացված սպանության թույլտվությունն է՝ «այլ» մարդու ոչնչացումը: Սակայն ցեղասպանությունը չի լինում ինչ-որ մեկի, մի քանիսի կամ մի խումբ մարդկանց դեմ, այն միշտ էլ ուղղված է համայն մարդկության դեմ: Ուստի այն, ինչ կատարվեց հայ և ասորի ժողովուրդների նկատմամբ, ծանր հանցագործություն էր՝ ուղղված ողջ մարդկության դեմ:

Այսպիսով, Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիայում և նրան հարակից տարածքներում, ուր ապրում էր մոտ մեկ միլիոն ասորի ժողովուրդ, միջազգային իրավունքի չափանիշներով կատարվեց իսկական ցեղասպանություն: Օսմանյան Թուրքիան և մեծ տերությունները հանցավոր են ինչպես հայերի, այնպես էլ ասորիների արյունալի սպանդի մեջ: Թուրքիան մեծ տերությունների հանցավոր թողտվության պայմաններում, օգտվելով պատերազմական իրադրության ընձեռած հնարավորությունից՝ մարդկության դեմ կատարեց ծանրագույն հանցագործություն ցեղասպանություն: 1914-1918 թթ. պատերազմի տարիներին բնաջնջման ենթարկված ասորիների թիվը հասնում է 250 հազարի<sup>287</sup>:

Դեռ 1919 թ. նոյեմբերին «Յրանսիական Ասիա» պարբերականը նշում էր, որ «ասորիների կոտորածները հիշեցնում են հայկական ջարդերը: Եվ քանի որ 250 հազար նահատակներ ունեցած այս ժողովուրդի մասին ավելի քիչ է խոսվել, ուստի պետք է այդ մասին հայտնել աշխարհին»<sup>288</sup>:

Արդեն 1922 թ. կատարված հաշվումների համաձայն, ինչպես նշում է ասորիների Ազգային խորհրդի քարտուղար Ճ. Կորեք դ. Քերպորանին, իր ազգի ներկայացուցիչների կորուստը կազմում է ավելի քան 270 հազար<sup>289</sup>:

Հետագայում, երբ սկսվեցին ուսումնասիրվել Առաջին Համաշխարհային պատերազմում, ինչպես նաև տարազրույթյան ճանապարհին տեղի ունեցած այս կոտորածները, ասորի նահատակվածների թվաքանակը հասավ 500 հազարի և անգամ 750 հազարի<sup>290</sup>: Եղեռնագործության չափերը շատ մեծ էին, և այսօր էլ կա այն միտումը, որ այդ ժամանակահատվածում ասորիները կորցրել են իրենց ազգի 2/3-ը: Պատերազմից հետո ասորիները ցավով նշում էին, որ իրենց ազգը գտնվում է անհետացման եզրին, և, որ աշխարհով մեկ սփռված ասորիների թվաքանակը իջել է 70 հազարի<sup>291</sup>:

Ռ. Ստաֆֆորդն այստեղ ճշմարտացիորեն նկատում է. «Մեծ առաջընթաց կլինեի թուրքերի համար, եթե նրանք կարողանային ցույց տալ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ տեղի ունեցավ

<sup>284</sup> Warda J., *The Flickering Light of Asia*, New York, 1916, p. 156-158.

<sup>285</sup> Народы мира, т. Народы Передней Азии, М., 1957, с. 295.

<sup>286</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 96, թ. 20:

<sup>287</sup> Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim /SEYFO/ dosyasi, s. 7. Տե՛ս նաև Naayem J., op. cit., p. 30.

<sup>288</sup> Alichoran J., op. cit., p. 370.

<sup>289</sup> Լևոն Վարդան, Ժամանակագրություն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրուս, 1975, էջ 90:

<sup>290</sup> Halo T., op. cit., p. 8.

<sup>291</sup> Սարոյան Վ., Ընտիր երկեր, 70 հազար ասորիներ, հ. Ա., Ե., 1986, էջ 26:



Հայերի հետ, Թուրքիայի մեկ այլ քրիստոնեական համայնք /նկատի են առնվում ասորիները - Ա. Ն./, լիովին գոհ է իր ճակատագրից»<sup>292</sup>։ Իսկ թե ինչպիսին էր նրանց ճակատագիրը՝ արդեն պարզ է վերոշարադրվածից։

Այդ տարիներին Շվեյցարիայում լույս տեսնող «Blather für Diplomatic»-ը /«Դիվանագիտական թերթ»/ տպագրեց մի հոդված, որը հեղինակել էր Թուրք դիվանագետ Սելիմ Ֆուլադ բեյը։ Հոդվածում հիմնականում շեշտվում էր. «Ինչու՞ եք հաճախ կրկնում, թե հայ բնակչությունն է շատ տուժել։ Իրականում Թուրքիայի ամբողջ բնակչությունն է տառապում՝ առանց կրոնի և ռասայի խտրության։ Տառապում է վատ կառավարության ձեռքից, եթե դա իրոք կարելի է կառավարություն անվանել։ Ե՛վ քրիստոնյաները և՛ մահմեդականները տուժում են դատարանների անարդար որոշումներից, անվտանգությունից բացակայությունից և այլն»<sup>293</sup>։

Դեռ 1916 թ. նոյեմբերին «Նյու-Յորք թայմս»-ը տպագրեց բժիշկ Վ. Ռոքվելի «Հայերի և ասորիների գոհերի թիվը» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը, պատմելով Թուրքիայի հայկական կոտորածների մասին, ավելացնում է. «Միայն հայերը չեն, որ անբախտ են. ասորիներին նույնպես ոչնչացրեցին և յուրաքանչյուր տասերորդին հնձեցին։ ...Այդ ազգի ներկայացուցիչներից շատ շատերը կործանվեցին, սակայն ոչ ոք չգիտի, թե որքան...»<sup>294</sup>։

Ամերիկյան մեկ այլ պարբերական՝ «Atlantic Monthly» թերթը, գրում էր. «Վեց ամսվա ընթացքում երիտթուրքերը արեցին այնքան բան, որքան չկարողացան անել հին թուրքերը վեց դարերի ընթացքում։ ...Հազարավոր ասորիներ անհետացան աշխարհի երեսից»<sup>295</sup>։

\* \* \*

1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում ստորագրվեց զինադադար, որից հետո Անտանտի զինված ուժերը, ըստ 1916 թ. Մայքս-Պիկոյի համաձայնագրի, հսկողության տակ վերցրին Օսմանյան կայսրության տարբեր տարածքներ։ Վերջինս կորցրեց իր տարածքները Աֆրիկայում և Ասիայում։ Հատկանշական է, որ զինադադարի կնքման օրը Զ. Բրայսը Թ. Ռուզվելտին մի նամակ հղեց, որտեղ գրում էր. «Ինչ վերաբերում է Ասիային, պետք է վերջնականապես և ամբողջովին արվի մի բան՝ ազատել այն անտանտի

<sup>292</sup> Stafford R. S., op. cit., p. 27.

<sup>293</sup> Документы французских архивов о геноциде армян, Под ред. Дж. Киракосяна и С. Симоняна, Е., 1985, с. 27-29.

<sup>294</sup> Kloian R. D., op. cit., p. 183-189.

<sup>295</sup> Նույն տեղում, էջ 193.

Թուրքերից։ Երբեք չթուլյատրել նրանց նորից ուժ ունենալ քրիստոնյաներին կոտորելու համար։ Ես հուսով եմ, որ Ամերիկայի ձայնը շատ պարզ կհնչի այս հարցում։ Ոչ մի տեղից հայերն ու ասորիները չեն ստացել ավելի ջերմ համակրանք, այնպիսի անշահախնդիր օգնություն, ինչպես ԱՄՆ-ից, և ձեր ժողովուրդը պետք է պարզ ասի, որ այդ մարդիկ ամբողջովին կազատվեն Թուրքերից»<sup>296</sup>։

Թուրքերը զգալով կայսրության մասնատման վտանգը գեներալ Մուստաֆա Բեմալ փաշայի /1881-1938/ գլխավորությամբ ոտքի կանգնեցին Անտանտի երկրների դեմ։ Դժվար է ասել, թե ինչպիսի զարգացում կունենար հակամարտությունը, եթե արմատապես չփոխվեր պատմական զարգացման ընթացքը։ Լուսաստանում ծագած Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տեղի ունեցող զարգացումներից զգուշանալով՝ Անտանտի երկրները հակամարտող կողմից անցան Թուրքիայի կողմը՝ ամբողջովին մոռանալով ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների երաշխավորի երբեմնի տված հանդիսավոր խոստումները։ Քաղաքական այդպիսի իրադրության պայմաններում Թուրքիան կարողացավ պահպանել իր ամբողջականությունը, և 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում քեմալականները ստեղծեցին մեջլիս, որը կազմեց կառավարություն՝ Մ. Բեմալի գլխավորությամբ։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ու Օսմանյան կայսրության անկումն ասորիների մեջ ինքնավարություն ստանալու հույսեր արթնացրեց։ Թուրքական իշխանությունների կողմից վարվող քաղաքականության հետևաքով անելանելի վիճակի մատնված ասորի ժողովուրդը ստիպված էր որոշակի հույսեր կապել ռուսական և բրիտանական իշխանությունների հետ, որոնք շուտ խոստումներ էին տալիս, որ ի հատուցումն իրենց ռազմական աջակցության, պատերազմի հաղթական ավարտից հետո Եռյակ համաձայնության երկրները ասորիներին հնարավորություն կտան ստեղծելու անկախ պետականություն։ Օրորելով այս խոստումներով, և՛ ռուսները և՛ անգլիացիները թե՛ Օսմանյան Թուրքիայում և թե՛ Իրանում ասորիների արյան գնով լուծեցին իրենց համար մի շարք առաջնակարգ նշանակություն ունեցող ռազմա-քաղաքական խնդիրներ և ի վերջո չկատարեցին իրենց խոստումները։

Դեռ 1918 թ. Թուրքական յաթաղանից փրկված ասորի գաղթականների մի մասը հասել էր Իրաքի Բա՛կուբա քաղաքը, իսկ մյուս մասը, որոնց թիվը հայերի հետ հասնում էր մոտ 50-60 հազարի, հասել էր Բաղդադ։ Այստեղ նրանց տեղավորել էին բրիտանական բանակի կողմից կառուցված ճամբարներում, ուր նրանք ապրում էին վրանային պայմաններում։ Զի՛շտ է, գաղթականներն ապահովված էին սննդով, սակայն կենցաղային պայմաններն անտանտի էին։ Ականատեսներից մեկը վկայում էր, որ «սկզբնական շրջանում մահացողների թիվը միջին հաշվով օրեկան հասնում էր 70-ից 80-ի։ Հայերի և ասորիների

<sup>296</sup> Fisher H. A., James Bryce, vol. II, New York, Macmillan, 1927, pp. 195-196.

րինների դիակները հիվանդանոցից միանգամից գերեզմանոց էին տեղափոխում: Եվ քանի որ ասորի գաղթականների թիվն այստեղ ավելի շատ էր, քան հայերինը, հետևաբար նրանց զոհերի քանակը գերազուցում էր»<sup>297</sup>:

Մուղղոսի դաշնագրից հետո Օսմանյան Թուրքիան սկսեց իր գործերը հեռացնել իրանական Ադրբեջանից: Ասորիները հույսը կապելով Անգլիայի հետ պատրաստվում էին վերադառնալ իրենց նախկին տարածքները: Սակայն անգլիական հյուպատոս Սմիթը, Համադանում հանդես գալով ասորական ղեկավարների ժողովում, հայտնեց, որ «Անգլիան պատրաստ է փոխարինել ասորիների հին ուսուսական զենքը նոր անգլիականով» և ավելացրեց, որ «իրանական կառավարիչները չեն ցանկանում, որ ասորիները վերադառնան Ուրմիա, այն էլ զինված վիճակում: ...Այժմ իրանական կառավարությունը բարեկամորեն է տրամադրված Մեծ Բրիտանիայի հանդեպ և ցանկալի է, որ Թեհրանի անգլիական դեսպանատանը մենք ունենանք ասորի ազգի ներկայացուցիչ: Այդ դեպքում միայն կարելի է կարգավորել իրանական կառավարության և ասորիների միջև ծագած հարցերը»<sup>298</sup>: Ժողովում որոշվեց անել այնպես, ինչպես առաջարկում էին «դաշնակիցները»:

Ասորական հրամանատարությունը հրաման արձակեց հավաքել զենքերը, որի համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով: Շատ չանցած, հայտնվեց անգլիական մի ջոկատ, որը վերցրեց հանձնած զենքը և, ասորի փախստականներին լցնելով մեքենաները, ուղևորվեց դեպի արևմուտք: Ասորիների մյուս մասը թաքնվեց լեռներում: Ինչպես պարզվեց հետագայում, ասորիներով լի այդ մեքենաները հասել էին Միջագետք: Այս կերպ թուրքական սպանդից փրկված ասորիները հայտնվեցին դաշնակից անգլիացիների իշխանության տակ:

Այսպիսով, խաբված, լքված, մերժված այդ ժողովուրդը, որը մաշվել ու արյունաքամ էր եղել թուրք-քրդական հարվածներից, իր վերջին հույսը կապել էր Փարիզի խաղաղության վեհաժողովի հետ: 1919 թ. այդ վեհաժողովին մասնակցում էին մի քանի ասորական պատվիրակություններ: Այստեղ էին ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը, քաղաքացի ասորիների պատրիարք Ջոզեֆ Էմմանուել Թոմասը, որոնք իրենց հետ բերել էին առանձին ծրագրեր: Նշենք, որ ասորական պատվիրակությունների նախագծերն իրարից գրեթե չէին տարբերվում: Որոշվեց, որ պետք է ելույթ ունենա պատվիրակությունների մեջ ամենից հեղինակավորը՝ փաստաբաններ Մայիդ Անտուան Նամեկի, Ռուստեմ Նեջիբի և դոկտոր Ժան Զեբունիի գլխավորությամբ, որը ժամանել էր Կ. Պոլսից: Վերջիններս հանդես եկան նախ ինքնավար, ապա ասորական անկախ պետություն ստեղծելու առաջարկով: Ըստ այդ ծրագրի, ասորական ինքնավար պետության մեջ պետք է մտնեին Դիարբեքի, Մոսուլի վիլայեթները, Ուրֆան, Տեր-Ջորը, Բիթլիսի վիլայեթի Սղերդ սանջակը, Ալեքսանդրեթի նավա-

հանգիստը և Շադ էլ Արաբ գետի հովիտը դարսրց ծոցում: Սակայն այստեղ ասորիներին սպասում էր դառն հիասթափությունը, որովհետև ասորական պրորբեմ, որպես այսպիսին, մեծ պետությունների համար գոյություն չուներ: Ասորական անվանի գործիչ դոկտոր Յոնանը Փարիզում հանդիպումներ ունեցավ աշխարհի ուժեղների Կլեմանտոյի, Լիոյդ Ջորջի, Վուդրո Վիլսոնի մերձավորագույն խորհրդական գնդապետ Հաուզի և այլոց հետ: Փարիզում, սակայն, հասկացրին, որ Յոնանն այստեղ անելիք չուներ, որովհետև ասորական հարցը իբր թե լուծվելու է Լոնդոնում:

1920 թ. Ասորի վեհաժողովում քննության նյութ դարձավ նաև ասորական հարցը: Ասորի դաշնագրի 62-րդ հոդվածում ասվում էր, որ անհրաժեշտ է հաշվի առնել «ասորա-քաղաքացիների պաշտպանության կատարյալ երաշխիքները» երկու երկրներից ցանկացածում, այսինքն Թուրքիայում կամ Իրաքում: Սակայն քեմալականները կտրականապես մերժեցին Ասորի պայմանագրի ճանաչումը: Իրենց իրավունքները ասորիներին տվեց միայն «պաշտպանության երաշխիք», այն էլ հետագայում ինքնավար Քրդստան ստեղծվելու դեպքում:

1920 թ. Ասորի պայմանագրով Մոսուլի վիլայեթն անցավ Անգլիային: Նշենք, որ Մոսուլի վիլայեթը հարուստ նավթային և կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան էր: Բերրի հողերն ու նպաստավոր կլիման Մոսուլը դարձրել էին Մերձավոր Արևելքի կարևոր տնտեսական կենտրոններից մեկը: Հենց այստեղ էլ, որպես աշխատուժե և զինուժ պետք էին ասորիները: Սակայն նրանք ինքնակամ Միջագետք չէին գնա, իսկ անգլիացիները դա ստիպողական չէին կարող անել: Անգլիացիները չէին կարող հաշվի չառնել մի կարևոր հանգամանք. պատերազմի վերջում ասորիներն ունեին յոթ հազարանոց զինված բանակ: Եվ դա էր այն հիմնական պատճառը, որ նրանք կազմակերպեցին Մար-Շիմունի սպանությունը, իսկ Մալիք Յոնանին ուղարկեցին Թեհրանի անգլիական հյուպատոսությունում որպես ասորական ներկայացուցիչ: Անգլիացիների այս քայլերին հետևեց նաև Աղա Պետրոսի ձերբակալությունը:

Ի վերջո անգլիացիների քմահաճ կամքով ասորիները դատապարտվեցին ապրելու Իրաքի քրդական և արաբական բնակչություն ունեցող թշնամական միջավայրում: Սովամահություն ենթարկելու սպառնալիքով անգլիացիները ասորիներից կազմակերպեցին զինված ջոկատներ, որոնք կոչված էին պայքարել հակամանգլիական շարժումների դեմ և նպաստելու Մոսուլի հարցի լուծմանը:

1920 թ. ամռան վերջին, երբ ասորի գաղթականները զբաղված էին իրենց առօրյա հոգսով, արաբները պատրաստվում էին հարված հասցնել տեղի անգլիացիներին և նրանց «հովանավորության տակ գտնվող» ասորիներին: Արաբների կողմից ճամբարը շրջափակելուց

<sup>297</sup> Վարդանեան Ե., Անապատի անապատ, Վենետիկ, 1923, էջ 53, 111-112:.

<sup>298</sup> Матвеев К. П. /Бар-Маттай/, И. И. Мар-Юханна, указ. соч., с. 80.

Հետո, գաղթականների հարցերով պատասխանատու անգլիացի գնդապետ Բ. Օուենը, հավաքելով ճամբարների ղեկավարներին հայտարարեց. «Մենք չըջափակված ենք արաբներով: Մակայն անգլիացիները իրենց ուժերով միայնակ չեն կարող ձեզ պաշտպանել: Մեզ հարկավոր է ձեր օգնությունը»: Ասորի գաղթականներն, իհարկե, օգնեցին անգլիացիներին՝ հակահարված հասցնելու արաբներին, որոնցից շատերն ընկան ասորի մարտիկների ձեռքով:

1920 թ. սեպտեմբերի 13-ի դրությամբ ասորի փախստականների մասին անգլիական կառավարությանը հաշվետվություն ներկայացվեց. «Օգոստոսին ասորի գաղթականների ճամբարը հրդեհվեց: Բաղդադի և Բա'կուբայի ճամբարների 40 հազարի չափ ասորիներից 30 հազարը մեկնեցին Մոսուլի վիլայեթ, այնտեղից նպատակ ունենալով հասնել իրենց «սեփական երկիր»<sup>299</sup>: Անգլիացիներին, իհարկե, դա ձեռնտու չէր. նրանք ցանկանում էին ասորիներին պահել իրենց աչքի առաջ՝ Իրաքում: Այնուամենայնիվ ասորիների մի փոքր զանգված, ըստ երևույթին, իրոք շարժվել էր դեպի այս տարածք, որովհետև 1927 թ. Թուրքիայում կատարված մարդահամարի տվյալների համաձայն, Հաքյարիի տարածքում ապրում էին 7 հազար ասորիներ»<sup>300</sup>:

1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը տեղի ունեցավ Լոնդոնի կոնֆերանսը, որտեղ Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով վերանայվեց Աևրի պայմանագիրը: Թեմզայի ափին ասորական պատվիրակություն ներկայացուցիչ դոկտոր Յոնանը հանդիպեց Ֆորին օֆիսի արհամարական ու կոշտ վերաբերմունքին:

Թեև հուսահատության եզրին հասած ասորիների թախանձանքներին ընդառաջելով Ազգերի լիգան ասորական հարցը մտցրեց 1922-1923 թթ. տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսի օրակարգի մեջ, սակայն այդ հարցը կոնֆերանսում տապալվեց: Անգլիացիներին ասորիները հարկավոր էին Իրաքում քրդերին ու արաբներին հակակշիռ ստեղծելու համար, իսկ ֆրանսիացիներին ասորական հարցը բնավ չէր հուզում, ընդհակառակը, այն կարող էր անցանկալի կերպով արտացոլվել Մերիայում իրադրություններում վրա: Իսկ Թուրքերը, արագորեն կռահելով, որ Անտանտի տերությունները ասորական խնդիրը բարձրացրել են լուկ տակտիկական նպատակներով, Իսմեթ Ինենուլի բերանով պատասխանեցին վճռական «ոչ»-ով: Վերջ տրվեց ասորիների բոլոր պատրանքներին: Հենց կոնֆերանսի օրերին Թուրքական իշխանությունները 20 հազար ասորիների Թուրքիայի տարածքից վտարեցին դեպի Իրաքի սահմանները, այսպես կոչված բրյուսելյան գիծ: Ազգերի լիգան ոչ մի քայլ չձեռնարկեց ասորական խնդրի լուծման, այդ ժողովրդին որևէ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

<sup>299</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 575, թ. 9:

<sup>300</sup> Բաղալյան Գ., Վանի նահանգը 1840-ական - 1914 թթ. /վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն, էջ 22:

Լոզանի պայմանագրի կնքումից հետո ասորիները կանգնեցին իրենց ազգային և մշակութային արժեքները կորցնելու վտանգի առաջ: Նրանք չէին կարող իրենց լեզվով հոգևոր և մշակութային գործունեություն ծավալել, զարգացնել իրենց ավանդույթները: Թուրքիայի ասորական գյուղերում բացվեցին թուրքական դպրոցներ: Գյուղեր գործողվեցին հատուկ հսկիչներ: Բացի այդ, աշխատանք էր տարվում ընդհանրապես վերացնել ասորի ժողովրդի համայնքները:

1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիան հռչակվեց հանրապետություն՝ նախագահ Մ. Քեմալի գլխավորությամբ /1923-1935/: Մինչև այս ժամանակաշրջանը՝ 1919-1923 թթ., Մուստաֆա Քեմալի թողտվությունը սպանվեցին հազարավոր ասորիներ, միայն նրա համար, որ քրիստոնյա էին:

1924 թ. Թուրքիայում ընդունվեց Սահմանադրություն: Թուրքիայի հանրապետությունը ձևավորվեց Օսմանյան կայսրության ավերակների վրա: Նորաստեղծ պետության քաղաքականության հիմքում դրվեցին երիտթուրքերի քաղաքական և ռազմական գաղափարները: Հետագա քեմալական քաղաքական գործիչները նույնպես որդեգրեցին այդ գաղափարախոսությունը: Քեմալիզմը հենվում էր «մեկ ազգ, մեկ ժողովուրդ, մեկ մշակույթ» նշանաբանի վրա: Էթնիկական գտումն իրագործելու համար կատարվեցին հետևյալ քայլերը.

1. Փոփոխություններ կրթական համակարգում.

Թուրքիայում ազգային փոքրամասնություններին իրավունք էր տրվում ունենալ իրենց դպրոցները և հոգևոր կենտրոնները: Հանրապետությունում կրթական համակարգը սկսվեց կառավարվել մեկ մարմնի կողմից: 1925-1926 թթ. հիմնվեցին ազգայնական «Թուրքական պատմության ընկերությունը» և «Թուրքերեն լեզվի ընկերությունը», որոնք հենվում էին «մեկ ազգ, մեկ լեզու» գաղափարախոսության վրա: 1928 թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ Թուրքիայի տարածքում բացի թուրքերենից, արգելվեց այլ այբուբենի գործածումը:

2. Փոփոխություններ մշակույթի ոլորտում.

Հանրապետության հռչակումից հետո քեմալականները սկսեցին վարել լիցիզմի /աշխարհիկ պետություն - Ա. Խ./ քաղաքականություն: Կառավարությունը կից ստեղծվեց հոգևոր գործերի ղեկավարող նախարարություն: Որոշվեց Թուրքիայում ստեղծել մեկ միասնական մշակույթ՝ մյուս ժողովուրդների մշակույթների հիման վրա: Փոխվեցին ոչ թուրքական ծագում ունեցող բնակավայրերի անունները: Թուրքիայի տարածքում ապրող այլ ազգերի ներկայացուցիչներին պարտադրեցին փոխել ազգանունները:

Այսպիսով, վարելով քրիստոնյաների ձուլման քաղաքականություն և չճանաչելով այլ ժողովուրդների գոյությունը Թուրքիայում՝ քեմալականները հրով ու սրով պահպանում էին երկրի բնակչության միատարրությունը: Այդ ճանապարհին ամեն խոչընդոտ ենթակա էր վերացման:

1925 թ. դեկտեմբերի 26-ին Ազգերի լիգան Հաբյարին հանձնում է Թուրքիային, իսկ Մոսուլը՝ Իրաքին ի չիք դարձնելով ասորական ինքնավարության հույսերը: Այսպիսով, ասորիների վրա տնտեսական և այլ կարգի ճնշումներ գործադրելով՝ վերջիններին պարտադրեցին լքել իրենց պապենական հողերը: Այսպես ասորի ժողովուրդը դարձավ օտարական իր իսկ պատմական հայրենիքում և նրա շրջակա երկրներում, ուր ապրում էր դարերով:

1925 թ. դեկտեմբերի 16-ի տխրահուշակ որոշումը ստիպեց ասորիներին Իրաքում բնակվել բրիտանական հովանու ներքո: Կյանքն այստեղ անտանելի էր, որի հետ ժողովուրդը չէր կարողանում հաշտվել: Ասորիները պահանջում էին վերադարձի երաշխիքներ: Սակայն անգլիացիները նպատակ չունեին իրենց ձեռքերից բաց թողնել ասորի զինվորներին և բանվորներին: Նրանց սիրաշահելու համար, անգլիացիները Մոսուլի վիլայեթում տարածեցին «Ասորական թագավորության» ստեղծման վարկածը: Այս կերպ նրանք ցանկանում էին զրկել Ֆրանսիային Մոսուլի վիլայեթի նկատմամբ հավակնություններից և ասորիներին պահել իրենց ճամբարում: Այսպիսով, Մոսուլի նավթի շուրջը բորբոքվում է պայթար, որն ավարտվում է անգլիացիների հաղթանակով: Այդ հաղթանակը ձեռք բերելու մեջ ևս անկասկած կարևորագույն դեր խաղաց նաև ասորական հարցը: Կարևոր է նաև նշել, որ շնորհիվ ռազմաշունչ ասորիների ջանքերի, որոնք վճռականորեն պաշտպանում էին Իրաքի սահմանները, թուրքերին չհաջողվեց ռազմական ճանապարհով գրավել հյուսիսային Իրաքը: Սակայն ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ այդ բոլորից իրենք ասորիները, ոչինչ չհաճեցին:

Ասորիների կոտորածները շարունակվեցին նաև հետագայում: 1932 թ. Իրաքում բրիտանական «հովանավորչության» ժամկետը լրանալուց հետո 70 հազար ասորիներ խնդրանքով դիմեցին իրենց բնակավայրերում հողակտորներ ստանալու համար: Սակայն Բաղդադը թշնամաբար ընդունեց «երախտամոռ» ասորիների այդ բնական ու համեստ պահանջը և ուժեղացրեց իր բռնաճնշումները: Իսկ անգլիացիները, որոնք այլևս ասորիների ծառայությունների կարիքը չունեին, լքեցին նրանց, այդ ժողովրդի ճակատագիրը թողնելով բախտի քմահաճույքին: Ավելին, երես թեքելով իրենց նախկին դաշնակիցներից, անգլիացիները նրանց մատնեցին Իրաքի հետադիմության ձեռքը, որը չհապաղեց հաշվհարդար տեսնել ասորիների հետ՝ կազմակերպելով նրանց ջարդերը:

1933 թ. հուլիսի 18-ին Մար-Շիմունը Իրաքում համարվեց անցանկալի անձնավորություն և ստիպված եղավ մեկնել Կիպրոս: Այստեղ նա իր ձայնը բարձրացրեց բրիտանական անտարբերության դեմ: Ի պատասխան դրան, անգլիացիները սկսեցին կրկին սեպ խրել ասորիների, քրդերի և արաբների միջև՝ փորձելով ասորական հարցը լուծել

վերջիններիս վերջնական ոչնչացմամբ:

1933 թ. օգոստոսի վերջին, երբ 1000 ասորիներ փորձում էին Սիրիա՝ Ֆրանսիական հովանավորչության գոտի տեղափոխել իրենց ընտանիքները, Տիգրիս գետի ափին Իրաքի իշխանությունները գեներալ գործադրեցին նրանց նկատմամբ: Ասորիները պատասխան քայլերի դիմեցին և հաջողությամբ անցան Սիրիա: Իրաքյան բանակը այս պարտության վրեժը լուծեց ասորական գյուղերի խաղաղ բնակչությունից: Անգլիացիների դրդմամբ արաբ կառավարիչների կազմակերպած ասորիների այս զանգվածային ջարդերին զոհ գնաց երեք հազար խաղաղ բնակչություն<sup>301</sup>: Պետք է նկատել, որ այս ջարդերին Իրաքյան կառավարությունը ոչնչով չխոչընդոտեց, այնպես, կոտորածների կազմակերպիչը ստացավ գեներալի կոչում: Այս դեպքերի մասին վկայող Իրաքյան արխիվները փակվեցին թագավոր Ֆայսալ I-ի մահից հետո:

Ըստ Ռ. Ստաֆֆորդի՝ «ասորական հարցն ինքնին քաղաքական հարց է»: Եվ այդ քաղաքական հարցը անգլիացիները փորձում էին լուծել այդ ժողովրդին ամեն կերպ նեղելով:

Այն, որ 1933 թ. ասորիների ջարդերն Իրաքում անգլիացիների ձեռքի գործն է, կասկած չկա: «Կասկած չկա, որ 1933 թ. դեպքերը հարված հասցրեցին Անգլիայի հեղինակությունն Իրաքում, ինչպես նաև ամբողջ Արևելքում: Իրաքի բնակչությունը, արդարացի, թե՛ ոչ, գտնում է, որ մենք դավաճանեցինք մեր ընկերներին ասորիներին», - գրում էր Ստաֆֆորդը<sup>302</sup>:

1933 թ. ողբերգական դեպքերը պատճառ հանդիսացան, որ ասորիները ցրվեն աշխարհով մեկ. սկզբում՝ սահմանակից երկրներ, ապա Եվրոպա, ԱՄՆ և Ավստրալիա:

Ցավով պետք է նշել, որ ասորիներն էլ իրենց հերթին դասեր չքաղեցին պատմությունից և, մոռանալով անցյալի դառը ճակատագիրը, 1941 թ. ապրիլ-մայիս ամիսներին մտան ռազմական կոնֆլիկտի մեջ ի շահ Բրիտանիայի: Իրաքում տեղավորված Royal Air Force անգլիական բազան 1500 ասորիների շնորհիվ փրկվեց կործանումից: Իրաքի պարտությունը կարևոր էր նացիստական Գերմանիայի դեմ պատերազմի ելքը Մերձավոր Արևելքում որոշելու համար:

1945 թ. մայիսի 7-ին ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, փորձեց ստանալ մեծ տերությունների աջակցությունը՝ իր ժողովրդի դատը պաշտպանելու խնդրում, սակայն կրկին ապարդյուն:

Այսօր աշխարհով մեկ սփռված ասորի ժողովուրդը մարդու իրավունքների հարգման, ինքնավար պետություն ունենալու կարիք է զգում և շարունակում է իր դարավոր ու արդար պայքարը: Սկսած 1979 թվականից ծավալվում է ասորական դեմոկրատական շարժում՝ «Զովաա» անունով, որն իր մեջ ներառում է 35 հազար անդամ:

<sup>301</sup> Malek Yusuf, The British Betrayal of the Assyrian, Chicago, 1935.

<sup>302</sup> Stafford R. S., op. cit., p. 207.

Ասորիների հարցը միջազգային լուծում է պահանջում: Այս խնդիրն առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակա-  
նության ուշադրությունից: Արդարության վերականգնման, ժողո-  
վուրդների ինքնության ճանաչման և մշակութային զարգացման հա-  
մար այսօր Թուրքիան պետք է դատապարտվի, քանի որ.

1. Թուրքիայի հանրապետության հռչակումից ի վեր անտեսվել են միջազգային օրենքներն այս երկրում:
2. ՄԱԿ-ի անդամ Թուրքիան իրագործում է իր իսկ կողմից ընդու-  
նած չափանիշներին անհամապատասխան որոշումներ:
3. Թուրքիան չի կատարում միջազգային պայմանագրերով իր վրա  
դրված պարտավորությունները:
4. Չճանաչելով ՄԱԿ-ի «Ազգերի և ժողովուրդների իրավա-  
հավասարության և ազատ ինքնորոշման» սկզբունքը՝ Թուրքի-  
ան ոտնահարում է տեղի ասորիների իրավունքները:
5. ՄԱԿ-ի կողմից, որպես մարդկության դեմ ծանրագույն հանցա-  
գործություն հռչակված «ցեղասպանության» որակավորումը՝  
Թուրքիան այսօր էլ հետևողականորեն կիրառում է ասորիների  
նկատմամբ:
6. Շարունակվում է ասորիների արտաքսումը, որը ՄԱԿ-ի կողմից  
որակվել է, որպես ոճիր:
7. ՄԱԿ-ը դատապարտում է ազգային խտրականությունը: Թուր-  
քիան շարունակում է նաև իր նախորդների որդեգրած ձուլման  
քաղաքականությունը՝ «Մեկ ազգ, մեկ լեզու, մեկ կրոն, մեկ  
դրոշ, մեկ երկիր» նշանաբանով:
8. ՄԱԿ-ը դատապարտում է ահաբեկչությունը, սակայն Թուրքիան  
այսօր էլ դեռ շարունակում է ահաբեկչական քաղաքականություն  
կիրառել ասորիների հանդեպ՝ վերացնելով նրանց հոգևոր և նյութա-  
կան արժեքները:
9. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած «Մարդու իրավունք-  
ների համընդհանուր հռչակագրի» հոդվածները չեն հասնում Թուր-  
քիայի տարածք:

Ասորի ժողովուրդն այսօր պահանջում է, որ Թուրքիան դա-  
տապարտվի միջազգային ատյանների կողմից, որ ցեղասպանության  
հետևանքով տարածքների և նյութական արժեքների կորուստները  
հատուցվեն միջազգային նորմերի սահմաններում՝ մոռացության  
չմատնելով, որ ցեղասպանության մահացու վարակը մարդկության  
ապագան կանգնեցնում է վտանգի առաջ:

## РЕЗЮМЕ

### АНАИТ ХОСРОЕВА

#### ГЕНОЦИД АССИРИЙЦЕВ В ОСМАНСКОЙ ТУРЦИИ И ПРИЛЕГАЮЩИХ ТЮРКОНАСЕЛЕННЫХ МЕСТНОСТЯХ /конец XIX - первая четверть XX вв./

Ассирийцы - один из древнейших народов мира, предки которых стояли у колыбели мировой цивилизации. Они внесли огромный вклад в дело развития всемирной культуры. Со времен падения Ассирийского царства прошло более 2500 лет. Наследники ассирийцев, продолжая жить на своей исторической земле — древнейшем Бетнагрине, охватывающем территорию между Персидским заливом, Средиземным морем и озером Урмия, последовательно угнетались персами, арабами, монголами, османскими турками и курдами. Этот многострадальный народ сегодня в основном приютился на границах Ирака, Ирана, Турции и Сирии, на ограниченной территории Верхнего Междуречья.

В конце 19-го - начале 20-го вв. на территории шести армянских провинций Османской империи проживало около одного миллиона ассирийцев, с единым языком, культурой, национальными обычаями, которые в основном занимались земледельчеством и скотоводством. В этот период ассирийцы Османской Турции и Ирана в политическом, военном и духовном смысле подчинялись патриарху Мар-Шимун Бениамину, резиденция которого находилась в деревне Кочанис санджака Хаккьяри провинции Ван.

Еще в 1895-1896 гг. в результате погромов, организованных султаном Абдул Гамидом II, жертвами резни стали 300 тыс. армян и 55 тыс. ассирийцев (население 245 деревень). 100 тыс. ассирийцев было обращено в мусульманство. 100 тыс. ассирийских женщин и девушек были согнаны в турецкие и курдские гаремы.

В начале 20-го в. национальные меньшинства Османской империи связывали надежды с младотурками. Они с нетерпением ждали обещанных им свобод. Но вместо этого ассирийцы подверглись или физическому истреблению, или насильственной исламизации. В политической программе младотурок говорилось: «Рано или поздно все турецкие подданные должны быть отуречены. Ясно,

что это не может произойти с их согласия, по их воле, и мы будем вынуждены применить оружие". А идеолог младотурок доктор Назым во время одного секретного совещания объявил: "Погром необходим. Все нетурецкие элементы, к какой бы нации они ни принадлежали, должны быть уничтожены".

Английский историк Р. Стаффорд справедливо замечает по этому поводу: "Было бы большим плюсом для турок, если бы они могли показать, что независимо от того, что произошло с армянами, другая христианская община в Турции (имеются в виду ассирийцы) вполне довольна своей судьбой". А какова была их судьба?

Факты свидетельствуют, что накануне Первой мировой войны русское командование обратилось с просьбой к Мар-Шимуну Бениамину о помощи, который в ответ на это обещал русскому консулу в Ване Термену 40-тысячное войско. Это стало поводом для уничтожения десятков ассирийских сел турками.

Ассирийский священник Диарбекира аббат Жозеф Наем свидетельствует, что в апреле 1915 г. происходили ужасные погромы: мужчин свыше 16 лет собирали, били, истязали, убивали, затем завязывали головы повязками и фотографировали, чтобы потом доказать всему миру, что якобы христиане притесняли мусульман.

В течение 1914-1918 гг. резня ассирийцев продолжалась как на территории Османской Турции, так и во время войны объявившего себя нейтральной страной на территории Ирана. В январе 1915 г. полицейский отряд под командованием хана Качала окружил ассирийское село Гюлпашан и разорил его. После взятия Дилмана жители ближайших двадцати ассирийских сел были истреблены. До конца войны турками здесь было уничтожено 98 ассирийских сел. Единственным выходом оставалась депортация. Начинается мучительный побег в Междуречье, который сопровождается тяжелыми человеческими потерями. "Мое внимание привлекла картина трагической депортации одного отверженного народа. Я говорю об ассирийцах", - свидетельствовал некий английский очевидец.

В 1919 г. периодическое издание "Французская Азия" отмечает, что резня ассирийцев напоминает армянские погромы. И поскольку об этом народе, имевшем 250 тыс. жертв, говорилось

очень мало, то надо об этом сообщить всему миру.

Таким образом, в течение Первой мировой войны в Турции и примыкающих к ней территориях, где проживало около одного миллиона ассирийцев по меркам международного права имел место настоящий геноцид. В массовом сознании постоянно смешиваются два принципиально различных по своей психологической и исторической сути явления — геноцид и война. В любых войнах, сколь драматичны они бы не были, убийство другого человека совершается как средство достижения политических, экономических, религиозных или территориальных целей. Геноцид же имеет другую природу. Явная или неявная цель геноцида — убийство другого человека, так или иначе отличающегося по этническим, религиозным или каким-либо иным признакам. Говоря более жестко, геноцид — это узаконенное в массовом сознании разрешение на убийство, на уничтожение другого человека.

Падение Османской империи разбудило среди ассирийцев надежду на получение автономии. На Парижской мирной конференции 1919 г. участвовало несколько ассирийских делегаций. Самая активная из них была делегация, возглавляемая адвокатами Саидом Антуаном Намеком, Рустамом Неджиби и доктором Жаном Зебуни, которая прибыла из Константинополя. Последняя выступила сначала с идеей создания автономного, а потом независимого государства. Согласно этой программе, в независимое ассирийское государство должны были войти вилайеты Диарбекира, Мосула, а также Урфа, Дер-Зор, провинция Сгерд Битлисского вилайета, гавань Александрета в Средиземном море и территория реки Шад-эль-Араб в Персидском заливе. Но вместо этих стремлений, Севрский договор 1920 г. дал ассирийскому народу "гарантию защиты", и то в случае создания в дальнейшем автономного Курдистана.

В 1923 г. конференция в Лозанне положила конец всем иллюзиям. Здесь ассирийский вопрос даже не был заслушан. Именно в дни конференции турецкие власти сослали 20 тыс. ассирийцев из Турции к границам Ирака, к так называемой "брюссельской линии". Лига наций также не предприняла никаких мер для решения ассирийской проблемы. Более того, 26 декабря 1925 г. Лига наций передает Хаккьяри Турции, а Мосул Ираку, сведя на нет надежды на ассирийскую автономию. Ассирийский народ стал чу-

жим на своей же исторической земле.

Трагические события 1933 г. на территории Ирака стали причиной того, что ассирийцы расселились по всему миру. Выступая 7 мая 1945 г. на Генеральной Ассамблее ООН, главный духовный предводитель ассирийцев Мар-Шимун попробовал получить поддержку великих держав в решении проблемы ассирийского вопроса, но безуспешно.

Сегодня рассыпанный по всему миру ассирийский народ требует, чтобы как Турция, так и международное сообщество признало этот неоспоримый исторический факт.

## SUMMARY

ANAHIT R. KHOSROYEVA

*The Assyrian Genocide in the Ottoman Turkey  
and the Adjacent Turkish Territories  
/the end of 19<sup>th</sup> and the first quarter of 20<sup>th</sup> centuries/*

Assyrians are one of the oldest people in the world whose ancestors stood at the cradle of world civilization. They made a great contribution in the development of world culture. About two and half thousand years passed after the falling of Assyrian reign /605 BC/. The descendants of the Assyrians going on living on their historical land in ancient Betnahrain which lies on the territory between the Persian Gulf, the Mediterranean Sea and Urmia lake were consistently oppressed by Persians, Arabians, Mongols, Ottoman Turks and Kurds. Now these long-suffering people have taken shelter on the boundaries of Iraq, Iran, Turkey, Syria and limited territory of Upper Mesopotamia.

Before WWI the Assyrian villages had been in Hakkari /vilayet of Van, Ottoman Turkey/ and other provinces as well as on the territory of the vilayets of Erzerum, Diyarbekir, Sebastia, Kharberd, Bitlis and in the regions of Urmia /Iran/ and Mosul /Iraq/. About one million Assyrians with single language, culture and national customs had lived here. Religiously they had divided into Nestorians, Catholics, Orthodox and socially they had divided into two large castes: ashirets /independent tribes/ and ruyas /dependent people/. Basically they had been engaged in agriculture and cattle-breeding. At the end of the 19th and at the beginning of the 20th centuries the Assyrians of Turkey and Iran politically, militarily and spiritually had obeyed patriarch Mar-Shimoun Benyamin.

1895-1896, witnessed the Assyrian massacres in Diyarbekir, Hasankeyef, Sivas and other parts of Anatolia, by Sultan Abdul Hamid II. These attacks caused the death of over 55, 000 Assyrians



- the inhabitants of 245 villages. A further 100,000 Assyrian women were forced into Turkish and Kurdish harems. The Turkish troops looted the remains of the Assyrian settlements. Assyrians were raped, tortured and murdered.

At the beginning of the 20th century national minorities of Ottoman Turkey had pinned their hopes on Young Turks. They had waited impatiently for the promised freedoms. But instead of it they had undergone either physical extermination or forcible apostasy. At one of the secret conference Young Turkish ideologist doctor Nazeem told, "The massacre is indispensable. All the non-Turkish elements must be exterminated whatever nationality they have".

English historian R. Stafford fairly observes, "It would be great progress for the Turks if they could show that in spite of the Armenians' events the another Christian community of Turkey is quite satisfied with the fortune". And what was their fortune?

The facts testify as far back as on the eve of WWI the Russian command had made Mar-Shimoun Benyamin a request for a help and in reply to it he had promised Russian consul of Van Termen an army of 40,000. It became the reason for extermination of 98 villages by Turks. The massacres of Assyrians and Armenians took place in Diyarbekir, Bitlis, Adana, Urfa and other places.

In September 1914, the Baku newspaper reported the fiery destruction of some 30 Assyrian villages and the death of other 200 Assyrians who were burned alive. In Tur-Abdin 12, 000 Ottoman soldiers looted the village of Aynvardo and killed all its inhabitants. The attack resulted in a struggle lasting 2 months and 6 days as the Assyrians fought back in defence. Reports about the attack on Midyat tell of blood pouring down from the roof gutters of every house. In Seyerd Assyrians were rounded up like cattle and made to march for days in the harsh climate. Women, children and the elderly, were subjected to beatings, rapes and constant abuse. Those that became too weak to walk were killed.

Djevded Bey /governor of Van/ who had "butchers" regiment of 8,000 had done "business". Newspapers report about the attacks on the villages Hakkari mountain and the murdering of every Assyrian villager in the 30 settlements of the Gjavar region.

Priest-abbot of Diyarbekir Jozef Naayem testified that from April 8, 1915 terrible massacres had taken place: they had gathered men above

16, beaten them, tortured, killed then had tied bands round their heads and photoed them in order to prove that as though Christian had oppressed Moslems.

During WWI Assyrians as well as Armenians underwent massacre and deportation. Unfortunately, the massacre was carried out by considering itself neutral country Iran.

In 1915 the progress of Russian forces in the South urged Young Turks on freeing themselves from "disturbing" un-Turkish population.

In the village of Gardieenne, eye witnesses speak about the attack on the elderly with spears and swords, the burning of churches, the raping and taking of women, the slaughtering of those refusing conversion to Islam.

In January 1915 a detachment of police under the command of Khan Kachal encircled and destroyed Assyrian village Gulpashan. After seizure of Dilman the people of the nearest 20 villages were exterminated. 750 people were beheaded in Assyrian village Havtevan. The only way out of it was deportation. The poignant escape began from Iran to Mesopotamia which was accompanied by hard human losses. "The picture of tragic deportation of a small rejected people was drawn my attention. I speak about Assyrians", - an English eye-witness testified.

During WWI in Ottoman Turkey and adjoining countries where about 1,000 000 Assyrians lived according to measures of international law the real genocide took place.

In 1919 the periodical "French Asia" observed that "the massacres of Assyrians reminded the massacres of Armenians. And as it was told a little about these people with 250,000 of victims it should be informed all over the world".

The falling of Ottoman Empire evoked hopes of getting an autonomy among Assyrians. A few Assyrian delegations took part in Parisian conference in 1919. The delegation headed by advocates Sayid Antuan Namek, Rustem Nedjebi and doctor Jean Zebuni which arrived from Constantinople was the most active. They came out in favour of an idea of establishing autonomy and then independent state. According to this program Diyarbekir, Mosul vilayets, Urfa, Der- Dzor, the province of Seyerd /vilayet of Bitlis/, the harbour Alexandret in the Mediterranean Sea and the territory near Shade-ele-Arab /the Persian Gulf/ had to be included in the state. But instead of these aspirations the Sevri pact gave to the

Assyrian people only “the guarantee of defence” but in case of establishing autonomous Kurdistan.

In 1923 in Lozan the conference put an end to all the illusions. Here the Assyrian matter wasn't even auditioned. Just in the days of the conference Turkish authorities exiled 20,000 Assyrians from Turkey to the bounds of Iraq to the so-called “Brussels line”. The League of Nations didn't take measures for settling the Assyrian matter, for helping the people either. And what is more on 26 December 1925 the League of Nations bringing to naught hopes of autonomy transferred Hakkari to Turkey and Mosul to Iraq. The Assyrians became aliens on their own historical land.

The tragic events of 1933 caused Assyrians' migration to all over the world. On 7 May 1945 giving a speech at the General Assembly of the UNO the chief ecclesiastic leader of the Assyrians Mar-Shimoun made unsuccessful attempt to receive a powerful backing from Great Powers for settling the Assyrian matter.

The international decree should not be to eliminate Assyrians from history. They should not be considered as a people who disappeared off the face of the earth at the time of the collapse of their empire. Assyrians hope that countries such as Turkey harbouring such a past will be compelled to evaluate their past with objectivity and humanitarianism so that future evils may be forestalled.

Today it is very important for the Assyrian people to get international recognition of their genocide during WWI.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

#### Ա/ Զեռագիր աղբյուրներ

##### 1. Մատենադարան

1. Կաթողիկոսական դիվան, թղթ. 153, վ. 247, թղթ. 138, վ. 359:
2. Ալեքսանդր Երիցյանի արխիվ, թղթ. 154, վ. 165, 173, 175:

##### II. ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ /ՀՀ ՊԿՊԱ/

3. ֆ. 50, ց. 1, գ. 10, 12, 13, 18, 21, 27, 28, 52, 127, 245, 256:
4. ֆ. 57, ց. 5, գ. 10, 15:
5. ֆ. 121, ց. 2, գ. 96, 153:
6. ֆ. 200, ց. 1, գ. 568, 575:
7. ЦГВИА, колл. Микрофильмов 9 /поступл. 29/, ф. 2000, оп. 1, л. 265.

##### III. Վրաստանի Պատմության կենտրոնական պետական արխիվ /ՎՊԿՊԱ/

8. ֆ. 9, ց. 2, գ. 35:
9. ֆ. 13, ց. 3, գ. 1583:
10. ֆ. 13, ց. 21, գ. 2584:
11. ֆ. 13, ց. 27, գ. 4278, 4552:
12. ֆ. 13, ց. 27, գ. 2, գ. 3361:
13. ֆ. 519, ց. 1, գ. 21:

##### IV/ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտի նյութեր /ՀՀ ԳԱԱ ՀՑԹԻ/

14. ֆ. 32, թղպ. 15, գ. 2:
15. ֆ. 48, թղպ. 1, գ. 1.
16. ֆ. 57, թղպ. 7, գ. 1:

## 2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

2. 1. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934:
2. 2. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, Պոսթըն, 1938:
2. 3. Հայկական հարցը հաշտության կոնֆերանսին առաջ, Ե., 1919:
2. 4. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ. Տաւնապետեանի, հ. Բ, Պէյրութ, 1985:
2. 5. Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов под ред. проф. М. Г. Нерсисяна, Е., 1966.
2. 6. Документы французских архивов о геноциде армян, Под ред. Дж. Киракосяна и С. Симоняна, Е., 1985.
2. 7. Коллюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Т. 3, Ч.1, отд. 2, Т., 1891.
2. 8. Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции /1913-1919/, Материалы Политархива МИД Кайзеровской Германии, Е., 1995.
2. 9. Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией, Е., 1915.
2. 10. Реформы в Армении, Сб. диплом. документов, Петроград, 1915.
2. 11. Bryce J. V., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, Beirut, 1979.
2. 12. Parliamentary Papers: House of Commons Accounts and Papers, 100/44, /Chermside to Goschen, 9 August 1880/.
2. 13. Sarafian A., US Official Documents on the Armenian Genocide, vol. I, Watertown-Massachusetts, 1993.
2. 14. Sarafian A., US Official Documents on the Armenian Genocide, vol. II, Watertown-Massachusetts, 1994.
2. 15. Shedd W. A., The Assyrians /Bulletin of the American Geographical Society/, N 1, 1903.
2. 16. Shimshir B. N., British Documents on Ottoman Armenians, V. I, Ankara, 1982.
2. 17. Shimshir B. N., British Documents on Ottoman Armenians, V. II, Ankara, 1983.
2. 18. Österreich-Armenien 1872-1936, Faksimilesammlung diplomatische Aktenstücke, Mag. Dr. A. Ohandjanian, Band 7 1916-1917, Wien, 1995.
2. 19. Yonan G., Ein vegessener Holocaust, Die Vernichtung der christlichen Assyrein in der Türkei, Göttingen-Wien, 1989.
2. 20. Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, Bethnahrin yurtsever devrimci örgütü Asuri-Suryani halkina yonelik 1915, Soykirim ve katliamlari arastirma komisyonu, Frankfurt, 1998.

## 3. ԱՇԽԱՏԱԽՈՒՅՈՒՄՆԵՐԵՐ

### Ա/ Հայերեն

3. 1. Ա-Դօ. Վանի. Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Երևան. 1912:
3. 2. Ա-Դօ. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին. Երևան. 1917:
3. 3. Ավագեանց Ա., Կոտորածը Սալմաստում. Թիֆլիս, 1915:
3. 4. Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969:
3. 5. Բայրության Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները /1900-1914 թթ./, Երևան, 1974:
3. 6. Բայրության Վ. Ա., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1989:
3. 7. Երամեան Հ., Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա., Աղեքսանդրիա, 1929:
3. 8. Թառոյան Կ. Ջ., Արևմտյան Հայաստանը, Արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական թուրքիայի բռնատիրության դեմ, Երևան, 2001:
3. 9. Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881:
3. 10. Լալայան Ե., Վասպուրական, Ազգագրություն, Ասորիներ, Թիֆլիս, 1913:
3. 11. Լևոն Վարդան, Ժամանակագրություն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրութ, 1975:
3. 12. Լեփսիմու Յ., Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդեր, Կ. Պոլիս, 1919:
3. 13. Ծոցիկեան Ա.Մ., Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947:
3. 14. Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996:
3. 15. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում /1898-1908 թթ./, Երևան, 1999:
3. 16. Համբարյան Ա., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Երևան, 1965:
3. 17. Հովհաննիսյան Ռ.Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965:
3. 18. Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան բուրքը, Պէյրութ, 1968:
3. 19. Դոստէյն Էլ Ֆայեզ, Ջարդերը Հայաստանի մէջ, Գահիրէ, 1960:
3. 20. Ծիզմեճեան Մ.Գ., Խարբերը և իր զավակները, Ֆրեզնոյ, Քալիֆորնիա, 1955:
3. 21. Մ. Ա., Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890:

3. 22. Սեյրոնյան Հովհ., Ոճիրի բուրգեր, Երևան, 2001:
3. 23. Միտքեյան Հ., Հուշեր 1915-ի տարագրություններն. Փարիզ, 1981:
3. 24. Մկունդ Տ., Ամխտայի արձագանքները, Նիւ-Եորք, 1950:
3. 25. Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրե, 1947:
3. 26. Նազլեան Յով., Յուշեր, հ. Ա, Պէյրուք-Լիբանան, 1960:
3. 27. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:
3. 28. Պողոսյան Հ. Մ., Վասպուրականի պատմությունից 1850-1900, Ե., 1988:
3. 29. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Պէյրուք, 1983:
3. 30. Ռուբեն, Հայ-թրքական կնճիռը, Գահիրե, 1924:
3. 31. Սահակ Մեսրոպ, Հայուն Տարեցոյց, Կ.Պոլիս, 1913:
3. 32. Սասունի Կարօ, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1956:
3. 33. Սարոյան Վ., Ընտիր երկեր, 70 հազար ատրիներ, հ. Ա., Երևան, 1986:
3. 34. Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
3. 35. Վարդանեան Ե., Անապատէ անապատ, Վենետիկ, 1923:
3. 36. Տեվկանց Ա., Այցելություն ի Հայաստան 1878 թ., Երևան, 1985:
3. 37. Տեր-Սարգսեանց Ս. /Տեվկանց Ս./, Շահենն ի Սիպիո, Կ.Պոլիս, 1911:
3. 38. Տեր Չոր. Փարիզ, 1955:
3. 39. Բաֆֆի, Երկեր, հ. 4, Երևան, 1956:
3. 40. Բիֆատ Մեվլան-Չաղե, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Բեյրութ, 1938:
3. 41. Փափազյան Վ., Իմ հուշերը, հ.Ա, Պոսթրն, 1950:
3. 42. Օրմանյան Ա., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929:
3. 43. Ֆրանգեան Ե., Ատրպատական /պատկերազարդ ժողովածու/, Թիֆլիս, 1905:

#### Բ/ Ռուսերեն

3. 44. Адамов А., Ирак Арабский /Бассорский вилайет в его прошлом и настоящем/, СПб, 1912.
3. 45. Гарт Л., Полковник Лоуренс, М., 1938.
3. 46. Девис Л. А., Провинция бойни, Е., 2000.
3. 47. Джалиле Д., Из истории общественно-политической жизни курдов в конце 19 начале 20 вв., СПб, 1997.
3. 48. Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001.
3. 49. Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Т., 1881.
3. 50. История XIX века, под ред. Лависа и Рамбо, т. 8, М., 1907.
3. 51. Карцев А., Заметки о курдах, Т., 1896.

3. 52. Лазарев М. С., курдский вопрос (1891-1911), М., 1912.
3. 53. Линч Х., Армения, Путевые очерки и этюды, т. II, Т., 1910.
3. 54. Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб, 1863.
3. 55. Маевский В., Ванский вилайет, Военно-статистическое описание, Т., 1901.
3. 56. Маевский В., Несториане Ванского вилайета, Изв. штаба Кавк. военного округа, N 35, Т., 1913.
3. 57. Малоба Я. Д., Несториане и округ Хеккари, Изв. Кавк. отд. импер. русск. географ. общ., том II, Т., 1873.
3. 58. Матвеев К. П. /Бар-Маттай/, Мар-Юханна И. И., Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968.
3. 59. Отчет о поездке по Азиатской Турции генштаба подполковника Томилова в 1904 г, часть I, СПб., 1904.
3. 60. Саргизов Л. М., Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е., 1979.
3. 61. Селезнев Н.Н., Ассирийская церковь Востока, Москва, 2001.
3. 62. Тарле Е. В., Соч., т. 5, М., 1958.
3. 63. Тарле Е. В., Европа в эпоху империализма. /2-ое изд./, М.-Л., 1929.
3. 64. Тейлор Д., Путешествие по Курдистану, Изв. Кавк. отд. русского геогр. общества, т. II, прилож. I, Т., 1873.
3. 65. Термен Р. И., Отчет о поездке в санджак Хакьяри Ванского вилайета в 1906г., Т., 1910.
3. 66. Термен Р.И., Отчет о полевой поездке 1907г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Т., 1909.
3. 67. Убичини А., Современное состояние Оттоманской империи, СПб., 1877.
3. 68. Шелковников Б., Происхождение и современный быт сиро-халдейской народности, Изв. штаба Кавк. военного округа, N 3-4, Т., 1904.
3. 69. Этнографические очерки, Народы мира, т. Народы Передней Азии, Айсоры, М., 1957.

#### Գ/ Օտար լեզուներով

3. 70. Bryce J., Transcaucasia and Ararat, fourth revised edition, London, 1896.
3. 71. Coakley J.F., The Church of the East and the Church of England, Oxford, 1992.
3. 72. Gilliana Sh. Z., Assyrians in the Wilderness, Chicago, 2000.
3. 73. Fisher H. A., James Bryce, vol. II, New York, Macmillan, 1927.
3. 74. Halo T., Not Even my Name, New-York, 2000.

3. 75. Hubbard G.E., From the Gulf to Ararat, An Expedition through Mesopotamia and Kurdistan, London, 1916.
3. 76. Johannan A., The Death of Nation, New-York - London, 1916.
3. 77. Kloian R. D., The Armenian Genocide, News Accounts from the American Press /1915-1922/, California, 1985.
3. 78. Krikorian M.K., Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, 1977.
3. 79. Layard A., Nineveh and its Remains, vol I, London, 1849.
3. 80. Maclean A.J., Browne W.N., The Catholicos of the East and his people, London, 1892.
3. 81. Malek Yusuf, The British Betrayal of the Assyrian, Chicago, 1935.
3. 82. Naaman Qarabashi M.A.-M., The Shed Blood, Sweden, 1997.
3. 83. Naayem J., Shall this Nation Die, New-York, 1921.
3. 84. Nessibian A., Britania and the Armenian Question 1915-1923, London, 1984.
3. 85. Riley A., The Archbishop of Canterbury's Mission to the Assyrian Christians, London, 1891.
3. 86. Schwarten H., My story: Persia to Iran, Chicago, 1998.
3. 87. Shoumanov V., Assyrians in Chicago, Great Britain, 2001.
3. 88. Stafford R. S., The Tragedy of the Assyrians, London, 1935.
3. 89. Warda J., The Flickering Light of Asia, New York, 1916.
3. 90. Allichoran J., Du génocide à la diaspora: les Assyro-chaldéens au XX siècle, Paris, 1994.
3. 91. Cuinet V., La Turquie d'Asie, T. II, Paris, 1892.
3. 92. L'Extermination des déportés Arméniens Ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie /1915-1916/, La deuxième phase du génocide, Paris, T. II, 1998.
3. 93. Yacoub J., La Babylone chrétienne. Géopolitique de l'Eglise de Mésopotamie, Paris, 1996.
3. 94. Heinsohn G., Lexikon der völkermorde, Hamburg, 1998.
3. 95. Lepsius J., Bericht Über die Lage des Armenischer Volkes in Türkei, Potsdam, 1916.
3. 96. Lepsius J., Deutschland und Armenian 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet, Potsdam, 1919.

#### 4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

##### Ա/ Հայերեն

4. 1. «Արձագանք», Թիֆլիս, N 24, 25 հունիսի 1889:
4. 2. «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, նոյեմբեր 18-30 1899; նոյեմբեր 8-21, 1901:
4. 3. «Դրօշակ», Ժնև, N 14, 1 հունիսի 1896:
4. 4. «Լումա», Թիֆլիս, N 1, 1904:
4. 5. «Հորիզոն», Թիֆլիս, 20 դեկտեմբերի 1915:
4. 6. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, N 72, 1880:
4. 7. «Մշակ», Թիֆլիս, N 41, 25 փետրվարի 1915; N 55, 14 մարտի 1915; N 59, 19 մարտի 1915; N 62, 27 մարտի 1915; N 121, 6 հունիսի 1915; N 163, 28 հուլիսի 1915:
4. 8. «Մուրճ», Թիֆլիս, N 3, 1904; N 1-2, 1906;
4. 9. «Նոր դար», Թիֆլիս, N 71, 7 մայիսի 1885:
4. 10. «Վան-Տոսպ», Թիֆլիս, N 28, 5 հունիսի 1916; N 35, 24 հուլիսի 1916:

##### Բ/ Ռուսերեն

4. 11. Богословский вестник, 1898 май.
4. 12. Кавказское слово, 17 апреля 1915 .
4. 13. Церковные ведомости, N 13, 1898.

#### 5. ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ


5. 1. Բաղալյան Գ., Վանի նահանգը 1840-ական - 1914թթ. /վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն/, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Ե., 1986:
5. 2. Հովհաննիսյան Ն., Հայերի 1915թ. ցեղասպանության լուսաբանումը արարական պատմագիտության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», N 1, Ե., 1989:
5. 3. Березин И. Н., Езиды, "Магазин землевладения и путешествий", N 3, М., 1954.
5. 4. Думбис М., Айсоры, «Новый Восток», N 3, М., 1923 .
- 5.5. Саргизов Л. М., Дружба идущая из глубины веков /Ассирийцы в Армении/, "Атра", N 4, СПб., 1992.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Ք Յ ՈՒ Ն

|   |     |
|---|-----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....   | 3   |
| ԳԼՈՒԽ ԱՈՒԱԶԻՆ - ԱՍՈՐԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....   | 11  |
| ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ԱՍՈՐԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՅՈՒՐԹԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ: ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ |     |
| Ա/ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....  | 40  |
| Բ/ ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ .....   | 48  |
| ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ<br>ԱՍՈՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՈՒԱԶԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ   |     |
| Ա/ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ.....  | 54  |
| Բ/ ԱՍՈՐԻՆԵՐԻ ԶԱՐԴԵՐՆ ԻՐԱՆԻ ԹՅՈՒՐԹԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ.....   | 73  |
| ՎԵՐՁԱԲԱՆ.....   | 89  |
| РЕЗЮМЕ.....   | 99  |
| SUMMARY.....  | 103 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....  | 107 |



ԱՆԱԳԻՏ ԽՈՍՐՈՒՎԱ



Ծնվել է 1975թ. մարտի 18-ին Վասաժոր քաղաքում: 1992թ. ոսկե մեդալով ավարտել է Վանաձորի թիվ 14 ռուսական միջնակարգ դպրոցը: 1994-1998 թթ. սովորել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում և ավարտել այն գերազանցության դիպլոմով: 1998-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի

ասպիրանտ: 2003 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Ասորիների կոտորածներն Օսմանյան Թուրքիայում և Իրանի թյուրքաբնակ վայրերում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: 2003 թ. հոկտեմբերից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում: Բազմաթիվ հայալեզու և օտարալեզու հոդվածների հեղինակ է: Զեկուցումներով հանդես է եկել ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային մի շարք գիտաժողովներում:

«Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի առաջին քառորդ)» աշխատությունը հեղինակի առաջին մենագրությունն է: